



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2355

84

17-56

Зурбунт

1877

2011

Վ Ե Պ

1877 35

ՎՈՍՓՈՐԻ
ԱՆԳՂՆԵՐԸ

ԲԱՐԳՄԱՆԵԱՅ Ի ԳԱՂ ԼԵՋՈՒԷ
ՔՈՒՅՑԵԼ Ե. ՉԱՐԲԱՐԱՆՆԻ

յԱշակերտաց սուրբ Ղեւոնդեանց
Գիշերօթեայ վարժարանի սուրբ վանացս


ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Ի ՎԱՆՍ Զ. Ս. ԱՍՏՈՒԱԾԱՆԻ ՅԱՐՄԱՆ
1877

Հայաստանի Հանրապետություն
Հանրային Գրադարան

84
Ո-56

Հ. ՈՍՓՈՐԻ ②

Ա Ն Ք Ղ Ն Ե Ր Ը



ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ԳՍՂ. ԼԵՁՈՒԷ
ԱՌԱՔԵԼ Ա. ՀԱՐԱԳՐԱՆԵԱՆ
Յ Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ա Ց
Ս. ՂԵՒՈՆԳԵԱՆՑ ԳԻՇ. ՎԱՐՁԱՐԱՆԻՍ



2003

Յ Ա Ր Մ Ա Շ
Ի ՎԱՆՍ ՉՍՐԻՍՓԱՆ Ս. ԱՍՏՈՒԱՅԱԾՆԻ
1877

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ 714

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԿՈՄՍՏԱՆՍՊՈԼԻՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԿՈՄՍՏԱՆՍՊՈԼԻՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



924
39 9

Հ Ա Ս Փ Ո Ր Ի
Ա Ն Գ Ղ Ն Ե Ր Ը

Ի ՎԱՆԱԿԱՅԻՆՆԵՐՈՒԹՅԱՆ
S. S. ԽՈՌԷՆ
ՍՐԱՋԱՆ ԱՐԲԵՌԻՍԿՈՂՈՍԻ

Վ Ո Ս Փ Ո Ր Ի

Ա Ն Գ Ղ Ն Ե Ր Ը



Գ Լ Ո Ւ Խ Ա.

ՈՐՍ ԲԱԶԵԻՑ

Տրապիզոնի ընդարձակ և հիւրամեծար պալատին մէջ այսչափ նշանաւոր հրաւիրելոց բազմութիւն տեսնուած չէր, և ոչ ալ այնչափ ցնծալից աղմուկ լսուած էր այն սրահներուն մէջ՝ ուր վառվառուն խօսակցութիւններով կ'զրօսնուին հրաւիրեալք. պարտէզներուն մէջ նուագածուաց նուագարաններու հնչիւնները, հրապարակներուն մէջ սիգաքայլ երիվարաց վրնջիւնները, շանց հաջումներն և որսորդաց փողերուն նուաղեալ ձայներն իրար խառնուած՝ ներդաշնակաւոր աղաղակներ կը ձևացունէին: Իւրաքանչիւր վայրկեան, հրաւիրելոց նոր նոր խումբեր կուգային՝ իրենց մունեակներով, ծառայներով և մանկլաւիկներով, որոնք պալատին պաշտօնեայները կը զարմացնէին, որովհետև կա՛մ թագաւորի և կա՛մ մեծ իշխանի գալուստը կ'աւետէին:

Ճանապարհորդք անմիջապէս իրենց յատկացեալ բնա-
կարանը կը տարուէին, ուր սակաւիկ մի հանդստանալէ
և փայլուն ու երկնազարդ զգեստներ հագնելէ վերջը՝
ընդունելութեան սրահը կը մտնէին, որոյ դրան առջև
Դաւիթ կայսրն իւր հիւրերը վայելուչ քաղաքավարու-
թեամբ կ'ընդունէր:

Յաջորդ օրը Դաւիթ Կոմնենոս կը պատրաստուէր
ներկայացունել հրաւիրելոց բազէից որսին խիստ զուար-
ճալի տեսարանը՝ Ողիմպեան անտառաց մէջ:

Այս որսին պատրաստութիւններէն և հրաւիրելոց
արտորանքէն կը գուշակուէր՝ թէ այն ատեն որսորդու-
թենէ զատ ուրիշ և ոչ մէկ զբօսանք այնչափ ուժղին
հրապոյր չէր ներշնչեր:

Խնջոյից ժամը մօտեցած էր, յանկարծ թիւրքմէն
հեծելոց գունդ մը ձիերու, ուղտերու վրայ նստած, ե-
րևցաւ և ընդունելութեան հրապարակին մէջ կանգ ա-
ռաւ: Երիտասարդ մ'արագութեամբ ձիէն վար նետու-
եցաւ, մանկլաւիկներէն մին երասանակը բռնեց. օ-
տարականներն ընդունող պաշտօնակալին կողմը դառ-
նալով՝ խմացուց անոր՝ թէ իւր անունը Էլլէրիֆ է:

Պաշտօնակալը խոնարհութեամբ առաջարկեց երի-
տասարդին հրաւիրելոց յատկացեալ բնակարանն երթար
որպէս զի ճանապարհորդութեան միջոցին զգեստուց
վրայ նստած փոշին մաքրէ:

— Ո՛չ, պատասխանեց Էլլէրիֆ, փոշին բնաւ պա-
տերազմողին անպատուութիւն չը բերէր. մտքդբայրս
այս փոշին տեսնելով՝ պիտի համոզուի՝ թէ ես աճապա-
րանօք հօս եկած եմ:

Հեծեալը՝ որ ասիական քաղաքակրթութեան նրբու-
թիւններն արհամարհող, կամ մանաւանդ չը գիտցող
կ'երևէր, խիստ պարզ հագուած էր: Մաշկեղէն բար-
ձր գլխարկ դրած էր, գօտուոյն մէջ կեցած զէնքերն
աւելի օգտակար քան փայլուն էին: Բայց իւր վարմանց
ձևէն և հայեցումով հպարտութենէն կը ճանչցուէր՝

թէ երևելի ազգատոհմէ էր, շրթունքը բարեձև և աչ-
քերը հրացայտ էին: Այս պարզ և կէս վայրենի մար-
դը զօրաւոր կ'երևէր:

Էլլէրիֆ ՚ի սկզբան պաշտօնակալին ետևէն գնաց.
բայց հազիւ թէ գաւիթը հասաւ, յանկարծ սրահը նե-
տուեցաւ. հրաւիրելոց մէջէն ճամբայ բանալով՝ արա-
դութեամբ կայսեր կողմը վազեց:

Երիտասարդին կոշտութեամբ ներս մտնելն և ընդ-
հանուր շքեղութենէ տարբերող իւր անզարդ զգեստը
կերպ մ'ապշութիւն պատճառեցին հրաւիրելոց. զար-
մանօք և հետաքրքրութեամբ վրան կը նայէին իրարու
հարցունելով՝ թէ արդեօք Դաւիթ զինքն ինչ կերպով
պիտի ընդունի. և ա՛լ աւելի զարմացան երբ տեսան
որ կայսրն երիտասարդը սիրով և դորովանօք իւր բազ-
կաց մէջ ընկալաւ:

Յետոյ իւր ազնուական հրաւիրելոց կողմը դառնա-
լով՝ երիտասարդն անոնց ներկայացոյց:

— Ուզուն — Հասան իշխանի որդին և ամենասի-
բելի քրոջս Սարայի թոռն է, ըսաւ:

Կայսեր այս խօսքերուն վրայ՝ բոլոր հրաւիրեալք
Էլլէրիֆի քով դարով՝ սկսան պատուել և մեծարել
զանիկա, ՚ի սկզբան վայրենի և անկիրթ համարուողը՝
ամենուն սիրոյն առարկայն եղաւ:

Էլլէրիֆ, կայտառ երիտասարդն Բիւզանդիոնի և
Տրապիզոնի արքունեաց մէջ գործածուած ճարտարա-
խօսութենէն զուրկ էր. Կոմնենոսեանց պալատին մէջ
երևցած շուայութիւններուն վրայ չափէն աւելի կը
զարմանար, անկարևոր բաներն ատող, ստոյլիկեան և
խիստ պատերազմասէր էր:

— Շնորհակալ եմ ձեր համակրական և սիրալիւր ըն-
դունելութեան, ըսաւ, Աբօսթօլի անուն պատուաւոր
պալատական յոյն երիտասարդին, սակայն խորթակով
և սովորութեամբ ձեզնէ կը տարբերիմ: Այս պալատին
մէջ ինձ ամէն բան տարօրինակ կ'երևի: Թիւրքմէնաց

վրանին տակ պարզ կենաց սովորած ըլլալով՝ ձեր շքեղութեանց վրայ կը զարմանամ՝ առանց զանոնք վայելել ցանկալու : Մինչև ցայսօր մեր Պէյերուն պէս ազատ կեանք վարած եմ, հայրենեացս վայրենի ազատութիւնը սիրելով և օրերս պատերազմական հրահանգաց մէջ անցունելով և ամենէն մեծ հաճոյքներս կատարի ձիեր զսպելու մէջ գտնելով : Թիւրքմէն երիտասարդաց և ոչ թէ վեհապետի տղայի պէս հագուած եմ : Սակայն ձեր անկեղծ սիրոյն փոխարէն, կրնամ ձեզի օգնել . զէնք գործածելու յաջողակ եմ :

— Ուզուն — Հասան իշխանը չկրցաւ ձեզի հետ գալ :

— Ծանրակշիռ գէպքեր արգելք եղան իւր գալըստեան, թերևս իմ գալս իրեն օգտակար ըլլայ, սակայն օր այս որսորդութեան ներկայ գանուիմ, և իմանամ թէ ինչ տարբերութիւն կայ մեր և այն իշխաններուն թաղաւորութեանց մէջ՝ զոր Եւրոպա իւր դեմութեամբ լուսաւորեց և քաղաքակրթեց :

— Լա՛ւ, ի՞նչ ազդեցութիւն ըրաւ ձեր վրայ Տրապիզոնի տեսքը :

— Շուտրած մնացի, միահարթ պատշգամներու վրայ բարձրացած փառաւոր շէնքերը, աշտարակներուն և զանգակատուններուն սրածայր գագաթները, լայնանիստ և ոսկեճաճանչ գմբեթները, այն պարտէզները՝ որոց մէջ գտնուած բարձրաբերձ նսճեաց և կաղամախեաց խրոխտ գագաթները մինչև յամպս կը բարձրանան, գեղեցկաչէն դռները, ամրակառոյց պարիսպները, անամպ երկնքի մը պայծառութիւնն, այս ամենը, կ'ըսեմ, խոր տպաւորութիւն ըրին վրաս : Այս վայրկեանին արուեստից հրաշալիքները հազար ու մէկ ձևերու տակ կ'երևէին ինձ . միւսխոններուն հարստութիւնները, մարմարիոններուն ողորկ շքեղութիւնն և անադախառն պղզիմաններու գեղեցկութիւններն ինձ մտածել կ'ուտան թէ նիւթոյ մէջ մի մեծ զօրութիւն կայ : Սակայն տղէկ

չեմ հասկնար զգետտուց և մետաքսեայ ոսկեհուռն հիւսկեններու փառաւորութիւնը, մանեակներու, ճարմանդներու, գարգմանակներու և նոյն իսկ ձեր զինուց շքեղութիւնը : Ըստ իս, մարդիկ կանացաբար զարդարուելով կանացի կ'ըլլան :

— Թերևս իրաւունք ունիս, պատասխանեց Աբօսթօլի գպտելով, բայց ինչպէս որ ձեր թափառական վրաններուն տակ պարզութիւնը վայելու է, նոյնպէս ալ ձեր պարսաւած շքեղութիւնը հոս հարկաւոր է : Կայսրութեան մ'անհող հպատակներն երբէք խստաբարոյ տէր չեն սիրեր . կուզեն որ իրենց տէրը յոտից ցլուխ ոսկեղէն դարդերով և բոցաճաճանչ մարգարիտներով ծածկուած ըլլայ, ճիշդ այնպէս, ինչպէս կ'երազեմք զԱստուած իւր փառաց մեծութեան մէջ :

— Մեք, թիւրքմէն ազատ իշխաններս, անձնական քաջութիւնն և մեր հպատակաց վրայ ունեցած հայրական խնամքնիս կը համարիմք մեր մեծութիւնը, Թիւրքմէն երիտասարդութիւնը զիս կը դովէ, վասն զի գիտէ՝ թէ ալնիւ, քաջ և ուժեղ եմ, իսկ մետաքսեայ մարդարտազարդ հանդերձ հազնող գլխաւորը կը մերժէ :

Այս միջոցին երկու երիտասարդաց խօսակցութիւնն ընդմիջեցաւ՝ խնջոյից ժամը զարնուելով :

Էշէրիֆ կերակրոյ ատեն Աբօսթօլիէն հեռի դըտնուեցաւ, բայց շատ չը ցաւեցաւ նորա հետ ըրած խօսակցութեան թելը խղելուն վրայ, որովհետև Ակաթօսի քով նստած ըլլալով, որ յունական կղզոյ մ'իշխանն էր, և որուն Դաւիթ մեծ յարգանք և պատիւ կուտար, անոր հետ ալ կրցաւ օգտակար նիւթերու վրայ խօսիլ :

Էշէրիֆ զարմեցաւ կերակրոց և գինեաց առատութեան վրայ, առանց անոնցմէ հրապուրուելու . այս անհնարին նրբութիւնները ստրկութիւն կը համարէր :

Կտոր մը որսի միս և անոյշ գինուց բաժակ մը միայն բաւական սեպեց իրեն, միւս սկաւառակներն առջևէն վերցունել տուաւ առանց անոնց դաշելու :

Սակայն մեծ փոխարինութիւն մը վերապահեալ էր իրեն : Երբ կոչնականք սեղանէն ելան , սրահի մը դրուները բացուեցան , և կայսեր հիւրերն այս սրահին ծայրը Հեղինէ կանդակուղենոս կայսրուհին տեսան գահուն վրայ բաղմած և իւր որդւոցմէ շրջապատուած :

Դաւիթ իւր քեռորդւոյն ձեռքէն բռնելով՝ կայսրուհւոյն քով գնաց և ըսաւ անոր .

— Այս երիտասարդը մեր արիւնէն է , սիրեցէք զինքը ինչպէս որ կը վայէ :

Երիտասարդն իւր մօռաքեռ ձեռքը համբուրեց , յետոյ աչքերը վերցունելով կայսրուհւոյն վրայ նայեցաւ լի սիրոյ զգացմամբ :

Հեղինէ կանդակուղենոս տակաւին չնաշխարհիկ և զմայլելի գեղեցկութիւնով կը փայլէր . սակայն արտաքին տեսքերու՝ որոյմով օժտեալ էր , յարգ և կարեւորութիւն չէր ընծայեր : Իւր ամենամեծ զարդերն որդիքն էին . եօթն արու և մէկ ալ աղջիկ զաւակ ունէր, որ Աննա իշխանուհի կը կոչուէր ,

Հեղինէ՝ իւր չքնաղ գեղեցկութեամբ և վայելչաձև մարմնով աւելի հռոմայեցի խիստ տիկնոջ մը կը նմանէր քան թէ պերճասէր Դաւիթի ամուսնոյն : Քրիստոնէութեամբ զարդարեալ կուռնելիէ մ'էր* . ժրագըլուխ կլին մը՝ այս բառին վսեմ և աստուածաշունչ զըրոց խմաստովը :

* Կուռնելիէ Սկիպիոն Պոպզիոս Ափրիկեցի կրտսերոյն աղջիկն և Գրակքոսեանց մայրն էր : Տասն և երկու որդւով որք մնալով ինքզինք անոնց դաստիարակութեան նուիրեց : Այս բաղմածիւ ընտանիքէն միայն մէկ աղջիկ , որ Եմելիանոս Սկիպիոնի հետ ամուսնացաւ , և Թիպերիոս և Քոիոս Գրակքոս անուն երկու մանչ տղայ մնացին , երկուքն ալ խելքով , քաջութեամբ և իրենց ողբերգական մահով հռչակաւոր : Կուռնելիէ այրական բնութիւն և մշակեալ միտք

Էշէրիֆ կայսրուհին տեսած ատեն՝ առաջին անգամ իմացաւ մէկ կնոջ ծնած ընտանեաց սրբութիւնը , և այն կնոջ՝ ամուսնոյ մը սիրոյն առարկայ ըլլալը : Հեղինէին դէմքն երկայն ատեն դիտելէն վերջը՝ Աննա իշխանուհւոյն վրայ նայել սկսաւ :

Իշխանուհին իւր մօրը չէր նմաներ , միայն անոր պէս գեղեցկ էր առանց վեհանձն ըլլալու , քիչ մ'ալ ծաղրածու կը թուէր : Իւր պաճուճանքը Հեղինէի ըզգեստուց պարզութենէն բոլորովին հեռի էր . Աննա ոսկեճամուկ դիպակներ հագած , վրան նայողին աչքը կը շրջուէր , և խարտեալ մաղբը ճաճանչաւոր մարգարիտներու շարքով զարդարուած էին . Թիւրքմէն երիտասարդն իւր մօրաքեռ աղջիկը դիտած ատեն՝ զարմացաւ անոր գեղեցկութեան վրայ : Չը կրցաւ գուշակել թէ Աննա ժպտելով իւր բրդէ և կաշիէ հագուստը կը ծաղրէր , չիմացաւ՝ որ իշխանուհին զինքը միւս շքեղազարդ իշխանաց հետ կը բաղդատէր ծաղրելու նըպատակաւ :

Ուղուն — Հասանի որդին օրիորդին գեղեցկութեան վրայ շատ զարմանալով՝ ինքնիրեն հարցուց թէ արդեօք Աննա կանդակուղենոսի ամուսինն ո՞ր երջանիկ մարդը պիտի ըլլայ :

— Ես պիտի ըլլամ , աւելցուց սրտին խորէն .

Այս պարզ և միամիտ երիտասարդին զգացումներն իսկոյն զօրացան , իւր մօրաքեռ աղջկան վրայ զգացած

ունէր . մնացած զաւակները մեծ խնամքով կրթեց և կանուխէն հասարակաց բարւոյն և փառաց ու մեծամեծ ձեռնարկութեանց սէրը ներշնչեց իրենց : Կը պատմուի՝ թէ որ մը կլին մը Կուռնելիէի առջեւ իւր ականակալ զարդերը հանելով՝ իրեն ցցուցեր է . պահանջեր է՝ որ ինքն ալ իրեննորը ցուցնէ : Կուռնելիէ իւր զաւակները ներկայացնելով ըսեր է . « Ահա ասիկ է՝ ոչնչացող զարդերս » : Ե. Թ.

յանկարծական սէրը սաստիկ աղդեց իրեն, և իւր հոգին ու ապագայն իշխանուհւոյն ձեռքին տուած համբուրին մէջ դրաւ:

Իշխանուհին բան մ'ալ մտքէն չէր անցուներ, և երեկոյեան ակումբին մէջ այս երկչոտ և դուռող երիտասարդին վրան անգամ չը նայեցաւ, անոր կարեւորութիւն չը տալով:

Իշխանուհին թեթեաբարոյ և սնափառ ըլլալով՝ Հեղինէ կայսրուհւոյն կանացի առաքինութիւնները կը պարսաւէր:

Հետեւեալ առաւօտուն՝ պալատին մեծ հրապարակը կը թնդար որսի պատրաստութեան աղաղակներէն, արքունի թամբեալ ձիերէն, կապուած բարակներէն, գլուխնին ծածկուած բազէներէն և ծառայներու անթիւ բաղմութենէն:

Հրաւիրեալք՝ սանդղոց վրայ, բակերուն և գետնայարկերուն մէջ կը ձեպէին իրենց մանկաւիճակներուն և զինակիրներուն զանազան հրամաններ տալով:

Էշէրիֆ առանց ասպատանի թամբին վրայ նետուելով եկաւ վայելութեամբ մեծ սանդղոյն դիմաց կեցաւ, որուն ամենէն վարի աստիճանին վրայ կը դանուէր Հեղինէ:

Կայսրուհին կանխատեսութեամբ և մեծ խնամօք իւր որդւոց սպառազինութեան հսկեց, որոց չորս երէցները դեռ առաջին անգամ որսի պիտի ելնէին. երիվարաց կատաղութենէն զարհուրելով, դանդանաւանդներն ու սանձերը կը քննէր. կը զարհուրէր մտածելով որ իւր տղայքները վտանգի պիտի ենթարկուին. և սակայն գողտրիկ հպարտութիւն մը կ'ըզար ներքսպէս, որովհետեւ անոնք առաջին անգամ ազնուական հրաւիրելոց ընկերութեան մէջ զէնք պիտի գործածէին:

Կայսրուհին զանոնք ուրախ զուարթ ձիոց վրայ տեսնելով, մնատեց մէկը՝ որուն յանձնէ երիտասարդ իշխանաց խնամակալութիւնը. զէշէրիֆ տեսաւ, անոր մտ-

տենալով ըսաւ.

— Որդւոցս վրայ հսկէ՛, զանոնք քեզի կը յանձնեմ: Հազիւ թէ այս բառերն արտասանեց, և ահա՛ բոլոր փողերն 'ի միասին հնչեցին, և որսի ծառայները, բաղմաթիւ ահագին բանակի պէս, սկսան հրապարակին առջևէն կարգաւ քայլել:

Նախ երկու հազար ձիաւոր բաղէկալք երեցան. յետոյ հնդետասան խումբի բաժնուած երեք հազար բարակապանք. ասոնց ետևէն անտառապահներն և ուրիշ որսորդաց անհամար բաղմութիւն:

Լուիկ մնչիկ կանոնաւոր քայլով կը քայլէին. միայն այս բաղմութեան տեսքը՝ որուն դիւթական տեսարանը ոչ ոք կրնայ նկարագրել, անպատումցնձութիւն կ'աղդէր: Էշէրիֆի որսորդութեան բնազդումները կամաց կամաց կ'արթննային. ո՛րչափ սեղանոյ և հանդերձի շրուայլութիւնը կը պախարակէր, այնչափ ալ այս կայսերական որսոց համար եղած մեծամեծ պատրաստութիւնները կը գովէր:

Յանկարծ պօռալու ձայներ լսուեցան. բարակներն և բարակապաններն երեցան բաղէկալքներէն վերջը:

Ծառայները՝ գօտիով սեղմեալ յաղչող զգետոններ հագած՝ քայլելու և վազելու համար զոյգ զոյգ շարուած էին:

Իսկ շուները ծիրանեղոյն կերպասներով ծածկուած, և վզերնուն վրայ աղնիւ քարերէ մանեակներ կախուած էին:

Էշէրիֆ հեծած ձին մտրակեց, և ահա՛ անմիջապէս բաղմաթիւ որսորդք, բաղէկալք և բարակապանք սկսան վաղել:

Վայրկեան մը զիրար գտնել և ճանչնալ անկարելի եղաւ. որսորդները փոթորկէ բռնուեցան. երբ Տրապիզոնէն դուրս ելնելով դաշտին մէջ մտան՝ միայն սյնատեն Էշէրիֆ իւր մօրաքրոջ որդիքները տեսաւ, որք կայսեր քովէն ձիերնին կը վաղցունէին. անոնց վրայ ա-

պահով ըլլալէն վերջը՝ զԱբսթոյի փնտուեց, և անմիջապէս իւր մտքը տեսնելով զանիկա՝ ըսաւ անոր .

— Ո՛րչափ դեղեցիկ է :

Այո՛, շատ դեղեցիկ է, պատասխանեց Աբսթոյի . սակայն ծերոց ըսածին նայելով, այս որսը Պայէղիտ Աին եւրոպացի գերեաց առջև կարգած մեծահասակէս որսէն շատ տարբեր է : Դեռ հովտէն չանցած, կրնամ ձեզի պատմել թէ ի՞նչ դէպքեր Ասիա բերին այն նշանաւոր մարտիկները՝ որոց յիշատակն եւրոպա իւր փառաց յիշատակարաններուն մէջ անջինջ կը պահէ :

— Մտիկ կ'ընեմ, մտիկ ընելը սովորի է :

— Գիտէք որ խոր և անբժշկելի ատելութիւն մը միշտ հպարտ Սուլթանները Յոյներէն և Լատիններէն զատած է : Հունգարիա, Բօրժնիա, Վենէտիկ, Ճենովրա և Թիւրք մէնիստան, որոյ վրայ կը թագաւորէք, իրենց անձնական աղատութեան սիրով վառեալ՝ միշտ ոտք ելան Մէհմէտի որդւոց դէմ պատերազմելու համար : Այս թուականին, Սիդիսմունդ, Մաճառաց թագաւորը Գաղղիոյ եւ Ալպանիոյ հետ դաշնակցած էր . ուրիշ ազգեր՝ որք խոստացած էին իրեն օգնել՝ խոստումնին չ'պահեցին : Կարողոս Զ. զուարթ եղած օր մը Հունգարիա գլտնուող իւր եղբօրն անհամար զօրաց բանակ մը ղրկեց՝ իօ և Նեւերս կոմսերուն և Աներկիւզն Յովհաննէսի, Պուրկօնեի դքսին որդւոյն հրամանատարութեան ներքեւ : Մինչև Նիկոպօլսոյ պարիսպներուն տակ տարածուած հովտին մէջ՝ Գաղղիացիք և Ալպանիացիք մեծամեծ քաջութիւններ ըրին, սակայն դարձեալ երկու կողմն ալ իրարու հետ զարնուեցան . եւրոպացիք նորէն յաղթող հանդիսացան, որովհետև պատերազմի դաշտին մէջ ինկած օսմանեան դիակներուն թիւն անհամար էր : Գերի բռնուած օսմանեան զօրքերն ալ խրժարար սրէ անցուցին : Բայց վերջապէս Գաղղիացիք չը կրցան օսմանեանց մէկ ուրիշ ահեղ բանակին դէմ դնել . ուստի ահաբեկ խուճապմամբ ՚ի փախուստ դարձան :

օսմանեանք անոնց ետեւէն պնդելով՝ ձեռք ձգածնին կոտորեցին : Նեւերս դուքսն ալ իւր քսան և չորս նիզակակից սպայներով ձերբակալ եղաւ : Միայն Մաճառաց թագաւորն իւր երկոտասան հազար զօրքով քիչ մ'ատեն եէնիչերիները խորտակեց . յետոյ սա ալ փախչելու ստիպուեցաւ :

Այս զարհուրելի պատերազմէն վերջը՝ երբ Պայէղիտ յաղթական արքայն տեսաւ ճակատուն տեղն իւր վաթսուն հազարի չափ զօրաց գունդագունդ դիակները՝ ցամախառն արտասուօք երդուընցաւ քրիստոնեայներէն վրէժխնդիր ըլլալ անոնց արեան . հրամայեց որ եւրոպացի գերեւոց բոլոր բազմութիւնն առջևը բերեն : Աչքին առաջ տասը հազար գերի անխնայ կոտորել տուաւ : Միայն Նեւերս դքսին և իւր քսան և չորս սպայներուն կեանքը շնորհեց, և հրամայեց որ զանոնք Կէլիպօլու արգիլեն : Սիդիսմունդ ամբողջ եւրոպա չըրջեցաւ սպայներն և գերիները փրկանաւորելու ստակ հաւաքելու համար : Եւ նախ ինք Սիդիսմունդ եօթն հազար ոսկի ղրկեց Պայէղիտին : Եիպրոսի թագաւորն ալ բաւական մեծկակ գումար մը տուաւ . Կարողոս Զ. վեց ձիարեւն աղնիւ կերպաս ղրկեց . Լուսինեանն ալ տասը հազար տուգատ շնորհեց անդին քանդակեալ անօթով մը : Բայց մինչև որ այսպէս երկու հարիւր հազար ոսկւոյ գումարը ճարեցին, շատ գերիներ մեռան : Բուսի թագաւորը՝ ծերութենէն մեռաւ . Վիէննայի ծովապետն ալ պատերազմին մէջ ընդունած վէրքերէն . Պուսիքօթ և Լոս թրէմօիլ ալ Վիէննա տարուեցան : Իսկ Նեւերս դուքսն իւր գերեկցօք հանդերձ Պրուսա տարուեցաւ . վերջը երկու հարիւր հազար ոսկւով ազատուեցաւ : Պայէղիտ՝ Նեւերս դուքսն այլ ևս օսմանեանց դէմ ղէնք չառնելու ըրած ուխտէն ազատեց, մանաւանդ թէ դքսին վրայ մեծ պարտաւորութիւն դրաւ և երդմնեցոյց զանիկա՝ որ բոլոր քրիստոնեայներն իրեն դէմ հանէ, որպէս զի Պայէղիտին փառքն ալ ա

ւելի շատնայ :

Նեւերս դեռ Պրուսայէն չը մեկնած , Սուլթանն աւելի ամբարտաւան քան վայելուչ քաղաքավարութեամբ ուղեց իւր գերիներուն շուջ բազէից մեծահանդէս որս մը կարգել , որոյ վրայ այս մեր որսը տկար գաղափար մը միայն կրնայ տալ : Կրկնապատկեցէ՛ք մանկաւիկներուն , պահապաններուն և ծառայից թիւը . երեւկայեցէ՛ք անտառին մէջ երկու հազար ձի և վեց հազար բարակ՝ բարակապաններուն մեծ բաղմութիւնովը . Դաւիթ կայսեր չափաւոր շքեղութեան տեղ ենթադրեցէ՛ք Սուլթաններուն մեծասպաս փառաւորութիւնը , երեւկայեցէ՛ք օսկեղէն հանդերձներու , պատուական քարերով զարդարեալ գարգմանակներու , մարդարտեսոյ մանեակներու , զուտ աղամանդներով պահուածեալ ծածկոցներով թամբեալ ձիերուն շլացուցիչ տեսարանը , արարական երիվարաց , անդղներու և բազէներու ջրնորական խառնուրդ մը . տեսարան մը՝ որոյ նմանը թերևս ո՛չ Բիւղանդիոն և ո՛չ Տրապիզոն պիտի չ՛կարենան տալ :

— Շատ աղէկ , ըսաւ Էշշէրիֆ խոր ձայնով , որսորդութիւն մը զիտեմ՝ որ աւելի նպաստաւոր և աւելի զուարճալի պիտի ըլլայ :

— Ո՞րն է հարցուց կայսրն իւր քեռորդւոյն մօտենալով :

— Վազրին դէմ որսորդութիւնը , պատասխանեց Էշշէրիֆ , ըսել կուզեմ Մէհէմմէտ Բ. ի դէմ .

— Կը մտնաս , ըսաւ Դաւիթ դառնութեամբ սըրտի , որ այնպիսի տիրոջ մը վրայ կը խօսիս , որուն , ես կայսրս , հարկատու եմ . Այնպիսի մահմէտականի մը վրայ կը խօսիս , որոյ առջև , ես քրիստոնէսայ ըլլալովս կը խոնարհիմ :

— Ես այս խօսքերն ըսի , որովհետև անոր հետ պատերազմելու եռանդ և փափաք ունիմ . կարելի չէ՞ բոլոր աշխարհ իւր իշխանութեան տակնուաճել սպառ-

նացող հսկային դէմ կռուիլը : Չէ՞ք կրնար թիւրքմէն ազատ հրոսակները ձեր կայսրութեան զօրաց հետ միացունել . և եթէ պէտք է , եէնիչերեաց և օսմանեան զօրաց դէմ ահագին բանակ մը հանել . վայելուչ է որ դուք այս կռիւն ընէք :

— Եւրոպիոյ Յունաց չը կրցածը՝ Ասիոյ Յոյները պիտի ընեն :

— Ես անոնց գլուխն անցնիլ և անդամ մը փորձել կուզեմ :

— Տղայ ես , ըսաւ Դաւիթ շնորհակալութեան ձեւով :

— Քսան տարեկան եմ . կանուխէն զիս հաշտութեամբ նուանած են , որպէս զի ստիպուիմ քաջ և համբաւոյ ու փառաց արժանի ըլլալ : Մօրեղբայրս , միշտ այս տիտղոսն ինձ նպատակ ունենալով պիտի գործեմ կենացս մէջ :

— Նախ և յառաջ որսանք , ըսաւ կայսրը , հիմայ թագաւորութեան գործոց վրայ խօսելու և վիճելու ժամանակ չէ :

Դաւիթ կոմսենոս իւր քեռորդւոյն բարեկամական ցոյց մ՛ ընելով՝ որսորդաց բաղմութեան մէջ անյայտ եղաւ :

Ուզուն — Հասանի տղայն վայրկեան մը լուռ կեցաւ ձիուն երասանակը ձեռքէն ձգելով . բոլորախըն անգամ չէր նայեր :

Յետոյ գլուխը վերցունելով Աբսթօլին ըսաւ .
— Մօրեղբայրս քաջ է , բայց իւր բնութեան մէջ ունի՞ այն յանդգնութիւնը , կամ թէ ըսեմ քաջասրտութիւնը , որով ես այսօր թագաւորաց ահարկու եղող Մէհէմմէտ Բ. ի գէմ պատերազմ բանալու կը գրգռիմ :

— Պալատականի մը կարծիքն իմանալ կուզէ՛ք՝ այդ հարցումն ինձ ընելով :

— Ո՛չ , բարեկամս մը կարծիքն իմանալ կուզեմ :

— Լաւ ուրեմն . Դաւիթ կոմսենոսի բնութիւնն եր-

կիւղով, քաջութեամբ և վատաստութեամբ խառն է :
 Երբ վարանի, անձնական վատ Երկիւղի չը զիջանիր .
 ո՛չ միայն աւելորդ և սնտախ երկիւղի մ'ազդեցութեան
 տակ կ'ընկճի : Դաւիթ կ'զգայ՝ թէ կը սասանի իւր ոտից
 ներքև այն գահը՝ զոր յափշտակեց օրինաւոր ժառանգ
 զին տուժելովը : Թերևս երբէք ձեզի պատմուած չեն
 վրանին տակ այն արիւնաթաթաւ և քստմնելի տեսա
 ղանները՝ որք իրարու ետև յաջորդեցին ձեր գերդաս
 տանին մէջ Սարա, քու հանիդ՝ Բալո — Յով
 հաննէսին քոյրն է . հանիդ չուզեց ամբաստանել իւր
 եղբայրն այն մեծ և զարհուրելի ոճիրներուն համար՝
 որք Բալո — Յովհաննէսին օրօրոցին վրայ արհաւիրք
 ձգեցին :

— Իրաւունք ունիս, Աբօսթօյի՛, քիչ մը բան գի
 տեմ . մայրս չիօթ կերպով խօսած է Բալո — Յովհան
 նէսին ժառանգ և յաջորդ տղայի մը վրայ, և որ, ան
 տարակոյս, այն փոքրիկ Ալեքսիսն է՝ որուն հետ իմ
 պզտիկ մօրեղբորորդիներս երէկ կը խաղային :

— Գուշակեցիք . ժառանգութիւնն իբրև իրաւունք
 սեպող մարդիկ կը հաւատան՝ թէ Տրապիզոնի օրինաւոր
 աէրն Ալեքսիս է . սակայն ոչ ոք կը ցանկայ որ Ալեքսիս
 Տրապիզոնի վրայ թագաւորէ, վախնալով որ մի՛ գուցէ
 հօրը պէս չարութիւն գործելու մտաբերէ : Չեր մօր
 եղբայրը Դաւիթ կոմնենոս և Բալո — Յովհաննէս Ա
 լեքսիս Դ . ի և Իբերիոյ իշխանուհւոյն, Եւդոկիսիայի
 որդիքներն էին Բալո — Յովհաննէս համարձա
 կեցաւ իւր մայրն ամբաստանել առաջին սենեկապե
 տին հետ չնու թիւն ըրած ըլլալուն համար : Բալո — Յով
 հաննէս՝ առանց սպասելու որ օրինաւոր գատաստա
 նաւ իրեն յանցանքն եւ կամ անմեղութիւնն ապացու
 ցուի, զիւեղօկսիա սպաննեց՝ հայրական պատուոյն
 վրէժանդ իր լինելու պատրուակաւ : Ալեքսիս զանկա
 աքսոր գրկեց, բայց գաղտնի աքսորէն փախչելով՝ ե
 կաւ ծեր կայսրը խեղդեց . սակայն իւր կրկին ծնողաս

պանութեան արդիւնքը չը վայելած՝ մեռաւ Բա
 լո — Յովհաննէս իւր կնոջէն, որ Իբերոյ Աղեքսանդր
 թագաւորին աղջիկն էր, չորս տարեկան զաւակ մը կը
 թողոյր, զոր Դաւիթ գահուն յաջորդելոյ յարմար չ'տե
 սաւ : Բալո — Յովհաննէսին եղբայրը կայսերական թա
 գըն յափշտակեց և որբ տղայն իւր արքունեաց մէջ պա
 հեց :

Յովհաննէս Դ . ի վերջին զաւակը թագաւորական
 գահէն մերժուեցաւ . այս մերժումը չափով մ'իրաւա
 ցի էր . բայց և այնպէս Դաւիթ երբեմն կը զարհուրի
 այն տղային առջև՝ որ ատեն ատեն իւր վրայ կը նայի
 լի ատելութեամբ և ոխով :

Ահաւասիկ թէ ինչո՛ւ Դաւիթ, թէև քաջ, և յա
 ճախ երկչոտ, կը տկարանայ երբեմն յանկարծ իւր խոր
 հրդոց և որոշմանց մէջ : Պատիժ է կը վախնայ, և ժա
 մանակ ժամանակ ինքն իրեն կը հարցունէ՝ թէ արդեօք
 երկինք յանկարծակի իրմէ պիտի չը կորդէ՞ այն թագը՝
 զոր թէ՛ գազազի վրայէ և թէ՛ օրօրոցի մէջէ՛ յափըշ
 տակեց :

— Չարհուրելի՛ պատմութիւն է, ըսաւ Լյյէրիֆ,
 բայց մօրեղբայրս չեմ մեղադրեր . ծնողասպան Բալո —
 Յովհաննէսին արիւնն անիծեալ է, և իւր ժառանգին
 թագաւորութիւնը ժողովրդեան համար հարուած պի
 տի ըլլայ :

— Ներեցէ՛ք, ըսաւ Աբօսթօյի, որ Դաւիթ կայսեր
 ձեզի ըսածը՝ ես ալ կրկնեմ . նախ որսանք :

Յոյն երիտասարդը՝ աւելի իւր նոր բարեկամը տը
 խուր յիշատակներէ, որոցմով իւր հօգին հետզհետէ կը
 խռովէր, հեռացունելու քան որսորդութիւն ընելու նը
 պատակաւ, ձին մտրակեց և Ողիմպեան լեռան առա
 ջին զառ ՚ի վայրին վրայ խոյսցաւ :

Ո՛րչափ լեռն ՚ի վեր կ'եննէին, այնչափ ալ անտառը
 կը նսեմանայր և մայրերուն ստուերներն իրենց ոստե
 բուն տակ կը տարածուէին :

Որսորդաց ցիր ու ցան ըլլալուն հետ՝ փողերուն ձայններն ալ կը նուաղէին . ամեն տեսակ որս վանդակաց մէջ կը գիզուէր , եղնիկէն սկսեալ մինչև վայրի կինճը . Գիշերը վրայ հասնելով՝ որսորդք որսալէ դադրեցան . շահերը վառուեցան և հեծեալները Տրապիզոնի ճամբայն բռնեցին , էշէրիֆ ալ բաւական յաջողակութիւն ցոյց տուած էր որսորդութեան մէջ :

Հեղինէ կայսրուհին անձկանօք իւր որդւոց վերադարձին կ'սպասէր . եկած ատեննին՝ դորովանօք գըրկեց զանոնք . էշէրիֆ կայսրուհւոյն քով չը տեսաւ զԱննա , փոքրիկ կայսրորդւոց հետ ինքն ալ պառկելու գացած էր :

Երկու օր տեւեցին տօները , նուազահանդէսներն և խնջոյքները . յետոյ ազնուական հրաւիրեալք զիրենք հրաւիրողէն հրաժեշտի հրաման խնդրեցին . քանի մը օրէն վերջը միայն Ուղուն — Հասանի տղայն մնաց պալատան մէջ :

Իշխանն ամէն օր զԱննա տեսնելուն հետ սէրն ալ շարունակ կ'աւելնար :

Սբօսթօլի գուշակեց էշէրիֆին առ Աննա սէրը , բայց բան չ'ալ հարցունելու չը համարձակեցաւ :

Կայսրն իւր Սարա քրոջ վրայ զմայլմամբ խօսեցաւ՝ երկուասարդին գաղտնի յոյսերն և ակնկալութիւնները կրկնապատկելու համար :

էշէրիֆ լաւ կ'իմանար՝ թէ Աննա իւր հօրմէն աւելի հպարտութիւն ունէր . Աննայի հետ ամուսնանալու նպատակը պիտի չը յայտնէր՝ Դաւիթ կոմսնոսի գերդաստանին մէջ մտնելու արժանի ծառայութիւն մ'ընելէ առաջ . իւր մօրեղբայրը Մէհէմէտ Բ. ի լուծէն ազատելու խորհուրդը կը հասունցունէր , որպէս զի Աննայի հետ կարենայ ամուսնանալ և նորա հօր գահը զօրացունել :

Դաւիթ շուարելով կը պատասխանէր իւր քեռորդւոյն բոլոր պատերազմական առաջարկութեանց :

— Պատերազմելէ ետ չեմ կենար , կ'ըսէր կայսրը , բայց կ'ուզեմ որ պատճառ մը կենայ :

— Ո՛հ , պատասխանեց էշէրիֆ , ամենայն վստահութեամբ կ'ըսեմ և կը խոստանամ . քեզի թէ ես պատճառ մի կրնամ գտնել :

— Եթէ գտնես , իսկոյն Տրապիզոն եկու՛ր ինձ իմացու՛ր :

էշէրիֆ այնպիսի եռանդեամբ խոստացաւ պատճառ գտնել , որ Հեղինէի աչքերն արտասուօք լեցուեցան , Աննա ալ ժպտեցաւ :

էշէրիֆ սաստիկ յուզեցաւ կայսերական գերդաստանէն բաժնուելու միջոցին , որուն կապերը կը յուսար թէ ա՛լ աւելի պիտի ամրապնդէ . իւր փոքրիկ մօրեղբօրորդիներն ընդգրկեց գորովանօք , քանի մը խօսքեր թոթովեց կայսրուհւոյն . իսկ Աննայի առջև համբմնաց :

Իր նժոյգն հեծաւ և մեկնելու միջոցին քաջութիւնը և յոյսը սրտին մէջ բորբոքելով , և դրան առջևի սանդղոց վրայ շարունած կայսերական գերդաստանին բոլոր անդամներն ողջունելով՝

— Կրկին պիտի գամ , ըսաւ :
Եւ անմիջապէս դէպ 'ի թիւրքմէնխտան ճամբայ ելաւ :

924
39



Գ Լ Ո Ի Խ Բ

ԲԱՆԱՅԻԱ

երբ էշէրիֆ Դաւիթ կոմսենոսի կայսերական գեր-
դաստանէն բաժնուելով՝ Թիւրքմէնիստան վերագար-
ձաւ, անհնարին մեղամաղձոտութիւն մ'եկաւ վրան :
Դիշեր ցերեկ միայն մէկ բանի վրայ կը մտածէր . Ու-
զուն — Հասանի տղայն՝ այլ ևս իր ընկերաց հետ չ'էր
կենցաղավարեր . ինք՝ որ երբեմն իւր հասակակից երի-
տասարդներէն ամենէն աշխոյժն և յանդուգն էր, առ-
տուրնէ մինչև իրիկուն անտառներուն մէջ խնթ խն-
լաւ կը թափառէր՝ Աննայի շնորհալից ուրուականն ե-
րևակայութեան առջև բերելով և նորա հետ ամուս-
նանալ կարենալու միջոցը փնտռելով :

էշէրիֆի հայրը զարմացաւ, շուարեցաւ, վերջն ալ
տխրեցաւ իւր որդւոյն բնութեան յանկարծական փո-
փոխութիւնը տեսնելով : Ուզուն — Հասան առջի բերան
քաղցրութեամբ վարուեցաւ հետը, խրատեց, յանդի-
մանեց . սակայն էշէրիֆ ո՛չ յանդիմանութիւններն, ո՛չ
ալ խրատները բանի տեղ դրաւ : Ուզուն — Հասանի
ճարը հատնելով՝ սկսաւ կշտամբել իւր որդին՝ քանի
մի շաբաթէ ՚ի վեր յունաց հետ մտերմանալուն համար .
էշէրիֆ արձանի պէս լուռ կը կենար հօրը կծու խօս-
քերուն առջև :

էշէրիֆ մերթ ընդ մերթ խօսիլ և իւր գաղտնիքն
յայտնել կուզէր . սակայն չէր համարձակեր : Տունէն
դուրս ելնելով՝ նորէն անմիջապէս ընդարձակ անտառ-

ներուն մէջ կ'երթար, որոց հանդարտութիւնն իր սրտին
յուզմանց չ'էր համապատասխաներ :

Ուզուն — Հասան և իւր մայրը Սարա շարունակ էշ-
չէրիֆի տարօրինակ մեղամաղձոտութեան վրայ կը խօ-
սէին : Ուզուն կը պատուէր զՍարա, ոչ թէ միայն իւր
տղայութեան ատեն զինքը խնամած ըլլալուն, այլ մա-
նաւանդ Թիւրքմէն ցեղին մէջ ազդեցութիւն ունենա-
լուն համար :

Ալեքսիս Դ. ի աղջիկն ալ կենացը մէջ պիտի կրէր
այն ամեն վշտերն՝ որք իրարու ետեւէ իւր գերդաստա-
նին անդամները զարհուրեցուցին և հարուածեցին :

Ճիհու Սօլէհ անուն Թիւրքմէն իշխանն Ալեքսիս Դ.
ի դէմ պատերազմ բացաւ . հաշտութիւն և խաղաղու-
թիւն եղաւ՝ պայմանաւ որ Ալեքսիս իւր Սարա աղջիկը
Թիւրքմէն իշխանին կնութեան տայ . Ընդհանրապէս
Սուլթաններուն և Եւրոպիոյ կայսերաց, ազատ պէյն-
րուն և թագաւորաց մէջ ծագած պատերազմներն այս
կերպով կը վերջանային . Անհաւատը, կէս վայրենի մար-
տիկը՝ հոյակապ պալատներու մէջ փափուկ սնած և
մեծցած աղջիկն իւր թաղեայ վրանին տակ տանելով՝
վրէժխնդրութիւն ըրած կ'ըլլար : Ճիհու Սօլէհ Ալեքսի-
սի և Եւդոկիայ աղջկան հետ ամուսնացաւ մի միայն
իւր ամբարտաւան հաճոյքը գոհացնելու համար . բայց
քիչ ատենէն տեսաւ Սարայի գովելի յատկութիւնները,
ճանչցաւ նորա լաւ բնաւորութիւնն և համոզուեցաւ՝ որ
իւր կինը բարութեան և քաղաքակրթութեան մասին
զինքը կը գերազանցէ : Ճիհու Սօլէհ երջանիկ կը հա-
մարէր ինքզինք այսպիսի ամուսին մ'ունենալուն հա-
մար՝ որ շատ չանցաւ, ամենուն մեծարանքն և վատա-
հութիւնը յինքն գրաւեց . Ուզուն — Հասան կ'ուրախա-
նայր ամեն տեսակ առաքինութեամբ զարդարեալ մայր
մ'ունենալուն վրայ :

Հասան իւր հանճարեղ և բարեսիրտ մօրն իմացուց՝
թէ կարի յոյժ վշտացած է էշէրիֆի այլանդակ վար-

մունքին համար :

— Թերևս , ըսաւ Սարա , անհնարին ցաւեր ունի , պէտք չէ մեղադրել . մեզնէ ծածկած դաղտնիքն իմանալու ջանք ընենք : Մինչև հիմայ Էջէրիֆի ըրած յանդիմանութիւններդ արդեւնք բնաւ չ'ունեցան . բայց հոգ մի՛ ըներ , որդեակ իմ , ես հետը սիրով և քաղցրութեամբ խօսելով կը յուսամ թէ պիտի կարենամ իւր գաղտնիքն իմանալ :

Էջէրիֆի տիրութիւնն ո՛չ թէ միայն Ուզուն — Հասան և Սարա վշտացուցած էր , այլ նաև ուրիշ արարածի մը սիրտն ալ կը խռովէր . այս արարածը՝ Սարայի Բանայի կոչուած գերին էր :

Այս տեղ համառօտ մը Բանայիայի պատմութիւնն ընենք : Բանայիա Սրչիպեղադոսի կղզիներէն մէկուն տիրողոյն իշխանի մ'աղջիկն էր , զոր ծովահէնք յափշտակելով՝ Տրապիզոնի վաճառանոցը տարին և հոն իբրև գերի վաճառեցին : Բանայիա անձնասէր և ամբարտաւան ըլլալով՝ երբէք չ'տրանջաց . առանց դժգոհութեան ընդունեց իր սև ճակատագիրը . անունն անգամ յայտնել չուզեց . Սարա ալ տեսնելով նորա գեղեցկութիւնը՝ անունը Բանայիա դրաւ , որ կը նշանակէ կոյ : Մանկամարդ աղջիկը՝ թէ և քրիստոնեայ , սակայն իւր տէրերը կ'ատէր . Սարա որչափ ջանաց՝ չ'կրցաւ անոր յամառ բնութիւնը փոխել . գերի ըլլալով հանդերձ ամենևին հպարտութիւնը ձեռքէ չ'ձգեց , և բնաւ ջանք չ'էր ըներ ինքզինք ուղղելու . սակայն Բանայիա օր մը յանկարծ առջի վարմունքը փոխելով՝ սկսաւ սիրել զանոնք՝ զոր մինչև այն ատեն կ'ատէր և կ'անիծանէր :

Այսպէս ահա՛ երբեմն ամբարտաւան Բանայիան հեզահամբոյր և բարի աղջիկ մը դարձաւ : Էջէրիֆի ձայնը լսած կամ երեսը տեսած ատեն՝ ներքսպպէս կը յուզուէր՝ անոր սիրահարած ըլլալուն համար . բայց տակաւին սիրահարութեան յայտնի նշաններ ցոյց չէր տար : Սարա այս անկարծելի փոփոխութեան վրայ շատ

ուրախացաւ . Էջէրիֆ արդէն իսկ միշտ քաղցրութեամբ կը վարուէր Բանայիայի հետ . իւր որսական բարակներէն քիչ մ'աւելի , և իրաքէն բերուած արագընթաց երիվարներէն ալ քիչ մը պակաս կը սիրէր զանիկա :

Եթէ Բանայիա այն ընտանիքէն բաժնուէր՝ Էջէրիֆ այնչափ պիտի չ'ցաւէր՝ որչափ պիտի ցաւէր իւր բազէներէն մէկը կորսնցնելուն վրայ : Եւ յիրաւի , Էջէրիֆ մտքէն անգամ չ'էր անցուներ՝ թէ արդեօք ո՛րպիտի գողտրիկ սիրով կը սիրէր զինքն այն վեշտասանամեայ սիրտը՝ որուն ամեն բան կը պակսէր աշխարհի մէջ , և որ զէջէրիֆ տեսած ատեն յանհունս կ'ուրախանայր :

Էջէրիֆ կրնար Բանայիայի գաղտնիքն իմանալ կամ դուշակել , եթէ արդէն ուրիշ մտածմունքներով զբաղեալ չ'ըլլար :

Երիտասարդը չափազանց կը սիրէր որսորդութիւնն և գողցես այս էր իր միակ զբաղմունքը . բազէներն որսի վարժեցնելու զարմանալի յաջողակութիւն ունէր . ասոնցմէ մին այնչափ կը սիրէր՝ որ միւսներէն աւելի սիրելուն 'ի նշան վզին վրայ պատուական քարերով զարդարուած մանեակ մը կախած էր : Առտու մը թռչունը մեռած գտաւ . իշխանին զգացած ցաւն անկարելի էր բացատրելու . Բանայիա Էջէրիֆի քով երթալով բազէլանը՝ տեսաւ որ բազէին մարմինը ձեռքին մէջ բռնած դառնապէս կուլայ : Իշխանն զԲանայիա տեսնելուն պէս իսկոյն թռչնոյն վզէն մանեակը փրցուց և անոր նետեց՝ որ խաղալիկ ընէ :

Մանկամարդ աղջիկն ապարանջանի տեղ ձեռքն անցուց զայն . յետոյ նուրբ և խոր ձայնով Էջէրիֆի ըսաւ .

— Յաւիտեան հաւատարիմ պիտի մնամ քեզ այն թռչնոյն պէս՝ որուն վրայ այժմ դու կը մորմոքիս . . . Այս օրու ընէ սկսեալ՝ սիրածներդ պիտի սիրեմ և ատածներդ ալ պիտի ատեմ : Հիմայ եթէ ո՛ր և է բանի մը պէտք ունիս , փութա՛ ըսէ՛ ինձ՝ որ ես երթամ գտնեմ :

— Վրանիս մէջ, ըսաւ իշխանը տխրութեամբ, ազանի մը պէտք է.

Դեռահասակ աղջիկն ամթխածութենէն գլուխը ծըռեց. այնուհետեւ աւելի էշէրիֆի քան Սարայի կամակատար գերին նկատեց ինքզինք.

Բանայիա ոչ միայն հրապուրիչ գեղեցկութիւն մը ունէր, այլ նաև ամեն տեսակ արուեստի տեղեակ և յաջողակ էր: Միհրիի և արաբացի Սափուլի պէս՝ որոյ գերեզմանին շուրջն Ամասիոյ վարդենիներ բարձրացած են, և բոլոր բանաստեղծք անհրաժեշտ պարտք կը համարին իրենց միանգամ յայց ելնել նորա գերեզմանին, յանպատրաստից քերթուածներ կը յօրինէր: Եէյիսիէն աւելի բանաստեղծական երգեր գրած էր. խարիպ իշխանէն շատ յաջողակ չորեքաղի փանդուռն կը զարնէր. այն խարիպէն՝ որ ինքզինք իր նշանածին ճանչցուց՝ քաղցրը եղանակներ հնչեցունելով: Խիստ լաւ ալ պարել գիտէր:

Էշէրիֆ ամեն օր կը տեսնէր գեղեցկութեան, տաղանդի և հաղուագիւտ յատկութեանց այս սքանչելի պատկերը. բայց բնաւ ուշագրութեամբ գիտած չէր Բանայիայի գեղեցկատեսիլ դէմքը. երբէք երգելը լռած չէր:

Իրիկուն մը, մինչդեռ Էշէրիֆ պարտէզներուն մէջ կը ձեմէր, յանկարծ Աննա Կոմնենոսի կերպարանքն երևակայութեան առջև բերաւ. բոլորտիքը նայելով՝ տեսաւ որ Բանայիա՝ բաղեղան պէս յիրար հիւսեալ ծաղկանց քով նստած կ'երգէր. ուշի ուշով երգած երգին մտիկ ըրաւ:

Սրևեցիք այս երգը գրեթէ շարունակ կ'երգեն, բայց իրենց համար միշտ նոր է. ահաւասիկ երգը. «Վարդենուոյն վրայ կեցած ռեւոնէ կը նախանձի այն թիթեռնիկին վրայ՝ որ անուշահոտ ծաղկանց պատեաններուն մէջ կը ննջէ իրիկունը»:

Երգին խօսքերը, իմաստը, ներդաշնակութիւնն և

տխուր եղանակն Էշէրիֆի աղբեցին: Այս տխուր երաժշտութիւնն իւր հոգւոյն խորը գտնուած բանին արձագանգն էր: Յետոյ անտառակին մերձենալով ըսաւ.

— Բանայիա՛, նորէն երգէ, ա՛հ, չես գիտեր՝ թէ ձայնդ ինձ որչափ անուշ կուգայ:

Մանկամարդ աղջիկը դարձեալ երգել սկսաւ. Էշէրիֆ այս անգամ բոլորովին յափշտակուեցաւ նորա ձայնէն. հեծողն այլ ևս չէր՝ այլ Բանայիա, որ իւր գաղտնիքը յերևան կը հանէր: Աղջիկն երբէք իւր ձայնն այսչափ չէր բեկբեկած, երբէք երաժշտութիւնըն իրեն համար՝ թէ՛ իւր յոյսերն և թէ՛ հեծեծանքները յայտնելու միջոց մ'եղած չէր, ինքզինք նոր աշխարհի մը մէջ փոխադրուած կը կարծէր և անբացատրելի ուրախութեամբ կ'ուրախանայր:

Երբ Բանայիա երգը լմնցուց, Էշէրիֆ ուժգին նորա ձեռքը սեղմեց:

Աղջիկը սրտին յուզմունքը ծածկել ուզեց. բայց իշխանն աներևոյթ եղածին պէս՝ բարձրաձայն աղաղակեց.

— Իշխանը զիս կը սիրէ՛, կը սիրէ՛:

Հետեւեալ օրը՝ երբ Սարա և դեռահասակ աղջիկն ասղնագործութեան կը պարապէին՝ Սարա Էշէրիֆի տրտմութեան վրայ ունեցած անհանդստութիւնը Բանայիայի յայտնեց:

Գերին ժպտելով պատասխանեց.

— Ազնիւ տիկինս, հաւատա՛ որ Էշէրիֆի սրտին մէջ մեղամաղձոտութիւնն արմատ ձգած է. իւր վրանին տակ մանկամարդ ամուսին մ'ունենալու կը ցանկայ:

— Կը հաւատա՞ն ատոր:

— Ճշմարիտ է. կը հաւատամ:

Բանայիայի յայտնած գաղտնիքը նոյն իրիկունն Ուղուն — Հասան ալ իմացաւ. բայց աւելի տէրվիչներուն գիտութեան քան մանկամարդ աղջկանց գիլթական հոգւոյն վստահելով՝ ուզեց որ Ողիմպեան լերան ամե-

նէն աւելի հռչակաւոր միայնակեացներուն խորհուրդ հարցունէ, մասնաւորապէս Թու — Պէնի :

Սարա, ըստ որում՝ քրիստոնեայ, շատ ջանաց իւր որդւոյն սնտոհապաշտութեանց առջևն առնուլ : Բայց Ուզուն — Հասան անգամ մը միտքը դրած ըլլալով՝ որ իւր որդւոյն դաղանիքը կախարդութեամբ միայն կ'ըրնայ իմանալ, մօրը խօսքերուն չ'անսաց, և անյապաղ մեկնել ուզեց այն շնորհալի մարդոց խորհուրդ հարցունելու համար՝ որք ապաշխարութեամբ Աստուծոյ ամենէն աւելի մօտ են :

Սարայէն զատ ուրիշ մէկն ալ չէր գիտեր Ուզուն — Հասանի բացակայութեան պատճառը :

Հեռեւեալ օրն Ուզուն — Հասան հետն երկու ծառայ առնելով՝ Ողիմպեան լեռան ճամբան բռնեց :

Ամբողջ օր մ'անտառաց մթին կիրճերէն անցնելով՝ կէիքի — Պապաին գերեղմանին քով եկաւ . հոն երկիւղաճութեամբ սօսիի փոքրիկ ճիւղ մը վրցուց . վերջը Տօկի — Պապաին տապանաքարին վրայ մեծկակ նստէր մը դրաւ . Հոյակապ շիրմին տակէն հոտող աղբիւրէն ջուր խմեց . բայց չ'մտածեց՝ որ մեծն Օրխան գեղեցիկ օրինակ տուած էր թագաւորաց՝ պատուելու և վարձատրելու այն արհեստաւորները՝ որք իրենց երկրին մէջ օգտակար արուեստ կը հնարեն : Տօկի — Պապա հողէ անօթներ շինելու արուեստն գտած ըլլալով՝ հասարակաց երախտագիտութեան արժանացած էր :

Ուզուն — Հասան Ավիա անուն թիւրքմէն սուրբին յիշատակն ալ յարգելէն յետոյ՝ շէրտոյ տէրվիշներուն Բեռն մտաւ՝ իւր որդւոյն ցաւոց վրայ անոնց խորհուրդ հարցունելու նպատակաւ :

Տէրվիշներն իշխանին առջև պարել սկսան . այնչափ դարձան՝ մինչև խենթենալու պէս եղած՝ շնչասպառ գետին ինկան . բերաններնէն մի միայն անհասկնալի, կամ աւելի ճիշդն ըսենք, խենթ խելառ խօսքեր կը հանէին . իշխանն ասոնց Բեռնէն ելաւ՝ հիւ քաշող տէրվիշ-

ներուն Բեռն երթալու համար :

Ասոնք ալ խենթենալու աստիճան հիւ քաշեցին . իրենց խառն 'ի խուռն աղաղակները թիւրքմէն իշխանին միտքը չ'ըսաւարեցին այն խնդրոյն վրայ՝ որոյ լուծմանը կ'սպասէր անհնարին ցանկութեամբ : Կեռտ տէրվիշներուն զարհուրելի բնակարաններն ալ գնաց, որոնք եղիպտոսի կախարդաց դաղանիքները դիտեն, օձերու հետ աներկիւղ կը խաղան, կրակ կը բռնեն և մոգական խօսքերով չոր տունկերը վերստին կը ծաղկեցունեն :

Ուզուն — Հասան ասոնց զօրութեանէն ալ բան մը չը հասկնալով՝ երկու օր ալ Ալադօտտինի առաքեալներուն քովն անցուց, որ մահմետականաց Դաւիթն և բանաստեղծից և օրէնսդրաց գլխաւորն է : Վերջապէս, հետաքրքրութիւնը շարժելով՝ Ողիմպեան լեռան այն կըրօնաւորներուն քով ալ գնաց՝ որոց կեանքը շատ անգամ իշխանաց և օրէնսդրաց կամ դիտնականաց բարկութիւնը շարժեց : Այս տէրվիշները՝ որք էնտէր — Պապա — Ռըտօնի աշակերտներն են, շէրտոյ կ'ուտեն . Իպնը — Պէյլար արաբացի տնկագէտը կ'ըսէ՝ թէ շէրտոյ ուտողները քիչ ատենէն կատարեալ խենթ կ'ըլլան : Եղիպտոսի իշխանները շէրտոյ ուտողներուն դէմ խիստ օրէնքներ կը հրատարակէին, և այն օրինաց չ'հնազանդող մարդոց ակաւայները կը խլէին : Պէնի ուտող տէրվիշներուն զառանցանքներն ալ չ'կրցան յայտնել Ուզուն — Հասանի՝ իւր որդւոյն ցաւը, որոնք տանջանքէ վախնալով՝ Ողիմպեան լեռան անտառաց մէջ եկած պահուրտած էին :

Հասան ասոնց առատ պարգևներ տալով՝ լեռան ճամբայն շարունակեց, մինչև որ Ծալ — Պինի միայնոցն հասաւ, օր հմայութեան նուիրեալ երիտասարդ կրօնաւորաց կարգին Էրն (գլխաւոր) է : Ծալ — Պինի Լէշէրիքի ցաւին պատճառներն երկարօրէն բացատրելէն յետոյ՝ Բանայիայէն աւելի մարդարէական և վարդապետական ճարտար լեղու մը դորձածելով՝ ճիշդ այս աղջ-

կան պէս եզրակացուց՝ թէ էշշէրիֆի սիրտն ուրիշ արա-
րածի մը հետ կապուած է :

— Մայրս շատ իրաւունք ունէր , ըսաւ ինքն իրեն
Ուզուն — Հասան . հոգւոյն մէջ եղած բաներն իմանա-
լու մասին դեռուհասակ աղջիկները ծեր տէրվիշներէն
աւելի յաջողակ են .

Հասան տասն և հինգ օր բացակայ գտնուելէն վեր-
ջը՝ իւր տեղը վերադարձաւ . կը մնար իրեն իմանալ էշ-
շէրիֆի նշանածին անունը :

— Հոգ մի՛ ընէր , ըսաւ Սարա , Բանայիա այս գոր-
ծը գլուխ կը հանէ . մենք ո՛րչափ ետևէ ըլլանք՝ պիտի
չ՛կարենամք մեր ուզած անունն իմանալ . իսկ Բանայիա
կրնայ և մեզի ալ կ'իմացունէ :

Սարա իւր սիրելի գերւոյն իմացուց իշխանին ճա-
նապարհորդութեան պատճառն և մանկամարդ աղջկան
ճակատը համբուրելով՝ ըսաւ .

— Բանայիա՛ , կրկին էշշէրիֆի գաղտնեաց խորը թա-
փանցէ՞ . թերևս այսչանգամ ալ ուրիշ բան մ'իմանաս .
.....

Այն օրը Բանայիային շատ երկայն երևցաւ . հազիւ
թէ արեգական վերջին նշոյնները շիջան , և ահա՛ իւր
չորեքադի փանդիւռն առնելով՝ այն անտառակը դնաց՝
ուր ամեն իրիկուն էշշէրիֆ ճեմելու կ'երթար՝ մանկա-
մարդ աղջկան երգերը լսելու համար՝ որմէ զատ ուրիշ
զուարճութիւն և մխիթարութիւն չ'ունէր : Բանայիայի
երգերն իւր սրտին ամեն յուզմանց կը համապատաս-
խանէին . աղջիկն ուզածին պէս իշխանին սիրտը յոյսե-
րով կը լեցունէր և ցաւերը կը մոռցունէր . եթէ նուա-
զարանն այլ ևս չ'հնչէր , էշշէրիֆ ալ իւր յուսոց իրա-
կանալուն չ'էր հաւատար . Այն իրիկունը Բանայիա յոչ
կամաց և հարևանցի կը զարնէր նուազարանը . նոր ըս-
կած երգը յանկարծ ընդհատելով՝ ուրիշ մը կ'սկսէր :
Իշխանը նուազածուին երգերէն յափշտակուելով՝ այն
անտառակին մօտեցաւ՝ ուր աղջիկը նստած էր . Սովո-

րականէն աւելի ծիւրեալ և ծնդեալ կ'երևէր , հոն դը-
րուած նստարանին վրայ ինկաւ . բայց Բանայիա որպէս
թէ իշխանը չ'տեսնէր՝ ո՛չ տեղէն շարժեցաւ , ո՛չ ալ բառ
մ'արտասանեց :

— Բանայիա՛ , ըսաւ իշխանը , այս իրիկուն ի՞նչ ունիս :

— Կենաց ամենէն մեծ վիշտը . ասիկա թէ՛ գքեզ և
թէ՛ զիս անհանգիստ կ'ընէ . . . : Գիշերները բնաւ չես
քնանար . օրն 'ի բուն միայն մէկ կերպարանք աչքիդ
առջև կը բերես . անհիմն վհատութեանց՝ ուրախարար
յոյսեր կը յաջորդեն . . . : Պղտիկ տղու պէս կը զար-
հուրիս , դու՛ որ մեր երկրին մէջ առաջին քաջը կը հա-
մարուիս , և հպարտ աչքերդ ջերմ արտասուօք կը լե-
ցուին . . . : Կը կարծես՝ թէ ամբողջ աշխարհ անձուկ
սահմանի մը մէջ ամփոփուած է , և կ'ուզես որ այդ սահ-
մանին մէջ փակուած մնաս այն աղջկան հետ՝ որուն ա-
նունն ինձ չես իմացուցած :

— Աննա՛ , մօրեղբօրս աղջիկն Աննա՛ , ա՛հ , Բանա-
յիա՛ , ի՞նչպէս գուշակեցիր՝ թէ ես այս աղջիկը կը սի-
ւեմ :

Գեռահասակ աղջիկն յանկարծ նստած տեղէն ելաւ .
չորեքադի փանդիւռն ոտքին տակ իննալով՝ կոտրեցաւ :
Բանայիա վայրկեան մ'ինքզինք խենթեցած կարծեց .
յուսահատութենէն իւր վրձնիկ ձեռքերը խածաւ . յե-
տոյ նստարանին վրայ էշշէրիֆի կուշար նստելով՝ ըսաւ .

— Իշխան , այդ աղաւնի՞ն բերել կ'ուզես թիւրք-
մէն վրանիդ տակ :

— Այո՛ .
— Հեղինէ կայսրուհւոյն աղջիկը :
— Ա՛հ , չես գիտեր՝ թէ Աննա ի՞նչ կ'ազդէ ինձ . .
. . . . Հպարտ է , կը վախնամ որ ինձ հետ չ'ամուսնա-
նայ :

— Քեզի հետ չ'ամուսնանայ . հազար անգամ գեր
'ի վերոյ չե՞ս այն յոյն իշխաններէն՝ որք Տրապիզոնի պա-
լատներուն մէջ կանացի կեանք կը վարեն . Սարա , քու

հանիդ, Դաւիթ Կոմնենոսի քոյրը չէ՞. Սլեքսիս Դ. ի արիւնն երակացդ մէջ չհոսիր. եթէ մեր ցեղերուն աւմենէն յետին ասպետն ալ լինիս, դիմացդ վրայ երիտասարդական ախուժութիւն, գեղեցկութիւն և քաջութիւն չեն վայլեր. Դիցուք թէ գերի ալ ըլլաս, դարձեալ աշխարհիս ամենէն մեծ թաղաւորին աղջկան հաւասար չե՞ս :

— Բանայիս, զիս կը քաջալերես, զիս կը մխիթարես. ըսէ՛ ինձ, ո՞վ ուսոյց քեզ հողուոյն գաղտնեաց խորը թաղանցել. սրտին վերքերը դարմանել և բժշկել :

— Իմ գլխուս ալ պատահած է .
— Մէկուն սիրահարած ես .
— Այո՛ :

— Երանի՛ անոր՝ որ այդ վեհ սիրան իրեն գրաւած է :

— Դու զիս չճանչցար և մերժեցիր . . . : Բայց հոգ չէ, տէ՛ր իմ. սիրով չ՛ապրողը կը մեռնի :

— Մեռնի՛լ. դու իմ մխիթարիչս և բարեկամս ես. ո՛հ, չեմ ուզեր որ մեռնիս. կը հասկնաս, Բանայիս, եթէ քոյր ունենայի՞ տարակոյս չ՛կայ՝ թէ քեզի չափ պետի չ՛սիրէի զանիկա :

Հիմայ ալ Էջջերիֆ զԲանայիա քաջալերեց. աղջիկն այնպէս ձևացուց՝ որպէս թէ իշխանին խօսքերուն վրայ հանդարտեցաւ. բայց Էջջերիֆի հեռանալէն անմիջապէս վերջը՝ սկսաւ լալ և ողբալ . . . :



Գ Լ Ո Ւ Խ Գ .

ՀՈԿՈՆԱՍԱԿ ԿՈՒՐԿԱՆԸ

Էջջերիֆ Բանայիայի քովէն մեկնելէն անմիջապէս զկնի՛ յանկարծ կէս մթութեան մէջ վիթխարի հասակաւ մարդ մը տեսնուեցաւ՝ որ մէկ ժամէ ՚ի վեր անտառին ետևը ծածկուած էր. յամրաքայլ մանկամարդ աղջկան մօտեցաւ և քաղցրիկ ձայնով մ՛անոր ըսաւ .

— Ինձ պէտք չունի՛ս :
— Կուրկան, պօռաց Բանայիա, հաւատարի՛մս կուրկան :

— Քու ստուերդ եմ, պատասխանեց հսկահասակը. ուր որ երթաս՝ ես ալ հոն պիտի գամ. . . եթէ դէպ ՚ի գերեզման երթաս, դարձեալ քեզի պիտի ընկերանամ, որովհետև կեանքս քեզ կը պարտիմ. . . :

Սև թիւրքմէնը, տեսակ մը վայրենի Գողիաթ, որ այս միջոցին Սարայի գերուոյն մօտ կեցած էր, ստուգիւստակալի տանջանքէ մ՛ազատուած էր մանկամարդ աղջկան շնորհիւ :

Այս եղելութիւնն երեք տարի յառաջ տեղի ունեցած էր .

Ուզուն — Հասանի ընտանիքն այն ատեն Պուխրա ձանապարհորդած էր, և բարձրաւանդակ տեղւոյ մը վրայ կառուցեալ Սրգի անուն պալատան մէջ կը բնակէր, պալատ չքնադակերտ և ամրակառոյց, որոյ համար կարծիք կայ՝ թէ տասներորդ դարուն մէջ շինուած է .

Ուզուն — Հասան ատեն ատեն ամբողջ թիւրքմէնիստան

կը պարտէր՝ ստորակարգեալ իշխանութեանց եղծումները ջնջելու, տկարաց իրաւունքները պաշտպանելու, գիտուն իշխանները վարձատրելու և իւր օրէնսդրական համբաւը՝ իւր պատերազմական համբաւոյն բարձրութեանը հաւասարցնելու համար: Իշխանն իւր մօրը խորհուրդներէն մաղի յալի անգամ շեղիլ չ'էր ուզեր. Էջջերի՞ միշտ հօրը կ'ընկերանայր՝ որպէս զի կառավարելու արուեստը լաւ ուսանի: Բանայիա ալ աւելի իբրև բարեկամ քան գերի նկատուելով՝ այն ընտանիքը թողած չ'էր:

Հասան, որովհետև ջերմ մահմետական էր, առաջին անգամ Մամազի — Գատիի մզկիթին այցելութիւն ըրաւ, որ խիստ հոյակապ և միանգամայն այլանդակ շէնք մ'էր. գաւթէն զատ՝ ուր կ'աղօթեն, ունէր ընդարձակ կալուածներ, Մէքքէի բոլոր ուխտաւորները պատասպարելու բաւական կարողութիւն մը, ևս և տարեկան տօնավաճառաց յատկացեալ տեղի մի՞ ուր կը խոնէին շքեշակայ վայրաց ժողովուրդները: Հոն կը ծախուէին արագընթաց մահալ ուղտեր, անգին քիւնի ձիեր, բարձրահասակ և բարակոտն թիւրքմէն ձիեր, և էօզպէկ ձի՞ որ Պոլսարայի հիւսիսակողմէն և Միօքայի նահանգէն կուգայ. Հոն կը ծախուէին նոյնպէս մետաքօտայ կերպաններ, թաղիներ, հիւսկէններ, պատուական զէնքեր, թիւրքմէն կահ կարասիներ, տեսակ տեսակ յանուշահոտ իրեր, չքնաղ զարդեր և մաշկեակներ: Այս տնտեսականներն երկրին հարստութեան աղբիւր էին: Գպրոցը մզկիթին քովն էր. կար նաև իշխաններու յատուկ վարժարան մ'ալ: Սոյն օրէնսդէտներն՝ օրինաց մեկնիչ և միանգամայն այն ուսուցանող մարմինն են՝ որմէ առաջ կուգան բոլոր «օգիւնները», իրաւագէտները, վարժապետները, մեկնիչները, դիպուածագէտները, բնագրութեան թարգմանիչները, գիտուններն և քննիչները: Ասանց ամենուն գլուխն է Գիւրգի, Ուղուն — Հասան իւր իշխաններուն վարժարանը՝ Մէհէմէտ Բ. ի իշխաններուն վարժարանին ձեռովը շինել տուած էր. իւր տէրութեան հը պատակ ամենափոքրիկ կամ աղքատ գիւղերուն մէջ անգամ քաղաքակրթութիւն մտցնելը մեծ պատիւ կը համարէր իրեն: Մամազի — Գատիի իշխանն ըստ արժանւոյն պատուեց և իր առատաձեռնութեան բազմաթիւ փորձեր թողուց անոնց:

Մզկիթին վարժարանէն մեկնելով՝ գնաց երկիւղածութեամբ Պահա — Էտտիսի գերեզմանին սուրբ քարը համբուրեց, և ջերմեանդէն բարեպաշտութեան մը պարտքերն անթերի կատարեց:

Ուղուն — Հասան Պոլսորա բնակած միջոցին տեսնելով՝ որ հոն Ասիոյ հիւսիսակողման այլ և այլ ցեղերը շատցած են, անոնցմէ հնազանդութեան երդումն առաւ: Երբ քաղաքէն պիտի մեկնէր, Սարա՝ որ շնորհիւ քրիստոնէութեան բոլոր թշուառաց վրայ կը գթայր, իրեն ըսաւ.

— Որդեակ իմ, շատ մեծ պարտաւորութիւններ կատարեցիր. մուրացիկներն զքեզ կ'օրհնեն առատաձեռնութեանցդ համար. գիտէ ժողովուրդը՝ թէ զինքը դատող ատենակալաց վրայ ի՞նչ փութով կը հսկես. գպրոցները քաջալերեցիր. հիմայ դիտնալ միայն կը մընայ քեզ՝ թէ օրինաց մլասապարտ մարդիկ ի՞նչպէս պատժուած են. աչքովդ ստուգէ՛՝ թէ արդեօք թեթև յանցանքի համար սոսկալի տանջանքներով պատժուած մարդիկ կան: Գատաւորաց ատեանները քննելէդ վերջը՝ բանտերուն մէջ ալ իջի՛ր:

— Մայր իմ, խորհրդոցդ մէջ իմաստութիւն և բարութիւն կը փայլին. վաղը դատապարտելոց բանտերուն այցելութիւն պիտի տանք:

Ստուգիւ, հետեւեալ օրն իշխանը, Էջջերի՞, Բանայիա և մի քանի թիւրքմէն ազնուականք ստորին բանտը (զնտալի գուլ) գնացին. Այս բանտին մինակ անունն երկիւղ և արհաւիրք կ'ազդէր՝ թող թէ դատապարտելոց հոն կրած զարհուրելի տանջանքները: Սա

կայն և այնպէս այս բանտին մէջ երող մարդիկ թեթև օրինադանցութեանց համար դատապարտուած էին :

Դատապարտեալները պարանով կապած զնայն յայտն կ'իջեցունէին, և մինչև անութիւնն նեխեալ ջրոյ մէջ ընկրկեալ կը մնային, որոյ պաղութիւնն և ժանգահոտութիւնն իսկոյն նոցա անդամոց սաստիկ վիշտ և կսկիծ կը պատճառէր, և քանի մի շաբաթէն կը մեռնէին :

Ուզուն — Հասան հրամայեց՝ որ այն ջրհորը գոցեն՝ մահուան դուռը հասնող թշուառներն այն սոսկալի վրահէն հանել տալով : Իշխանն այնպէս կը կարծէր՝ որ մարդուն՝ իւր նմանը չարաչար մեռցունելու համար հնարած սոսկալի տանջանքները միայն իրեն գոցել տուած բանտին մէջ տեղի կ'ունենային. սակայն Պոխարայի կառավարիչն իրեն առաջարկեց՝ որ անգամ մ'ալ Գարա — Գօշի (ոչխարի ոջիւներու բանտ) այցելութիւն տայ :

— Ի՞նչ տեսակ յանցաւորներ հոն բանտարկեալ են, հարցուց իշխանը :

— Աւազակները, սլատասխանեց քաղաքին կառավարիչը :

Ուզուն — Հասան և իւր ընկերներն ընդարձակ բակէ մ'անցնելով՝ ահագին խոռոչ մը շրջապատող դաւթի մը մէջ եկան . այս խոռոչին յատակն ոտքերնէն և ձեռքերնէն գետին կցուած և սոսկալի ոջիւներու մատնուած մարդիկ կը տեսնուէին : Երկու երեք աւուր մէջ դէմքերնին լիզալինջ կ'ըլլար, և ամենազօրաւոր մարդիկ իսկ անգամ մ'այս տանջանաց ենթարկուելէ վերջը՝ մէկ շաբաթէ աւելի չէին կրնար ապրիլ :

Ուզուն — Հասան՝ որ խոռոչին պատին մտեցած էր, սոսկալով յետս նահանջեց և հարցուց .

— Հիմայ ո՞րչափ դատապարտեալ կայ հոս :

— Այս առաւօտ երկուքը մեռան . չորս մարդ ալ հողինին փչելու վրայ են . երեկուան հոս բերուածն իր խեղութեամբ այս երկրին մէջ խիստ զարհուրելի հսկայներն մէկն է . կ'ամբատանեն զինքը բայմաթիւ շա-

րութեանց և մասնաւորապէս երկու ձի գողնալուն համար :

— Յանցանքն ապացուցուած է :

— Ամեն կողմէ զօրաւոր ապացոյցներ տեղացած են այս մարդուն գլխուն վրայ . որովհետև զօրութեանն ապաւինելով՝ այլոց ինչքերը գողնալու ելած էր, ուստի դատաւորները պարտաւորեցան զինքը դատապարտելու :

Ուզուն — Հասան նորէն նայեցաւ խոռոչին մէջ :

Դատապարտեալը հսկահասակ մէկն էր . իշխանը՝ զանիկա գետնին վրայ տարածուած և կապերով պըրկուած և կաշկանդուած տեսնելով՝ որով չէր կրնար իւր անդամները շարժել, և անարգ միջատներու մատնուած, որք մի քանի ժամուան մէջ անոր աչքերն ու շրթունքները պիտի լափլիզէին, և մէկ կողմանէ ալ թըշուառին արձակած տխուր հառաչանքները լսելով՝ սիրտը յուզեցաւ, 'ի դուժ շարժեցաւ . և մինչ զեղկելին բանտէն ազատելու հրաման տալու մասին կը վարանէր, Բանայիա իշխանին մօտենալով՝ ըսաւ .

— Ներէ՛, ներէ՛ այս թշուառին :

— Իմացած ես, ասիկայ վտանգաւոր մարդ մ'է, զարհուրելի աւազակ մը :

— Վնաս չունի, թո՛ղ բոլորովին վնասակար ըլլայ, դարձեալ կը կարծեմ՝ թէ այս կերպով արարած մը տանջելը՝ մարդկութիւնը թշնամանել և նախատել է : Արդէն իսկ մինչև ցարդ կրած տանջանքովս իւր մեղքը քաւած է . . . տէ՛ր, անցեալ օր խոստացաք՝ որ իմ ընտրութեամբս ուզած մէկ շնորհքն ընէք ինձ . հիմայ քեզնէ այս մարդուն կեանքը կը խնդրեմ :

— Ամբարիշտներն ազատել անխոհեմութիւն է :

— Ո՞վ կ'ըսէ քեզի, տէ՛ր, թէ այս մարդուն հոգւոյն բոլոր բարի զգացումներն իսպառ շիջած են :

— Ի՞նչ պիտի ընէ այնպիսի երկրի մը մէջ՝ յորում ամեն ոք իրմէ կը զարհուրի և խոյս կուտայ : Արդեօք

վերջին իւր գողութիւնները պիտի չ'չարունակէ՞. ուրիշին բրինձն և արմաւը պիտի չ'յափշտակէ՞ :

— Ես դանիկա այս քաղաքին մէջ պիտի չ'թողում. հոն ամեն մարդ անոր անունէն կը վախնայ. եթէ այս արարածն ինձ չ'նորհես՝ հետս պիտի տանիմ, որպէս զի ծաղիկներս և թռչուններս խնամէ. քու գերւոյդ գերին պիտի ըլլայ : Օրէնքս, որ ըսել է քու մերդ օրէնքը, ներողութեան պարտք կը դնէ վրաս. կուզեմ որ անոր ներէք :

— Կը ներեմ և զանիկա քեզի կը չ'նորհեմ, Բանայիա՛. բայց փութանին սա՛ պատուէրը միշտ յիշէ՛. «Չարը բնաւ բարի չ'ըլլար, նոյն իսկ անոր բարիք ընելով ալ : »

Իշխանը հրամայեց՝ որ բանտարկեալն աղատեն, և հետևեալ օրն Արգի պալատը բերեն՝ ճարտար բժշկի մ'անոր վէրքերը դարմանել տալէ յետոյ : Ուզուն—Հասան Գարա — Գօշն ալ ջնջեց, ինչպէս զնորսն զօցել տուած էր :

Սարա այն օրը մանկամարդ աղջկան վրայ ուրիշ ատեններէ աւելի լաւ աչքով նայեցաւ. շնորհակալ եղաւ անագորոյն թիւրքմէն դատաւորաց և դահճաց վրայ յաղթութիւն տանելուն համար :

Հետևեալ օրը Բանայիա անհամբեր իւր պաշտպանելոյն դալտտեան կ'սպասէր :

Նախորդ օրուան բանտարկեալը նետրդապատ և տիտանեան սև թիւրքմէն մ'էր. այլանդակ գլուխը գանգրաւոր մազերով ծածկուած ըլլալով՝ ա՛լ աւելի մեծ կ'երևէր : Տարօրինակ բան. այս հսկայն սիրուն նայուածք ունէր. իբրև վտանգաւոր աւաղակ ներկայացուած մարդը՝ գրեթէ երկչոտ կը թուէր և իւր կեանքն աղատող աղջկան առջև կը դողար :

Հնկայն պալատը բերուելով Բանայիա հարցուց ա-

նոր
գօժող Ուր ծնած էս

— Կուրկան գետոյն քով :

— Անունդ ի՞նչ է :

— Թո՛ղ որ անունս մոռնամ. հիմայ ուրիշ մարդ եղայ. եթէ կ'ուզես, զիս այն գետոյն անուամբ կոչէ՛ ուր մայրս՝ պզտիկ եղած ատենս զիս կը լուանայր :

— Գիտե՞ս, ըսաւ Բանայիա մեղմաձայն, որ Ուզուն

— Հասան իշխանն զքեզ ինձ չ'նորհեց :

— Գերիդ ըլլալու համար նորա հրամանաց պէտք չ'ունիմ. սոսկալի մահուան դատապարտուած էի և դու զիս ազատեցիր : Հաւատացիր՝ որ կուրկանի սիրտը բուրրովին ապականուած չ'էր, և թէ յանցանքէ աւելի թըշուառութիւնը զանիկա Պուխարայի աղջկան ընդհանրեալ մէջ դրած էր : Այս գեղեցիկ խորհրդածութեանդ համար հոգիս քեզ կը նուիրեմ . . . : Ձիս ուր որ ալ զրկել ուզես պիտի երթամ. եթէ թշնամի ունիս՝ գլուխը պիտի ջախջախեմ. եթէ թագի կը ցանկաս, պիտի երթամ թագաւորի մը ճակտէն զայն առնելոյ :

Կուրկանն ալ Ուզուն — Հասանի գերդաստանին հետ Պուխարայէն մեկնեցաւ. ճամբան միշտ Բանայիայի ձին կը հոգար. անոր վրայ ժիրաժիր խնամօք կը հըսկէր, չ'էր հանդուրժեր որ ուրիշ մէկը ծառայէ անոր : Չերմ և գրեթէ խորհրդաւոր երախտադիտութիւն մը կ'զգար առ Բանայիա : Այս քրիստոնեայ մանկամարդ և գեղեցիկ աղջիկը, որոյ անունը կուսութեան և սրբութեան պսակով պսակեալ էր, կուրկանի սիրոյն առարկայ եղաւ : Տեղուն — Հասան՝ իւր անթիւ ծառայներէն այնչափ չէր պաշտուէր՝ որչափ Բանայիա իւր մէկ հատիկ գերիէն : Ամենագեղեցիկ ծաղիկներ կը փթթէին իւր բուրաստանին մէջ, իւր աղաւնետունը թռչուններով լի էր. սպիտակ ջորիները՝ որոց վրայ կը հեծնէր շրջագայութեան ելած ժամանակ՝ մեծ խնամօք կը դարմանուէին : Կուրկան զանազան զբաղմունք ունենալով հանդերձ՝ միշտ պատրաստ էր իւր տիրուհւոյն նշանին և ձայնին հնազանդելու : Խոնարհութեամբ շան պէս ա-

նոր ետևէն կ'երթար . գործ չ'եղած ատեն չէր երևեր .
խակ երբ իրեն գործ մը յանձնուէր , երջանիկ կը համարէր
ինքզինք , զի կարող կ'ըլլար իւր երախտագիտու-
թիւնը ցուցնելու :

Գործութեան համար երբեմն այս դատապարտուած
մարդն ել՛է Ասիոյ բոլոր գանձուց մէջ գտնուէր , մըտ-
քէն անգամ պիտի չ'անցունէր մէկ մարդարիտ կամ մէկ
ոսկի գողնալու խորհուրդը :

Կուրկան շատ ժամանակէ 'ի վեր Բանայիայի գաղտ-
նիքը գիտէր . Էջէրիֆի՛ այն գաղտնիքը չ'կրնալ գու-
շակելը՝ կուրկանի սաստիկ ցաւ եղած էր : Հսկայն մէկ
կողմանէ կ'ատէր գլխէրիֆ՝ որովհետև յանգէտս Բանա-
յիայի ցաւ պատճառած էր . միւս կողմանէ ալ կը մե-
ծարէր , վասն զի Բանայիա կը սիրէր զանիկա : Եթէ
կուրկան Էջէրիֆի վնաս հասցունէր՝ Բանայիայի մահու-
ւան պատճառ եղած կ'ըլլար . սակայն տեսնել՝ որ իշ-
խանն ուրիշի սիրահարած է , միջնդեռ մանկամարդ աղ-
ջիկն իւր հետ ամուսնանալ կ'ուզէ , այս ալ կուրկանի
քրէական և աններելի յանցանք կը թուէր :

Ամեն երեկոյ , այն ժամուն՝ յորում՝ Բանայիա ան-
տառակներուն մէջ փանդիւռն կը զարնէր , կուրկան ըս-
տուերին մէջէն գաղտնի դեռահասակ աղջկան երգերը
մտիկ կ'ընէր : Բանայիա՝ որ իշխանին համար կ'երգէր ,
չ'էր տարակուսեր՝ որ այս խոնարհ ունկնդիրն ալ քանի
մը քայլ իրմէն հեռի կը գտնուի :

Երբ Բանայիա յարտասուտ հարաւ Էջէրիֆի գաղտ-
նիքն և անոր նշանածին անունն իմանալով՝ բնաւ չ'զար-
մացաւ զկուրկան քովը տեսնելուն վրայ : Կը ճանչնար
իւր դերուոյն անձնանուիրութիւնը . միթէ ամեն անգամ
կուրկանի պէտք ունեցած ժամանակ, սա քովը չէր գրտ-
նուէր . ճշմարիտ է՝ որ ուրիշ ատեն միայն իրեն տրուած
հրամանները կը կատարէր . բայց կարծես՝ թէ այս ան-
գամ կուրկան իրրև բարեկամ և խորհրդակից վարուե-
ցաւ Բանայիայի հետ . աղջիկն ալ չ'ղայրացաւ նորա դէմ ,

մանաւանդ թէ ուրախացաւ իսկ՝ յուսահատութեանը մէջ
իրեն վշտակից ունենալուն համար :

Կուրկան տակաւին վայրենի կըքեր ունէր . կ'սպա-
սէր՝ որ Բանայիա իրեն սա՛ հրամայէ .

— Զիս անարգողն և չուզողը սպաննէ՛ :

Բայց Բանայիա քրիստոնեայ էր . և երբ կուրկան
յերկիր խոնարհած հարցուց իրեն .

— Ի՞նչ պատիժ պէտք է կրէ Էջէրիֆ ,

Բանայիա՝ իւր այտերուն վրայ հոսած յորդ արտա-
սուքը սրբելով՝ տխուր ձայնով պատասխանեց .

— Քան զիս առաւել սիրէ՛ և մեծարէ՛ զանիկա .

Հսկայն զարմանալով և Բանայիայի զգեստուց ծայ-
րը պագնելով՝ ըսաւ .

— Լսելը հնազանդիլ է :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

ԿՐԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Մեր նկարագրած տեսարաններէն գրեթէ մէկ աւստի վերջը՝ արագընթաց երիվարի վրայ նստած սուրհանդակ մը՝ Գարա — Եուլուքի մահուան լուրը բերաւ Ուզուն — Հասանի , որոյ աղագական ըլլալով՝ Գարա — Սիւլիւքիւ կոչուած ցեղին բնակած երկիրներն իբրև ժառանգութիւն Ուզուն — Հասանի պիտի անցնէին :

Այս գէպերը պատահած թուականէն շատ առաջ , երբ Մուրատ Բ. Գարամանի իշխանաց ցեղը նուաճելու ձեռք զարկաւ , երեք թիւրքմէն էմիրներ՝ որք էին Ագ — Գոյունլու ցեղին գլխաւոր Տիգրանակերտի էմիրը , Գարա — Սիւլիւքիւ ցեղին գլխաւոր Մարաչի էմիրն և Ատանայի էմիրը , յանձն չ'առին այս յաղթականին հնազանդիլ : Ժամանակ անցնելով երբ թիմուր — Լէնկ և Մուրատ Բ. իրարու գէմ պատերազմեցան , թաթարաց վայրենի տէրը՝ Սուլթանին կալուածները Պարսկաստանի կողմը ընդարձակուելէն զարհուրելով՝ թիւրքմէն իշխաններն իրենց կալուածոց մէջ վերահաստատեց և անկախութիւննին ապահովեց : Այլ աւելին ըրաւ . պահանջեց՝ որ Սուլթանն այն իշխաններէն միոյն տարեկան տուրք վճարէ՝ Մուրատին և իր յաջորդաց հպարտութիւնը ցածցնելու համար . Սուլթանը խոստացաւ և վրձարեց ալ , բայց վրէժխնդրութեան համար ուզեց՝ որ Տրապիզոնի կայսրները զինքն աւատապետ ճանչան և տուրք վճարեն :

Գարա — Եուլուքի մահուան լուրն Ուզուն — Հասանի համար խիստ մեծ կարևորութիւն ունէր : որովհետև մեռած իշխանին ժառանգորդն ինք ըլլալով՝ անուհետև Մէհէմէտ Բ. իրեն պիտի հատուցանէր ձեռք հաղար զարդարեալ թամբերու , հազար սանձերու և հազար պախուցներու տուրքը . վերջապէս , Ուզուն — Հասանի համար ահեղ վրէժխնդրութեան մը ժամը կը հնչէր , որ ինքնիշխան կը կառավարէր Ագ — Գոյունլու ցեղը , և այս ցեղին հետ պիտի միացունէր նաև Գարա — Սիւլիւքիւ ցեղն ալ . Էշէրիֆ հորմէն աւելի ուրախացաւ այս յաջող բաղդին վրայ , որովհետև կարծեց թէ պիտի կարենայ Աննա կոմնենոսի հետ ամուսնանալ և աղաչեց իր հորը՝ որ իշխանութեան սահմաններն ընդարձակուելուն հանդէսը կատարեն :

Էշէրիֆ և Ուզուն — Հասան ուզեցին որ այս գէպքին մէջ թիւրքմէն սովորութեանց պարզութիւնն ըստ Սուլթաններուն շքեղութեանց հետ միացունեն :

Այն ատենները թիւրքմէնիստան շատ հաշակաւոր եղած էր : Ոքսոսի հարաւային կողմը հաստատուած ըլլալով՝ Պիւէք քաղաքէն մինչև կասպից ծովը կը տարածուէր . կային իւր մէջ բարձր լեռներ և ամուր գալտորայներ , իր հովտաց արգասաւորութիւնն ալ կուրկան և Աթթաք գետերէն էր , որք իրարմէ մէկ մարասխ հեռաւորութեամբ կը հոսին : Այս երկու գետոց եզերքները կը կանգնուէին թիւրքմէնաց թաղեայ վրանները . ձիերն ալ հոն կ'արածէին : Թիւրքմէնիստան ունէր նոյնպէս քաղաքի պէս ընդարձակ երկու օստիս՝ որոց անուններն էին Մար և Շարք : Զօրաց բանակներն Ագ — Սագալ կոչուած գլխաւորի մը հրամանատարութեան ներքև կը գտնուէին : Իրկիրն իշխանն ալ կը դատէր և գժուարին խնդրոց մէջ վճիռ կ'արձակէր :

Երբ Ուզուն — Հասանի իշխանութիւնն ընդարձակուելուն առթիւ կատարուելիք հանգիսին ըտրը տարածուեցաւ , իսկոյն իշխանին հպատակները կորկանի

և Աթթաքի եղբրքներէն գունդագունդ եկան ժողովեցան : Դաշտը վրաններով ծածկուեցաւ . ճամբայները ճանապարհորդներու բազմութենէն գոցուեցան : Երաժիշտք իրենց ներդաշնակաւոր նուագարանները կը հընչեցունէին ճանապարհին երկայնութիւնը կարճեցնելու համար : Կրակ վառելով՝ ոչխարներն ամբողջ կը խորովէին և զօրացուցիչ ըմպելեաց տակառները կը դատարկանային :

Ծօղախաղացութենէ՝ (Յէրէր) որոյ մէջ ամենէն յաջողակն էր Էշէրիֆ , և ձիարշաւէ վերջը՝ Ուզուն — Հասան ուղտերու կռիւ մը ներկայացոյց :

Երիտասարդ պատերազմիկներուն ըմբշամարտութեան մէջ ալ դարձեալ ամենէն քաջն Էշէրիֆ հանդիսացաւ : Ժողովուրդն Էշէրիֆի շուրջը խոռնեցաւ և միաբերան աղաչեց Ուզուն — Հասանի և երիտասարդ իշխանին՝ որ դժիւրք մէնիստան Մէհէմմէտ Բ. ի լուծէն ազատելով՝ անկախ ընեն : Էշէրիֆի տրուած գովեստներն Ուզուն — Հասանի սիրտն հստատութեամբ լեցուցին . Ուզուն — Հասան չ'էր համարձակեր բոլորտիքը շարուած իշխաններուն պատասխանել . իսկ Էշէրիֆ եռանդուն և կրակոտ կերպով աղաղակեց .

— Հայր իմ և իշխանք, երկայն ատենէ 'ի վեր փառք վաստկելու առիթ կը փնտռեմ . հրաման տուէ՛ք ինձ որ հիմայ նպատակս յաջողցունեմ :

Երիտասարդին այս խօսքին վրայ ամենուն դէմքն ալ ուրախութեամբ լեցուեցաւ :

— Չէի գիտեր այդչափ փառասէր ըլլալդ , պատասխանեց Ուզուն — Հասան . ինձ այնպէս կը թուէր՝ թէ բաւական ժամանակէ հետէ զինուց փառքն արհամարհած կամ մոռցած ես :

— Կը խոստովանիմ՝ որ այսօր կրնամ մեր բազդը փոխել : զՆնա Կոմսենոս ինձ կնութեան առնուլ կ'ուզեմ, և թերևս Դաւիթ կայսրը փափաքս լեցունէ՛ եթէ զինքն իւր իշխանութեան մէջ ալ աւելի հաստատեմ :

Դէպ 'ի Տրապիզոն ըրած ճանապարհորդութեանս առան հասկցայ՝ որ Սուլթանին լուծը կոմսենոսեանց յաջորդին վրայ կը ծանրանայ . Մէհէմմէտ՝ Պրուսա և Կոլիա աւերելէն վերջն աչքը Տրապիզոնի վրայ տնկած է Դաւիթ կ'երկնչի և կը զարհուրի : Սուլթանը չ'կրնար հանդուրժել՝ որ իւր կառավարութեան մօտ այնպիսի հզօր իշխանութիւն մը գտնուի՝ որ Գարամանի հետ միաբանի անկախութիւն ձեռք բերելու համար : Մեհէմմէտ Բ. ի յարձակման չ'սպասեմք . օն , վազենք յառաջ և նախայարձակը մենք ըլլանք : Թիւրք մէն քաջաց դուրս կանդնիմք՝ որք մեզնէ պատերազմ կը խնդրեն . վիէննայի և ճենովայի ծովային զօրքերը մեզի օգնութեան կանչենք, Պարսկաստանն ալ ոտք հանենք , որուն ընդ հուպ պիտի սպառնայ Մէհէմմէտ . Թիմուր — Լէնկի տեսած զարհուրելի երազն իրականացնենք , և իւր մեռած ձեռքէն ինկած թաղաւորական գաւազանը բարձրացունեմք :

Կրկին յաջող առիթ կը ներկայանայ մեր առջև : Ահա հաւասիկ այն թուականը՝ յորում Տրապիզոնի կայսրն իւր սուրբը պիտի վճարէ : Պատգամաւորութիւն մը զրկեցէ՛ք 'ի Կոլիա , և յանուն ձեր իմացուցէք Մէհէմմէտ Բ. ի որ Գարա — Եուլուքի վճարելիք տուրքերն այսուհետև ձեզ զրկէ , և յանուն մօրեղբօրս՝ որ սա՛ ալ Մէհէմմէտ Բ. ի երկու հազար ոսկի հատուցանելէ ազատ լինի :

— Չեւնարկութիւնը յանդուգն է , պատասխանեց Ուզուն — Հասան :

— Բոլորովին տղայական է , ըսաւ Սարա : Ուզուն — Հասանի մայրն աղդու խօսքերով իշխեցուց իւր որդւոյն գերդաստանին թշուառութիւնը , ցուցուց անոր սոսկալի ողբերգական տեսարաններու յաջորդող խաղաղութիւնը . աղաչեց զիշխանը՝ որ սուղ դնուած խաղաղութիւնը կորսնցնելու չ'դիմէ :

— Ինձ մտիկ ըրէ՛ , ըսաւ Սարա իւր որդւոյն , Դաւ .

Թի մի՛ վստահիր, նա որչափ որ բարկացած և ամչցած ալ է զՄէհէմէտ իրեն աւատապետ ճանհնալուն վրայ, բայց ինքն իրմով բանի մ'ալ պիտի չ'ձեռնարկէ իւր գերդաստանը մեծցունելու համար, Դողալով կը սարսուի իւր քայլերուն տակ այն հողը՝ որոյ վրայէն կը քալէ ։ Տըղայ մ'անգամ կրնայ զանիկայ գահընկէց ընել ։ Դաւիթ ուժ չ'ունի. ասիկա կ'իմանաս ո՛ր տոնն որ իւր բաղդին համար ինքզինքը արկածից մէջ գահավիժես ։

Անկեղծութեամբ կը սիրեմ զԴաւիթ . 'ի միասին սընած և մեծցաք եմք . սակայն տարակոյս չ'կայ՝ թէ իմ որդիս եղբորմէս աւելի սիրելի է ինձ ։ Գերդաստանին հողին ո՛չ թէ Դաւիթ՝ այլ Հեղինէ կը համարուի . սյս կինը վեհանձն, աղնիւ և կորովամիտ է . Ողջեց զԴաւիթ՝ որ ֆալօ — Յովհաննէսի արիւնաթաթաւ գահը չը յափշտակէ . դարձեալ առաջին անգամ Դաւթի ըսողն ինք պիտի ըլլայ՝ թէ դու Մէհէմէտ Բ. ի դէմ պատերազմելու անբաւական ես ։

— Մայր իմ, միայն մեք պիտի չ'պատերազմինք Մէհէմէտի դէմ ։

— Տղա՛ս, վիէննայի օգնութեան վրայ կը վստահիս . վիէննա բարձի թողի ըրաւ զկոստանդին՝ երբ Օրխանի թնդանօթները Կ. Պօլսոյ պատնէշներուն դէմ ուրոտացին ։ Ճենովայի՞ վրայ . Տօրիայի աղջիկը Սեւոյն մէջ գերի է ։ Լիսբոսի, Գոսի և Գիօի կըղզեաց իշխաններուն վրայ . անոնք ալ տիտղոսներնին ձըգեցին և բնաւ ցուական պիտի չ'պատրաստեն ։ Դուք ձեր զօրութիւնն անգամ մ'աչքերնուդ առջև բերելով՝ լաւ կըսեցէք, ձեզնէ զատ ուրիշին մի՛ վստահիք երբէք ։

— Կանացի խորհուրդ կուտաս ինձ, ըսաւ Հասան ։

— Հաւատա՛ որ տուած խորհուրդս փառք վաստիելու հետամուտ եղող երիտասարդի մը խորհուրդէն աւելի մեծ արժէք ունի ։ Զգուշացիր, Հասան, մայրական գութս կ'ստիպէ զիս որ զքեզ խրատեմ . ե-

Թէ Էշէրիֆի յանդուգն բաղձանաց զիջանիս, շատ ուշատ հաւանական է՝ որ սոսկալի թշուառութեանց ենթարկուինք ։

Ուզուն — Հասան վայրկեան մը լռեց . Սարայի իմաստութիւնը լաւ կը ճանչնար . ուստի չ'էր ալ կրնար բողբոջին չ'անսալ նորա խորհրդոց . Եւ մինչդեռ Ուզուն — Հասան կը մտածէր և որոշումն ընելու մասին կը վարանէր, Էշէրիֆ ընկերակցացը հետ չափազանց եռանդեամբ կը խօսէր, և

— Թիւրքմէնիստան ազա՛տ պիտի ըլլայ, տուրք պիտի չ'վճարէ՛, պատերա՛ղմ՝ Մէհէմէտ Բ. ի դէմ գոչող ձայներ լսուեցան ամեն կողմէ ։

Ուզուն — Հասան մօրը ձեռքէն բռնելով՝ ըսաւ .

— Ժողովրդոց ուզածը կը լսե՛ս ։

— Գիտեմ, պատասխանեց Սարա, որ դուք պատերազմի կը ցանկայք . այլ ես կը զարհուրիմ՝ Այսպիսի կըռուոյ համար բնաւ պատրաստութիւն տեսնուած չէ ։ Պատերազմ՝ հրատարակելէ առաջ նայեցէ՛ք՝ թէ Սուլթանն ինչ պատասխան կուտայ ։

— Լա՛ւ, Մէհէմէտի դեսպան մը պիտի ղրկեմ. Էշէրիֆի ուսին վրայ յեկելով՝ ահաւասիկ այս պիտի ըլլայ ղրկելիք դեսպանս, ըսաւ ։

Այս լուրն իսկոյն խաժամուժ ամբոխին մէջ տարածուեցաւ, երիտասարդ և ծերք անպատում ուրախութեամբ ողևորեցան և քաջալերուեցան ։ Ամենքն 'ի միասին անպատճառ պատերազմ կուղէին՝ առանց երբէք մտածելու՝ թէ արդեօք պատերազմելու բաւական զօրութիւն ունի՞ն ։

Մի քանի աւուր մէջ Էշէրիֆի եւ իւր ընկերաց ճանապարհորդութեան պատրաստութիւնը լմնալով, դէպ 'ի Մինօպ ճամբայ ելան, ուրկէց նաւ պիտի հեծնէին ։

Նաւարկութիւնը կարճ եւ գիւրիին եղաւ . երբ հեռուանց զԿ. Պօլիս նշմարել սկսան, Էշէրիֆ նաւուն յարկին վրայ յոսին կանգնած անհամբեր կ'սպասէր՝ որ ա-

րեւելեան սքանչելեաց քաղաքը լաւ մը տեսնէ կամ որոշէ : Բաղաքն արեգական ՚ի մուտս խնարհած ատեն , իւր բոլոր շքեղութիւններով կ'ընդհանրէ աչաց առջեւ կը ներկայանայ :

Ճանապարհորդները հեազհետէ կ'Պօլսոյ կը մտնենային . զիրենք տանող ցուկանաւին արագութեամբ կրցան Բիւզանդեան կայսրութեան մայրաքաղաքին հըրաչալիքները լաւ մը դիտել . տեսան նաւահանգիստներն և արուարձանները : Կղզիներով լեցուն լճի նմանող Մարմարայի ծովը պատառող անհամար տուազաստները նկատելէ ամենէին չ'էին ձանձրանար : Նաւերը , ցուկանաւերն և նաւակները շարունակ մէկ եզրէն միւսը կը տանէին վաճառքներ և երթևեկողներ , զորս Յունաստանի ներքին և արտաքին վաճառականութիւնն էրուպա , Ասիա և Ափրիկէ կը փոխադրէր : Բաղաքական և զինուորական կեանքը Միջագետքէն , Ասորեստանէն և Անատոլուէն հեռանալով՝ եկած կ'Պօլսոյ մէջ կեդրոնացած էր :

Կ'Պօլսոյ իւր ամենաքանչ դիրքովն աշխարհի թագուհին ըլլալու սահմանուած էր : Աստուած զայն երեք ծովով շափիւղեայ գօտուոյ նման պատելէ վերջը՝ իւր տէրերն ալ մարդկային հնարքով գեղեցկացուցած էին :

Էնչէրիֆ կ'Պօլսոյ վրայ իրաւամբ զարմանալով՝ կը հասկնար՝ թէ Մէհէմմէտ Բ. անոր գեղեցկութեան համար գրաւած էր զայն : Ութն հարիւր մենաստաններուն զանգակատունները , մինչև յերկինս բարձրացեալ Պալքէրնի պալատաց գմբէթը , Բանթաբսիօնի աշտարակները , Այա — Սօֆիայի գմբէթը , Կենդրոնի անթիւ կամարները , Պրոպոնտոսի վրայ Յուլիոսի և Թէոդոսի շինած նաւահանգիստներուն հոյակապ թումբերը , ամփիթէատրօնի կամարներն և Պիւքօլեանի պալատին մարմարինոնայ պատերը զարմացուցին ապշեցուցին զէնչէրիֆ :

Կ'Պօլսոյ ցամաքն ելնելուն պէս՝ երիտասարդ իշխանն ուզեց Մէհէմմէտ Բ. ի այցելութիւն մ'ընել :

Սուլթանը կը սիրէր իր արքունեաց մեծասպաս վառաւորութիւնը ցուցնել . և կամեցաւ որ Թիւրքմէն երիտասարդն իւր զօրութեան և շքեղութեան վրայ մեծ գաղափար մ'ստանայ : Այն պալատան մէջ ընդունեց զէնչէրիֆ՝ զոր նոր շինել տուած էր , և պատերն անուշահոտ եղևին ծառերէ էին : Այս պալատը , կարծես՝ թէ վրանի գեղեցկութիւն և վայելչութիւն ունէր , ամեն կողմէ օդ և լոյս կը թափանցէին հոն , սանդուղները գեղեցկանկար ծաղիօք ծածկուած էին : Պալատին բոլոր շքեղութիւնն ամբողջապէս երևցաւ , երբ էնչէրիֆ նորա դռնէն ներս մտաւ :

Իշխանն և իւր բարեկամներն երկու կարգի բաժնուած եէնիչերիներու մէջէ անցան . սրահներն և գաւթներն երիտասարդ մանկաւիկներով լեցուն էին , վերջապէս , այն սրահին խորը՝ ուր կը գտնուէր Մէհէմմէտ Բ. եէնիչերիներէն զատ՝ որք շքեղ համազգեստներ հագած էին , ոտքի վրայ կեցած էր հանդարտ և անշարժ , Գափու — ալալն (սպիտակ ներքինեաց գլխաւորը) , որ մանկաւիկներուն խնամակալութեան պաշտօնն ունի . միանգամայն ապարոջակիր և գանձապահ ալ է : Գափու — ալալն հեռի չէին արքունի սենեկապետը կամ խոս — իր — ալալն , զինակիրը կամ Սելահարը , և Չոբապար — ալալն : Վէզիրներն և իւլէմաները Մէհէմմէտ Բ. ի անձին շքեղ վառաւորութիւնը ցուցնելու սահմանեալ պատկառելի ժողովները կը կազմէին :

Սուլթանը յաղթանդամ և կազմն արիւնային էր , բարկութիւնն իւր արեան հետ երակացը մէջ կ'եռայր . Առիւծու և ցուլի նման կարծ և գնդերաւոր պարանոց ունէր , ճակատը լայն և սպիտակ : Իւր բոլորչի գոբոս ցցուած և կայտառ աչքերը սաստիկ բարկութիւն կը ցայտեցունէին կամ քաղցրութեամբ կը լեցուէին . յօն

քերն աչքին վրայ բարձր և կոր կը բարձրանային, բերանը կարմիր էր, մօրուքը սև ու խիտ, քիթը կոր և մինչև շրթունքներն երկնցած:

Մէհէմմէտ Բ. իւր կերպարանքը վեհ երեցունել կ'ուղէր հանդերձի շքեղութեամբ: Իւնթի ապարօշ կը փաթտէր գլուխը, բայց ոսկւով և շքեղ գարդմանակներով զարդարուած: Իւր ղէնքերը պատուական քարերով կը փողփողէին. Խֆիան ալ սպիտակ աքսի մորթով դրուագեալ էր:

Երբ Մէհէմմէտ Բ. ղէշէրիֆ տեսաւ՝ որ երիտասարդութեան հետ միանգամայն գեղեցկութիւն ալ ունէր, քաղցր հայեցուածք մ'առաւ: Բայց յետոյ երբ երիտասարդը ձայնը բարձրացունելով՝ պահանջեց՝ որ իւր մօրեղբայրը Դաւիթ կոմսենոս, Տրապիզոնի կայսրն երկու հազար ոսկոյ տարեկան տուրքէն ազատ ըլլայ, թագաւորը սաստիկ զայրացաւ և ձեռքը դաշոյնին վրայ տարաւ:

Էշէրիֆ՝ Մէհէմմէտի կատաղի բարկութիւնը չ'ընշմարել ձեացունելով՝ խօսքը շարունակեց.

— Դարձեալ, աղնիւ Սուլթան, Գարա — Եուլուքի մահը ձեզ իմացնելու պաշտօնն ունիմ, որոյ միակ ժառանգորդն է հայրս Ուզուն — Հասան:

— Քու գերդաստանիդ յաջողութեան և երջանկութեան վրայ կ'ուրախանամ, ըսաւ Մէհէմմէտ, և կ'սպասեմ՝ որ պատգամաւորութեանդ բուն նպատակը բացատրես ինձ:

— Քու բարձրութիւնդ, պատասխանեց Էշէրիֆ, Գարա — Սիւլուքիւ ցեղին գլխաւորն եղող Գարա — Եուլուքի ձեռք հազար զարդարեալ թամբերու, սանձերու և պախուցներու տարեկան տուրք մը կը վճարէր. . . : Եուլուքի մահուամբ հայրս անոր ինչքերուն ժառանգորդն եղաւ. ահա՛ հիմայ քեզի կը հարցունեմ՝ թէ ճշդիւ պիտի հատուցանե՞ն այն տուրքը Ուզուն —

Հասանի՝ որոյ այժմ պարտական ես.

Մէհէմմէտի աչքերէն կրակ ցայտեցաւ, բազուկն սպիտակ ներքինեաց գլխաւորին կողմը տարածուեցաւ. տեսակ մը մոնչիւն արձակեց. սակայն՝ երիտասարդ իշխանն իրեն ինչ վտանգ գալն իմանալէ առաջ, Սուլթանըն իր սովորական հանդարտութիւնը գտաւ և քաղցր ձայնով Էշէրիֆի պատասխանեց.

— Գնա՛ խաղաղութեամբ, առաջիկայ գարունէն առաջ՝ ես անձամբ պիտի բերեմ հօրդ իմ պարտքս:

Յետոյ Մէհէմմէտ՝ հաւատարիմ տաճկական հիւրասիրութեան, հրամայեց՝ որ երեկոյեան խնջոյից համար ամեն բան պատրաստուի: Երգիչները, երաժիշտներն և ամեն տեսակ կաքաւիչներ իրենց ճարտարութեամբ մրցեցան իրարու հետ՝ Ուզուն — Հասանի որդին զբացնելու համար: Էշէրիֆ՝ այս հիւրասիրութենէն ապահովեալ, սիրտն ուրախութեամբ և հպարտութեամբ լեցուած, կարծեց՝ թէ ա՛լ բոլորովին Տրապիզոնի կայսրութիւնն ազատեց և թիւրքմէնիստանի մեծութիւնը հիմնեց:

Էշէրիֆի մեկնելուն օրը, Մէհէմմէտի առաջին պաշտօնեայն՝ որ միայն գուշակած էր իւր տիրոջ գաղտնի նպատակը, հարցուց Մէհէմմէտի՝ թէ արդեօք իրեն՝ Ուզուն — Հասանի որդւոյն ցցուցած մտերմական ցոյցերը կրնան արդիւլ զինքը՝ միտքը դրած խորհուրդները յաջողունելէ:

— Լուէ՛, ըսաւ Մէհէմմէտ պաշտօնէին, եթէ մօրուքիս մէկ մազը գաղտնիքս իմանայր՝ կը խէլի զայն.

Պ Լ Ո Ւ Խ Ե

ՄԵՆԷՄԻՆՍԻ ՊԱՐՏԱԸ

Քանի մ'ամիս վերջը՝ ձմերան մէջ, Մէհէմմէտ երկու հարիւր յիսուն նաւերէ բաղկացեալ նաւատորմի մը տեսչութիւնը Մահմուտ փաշայի յանձնեց, զոր սա ալ Տրապիզոնի պարսպաց տակ պիտի խաղացունէր՝ Էջլէրիֆի ամբարտաւան խօսքերուն Սուլթանին պատասխանը դաւիթ կոմնենտի տանելու համար :

Այս ատեններս Մէհէմմէտ ութսուն հազար հետեւակազորաց և հազար հինգ հարիւր եէնիչերեաց գլուխը կանգնած՝ կայծակի արագութեամբ Ասիոյ հովիտներէն պիտի անցնէր : Միտքը դրած էր Սուազի կողմէն մինչև Հայաստանի մօտ երթալ և Տրապիզոն և Պարսկաստան կտրել :

Սուլթանն առանց կասելու շարունակ կը յառաջէր . Մահմուտ փաշա ալ Սինօպի տիրելու կը ջանայր, այս ծովեղերեայ կարթագինէն, որոյ վերջին իշխանուհին Մուրատ Բ. ի սիրելի կիներէն մին եղաւ . Սինօպ առաջին անգամ՝ Լուկուլլոսէն աւերեցաւ քանդեցաւ, այս անգամ ալ չ'էր կրնար կանգնիլ իւր անկումէն . Սինօպի այն ատենի իշխանը մի միայն հնազանդելով կրցաւ ազատութիւն ձեռք բերել, եւ գնաց Ենիշէհիը քաջուեցաւ, որ Սինօպի փոխարէն տրուած էր իրեն :

Երբ Սուլթանին զորածողով լինելուն լուրն Ուզուն — Հասանի ականջն հասաւ, 'ի սկզբան չ'ուզեց հաւատալ թէ Մէհէմմէտ Էջլէրիֆի խրոխտ պատգամաւորութենէն վրէժ առնլոյ համար պատերազմի կը պատրաստուի :

տուի : Բայց յետոյ երբ իմացաւ՝ որ Մահմուտ փաշայի նաւատորմը ծովեղերեայ քաղաքներն աւերելով՝ Տրապիզոնի դիմաց եկած կեցած է, սկսաւ սաստիկ զարհուրիլ : Եթէ կանուխէն Պարսկաստանի նիզակակցութեան վրայ կը վստահէր, այս օգնութիւնն ալ ձեռքէն կը հանէր, որովհետեւ Մէհէմմէտ՝ ազամագիտական արուեստին մէջ ունեցած չափազանց ճարտարութեամբ Պարսկաստանի ճամբան կը կտրէր : Ուզուն — Հասան յառաջելու կամ յետս նահանջելու անկարելիութեան մէջ կը գտնուէր . երկաթեայ պարիսպ մը կը շրջապատէր իւր սահմանները, Բիւզանդիոյ Սուլթանին ահեղ բանակն և ոչ մէկ յոյս կուտար իրեն՝ ճակատ առ ճակատ պատերազմելով անոր յաղթելու : Որ քան զոր վտանգը կը սաստկանայր : Իւրաքանչիւր իրիկուն պատգամաւորներն ամրոցի մ'առնուելուն, բանակի մը ջարդուելուն և քաղաքի մը քանդուելուն լուրը կը բերէին : Մէկ շաբաթ վերջն ալ թիւրքմէնիստան բոցերու մէջ պիտի այրէր : Այս վերջին ճգնաժամուն, Սարա իշխանուհին առտու մը իւր որդւոյն սենեակը մտնելով՝ ըսաւ .

— Երբեմն ինձ հաւատալ չ'ուզեցիր . հիմայ կը տեսնես՝ որ Մէհէմմէտի երեք պարտքերն են եղեր արիւն, երկաթ և հուր :

— Աղէկ գիտեմ . բայց ի՞նչ ընեմ, ի՞նչ միջոց գտնեմ :

— Պէտք է հնազանդիս

— Երբէք :

— Այո՛, պէտք է հնազանդիս, կ'ըսեմ, եթէ ոչ քեզ, գէթ քու կիներուդ համար : Մի՛ կարծեր, Հասան, թէ անձնական երկիւղ մ'ունենալուս համար է՝ որ այս լեզուն կը դործածեմ . ո՛չ, կեանքս այն վրանին մէջ է՝ յորում իմ ընտանիքս կը բնակին . այլ որովհետեւ սոյն ընտանիքը կեանքէ աւելի սիրելի է ինձ, և գիտեմ՝ որ եթէ այդ յիմար և անզոր ապստամբութեան մէջ տակաւին յամառիս մնաս, տարակոյս չ'կայ՝ թէ Մէ-

հէմմէտ քու տղաքներէդ և ոչ մին կենդանի պիտի թողու :

Ուզուեն— Հասան գլուխը ծուեց. գիտէր՝ թէ իւր մայրը ո՞րչափ իրաւունք ունէր :

Սակայն քիչ մը լուռ կենալէն վերջը պատասխանեց. — Աւելի կը սիրեմ մեռնիլ, քան վատ հնազանդու թեամբ անպատուիլ. Մէհէմմէտ անգամ զիս պիտի արհամարհէ՝ եթէ ետ քաշուիմ :

— Մնչուչտ, եթէ դու իսկ անոր չափ զօրութիւն ունենայիր : Բայց, որ աւելի զարմանալին է, տակաւին կ'անգիտանաս մեր վերջին թշուառութիւնները Համզա՝ Բուսնիլի պէյլէրպէյը՝ էրզրուսի ճամբուն վրայ Գաուլի— Հիսար ամրոցն առաւ :

— Ուսկի՞ց իմացար :

— Իմացայ : Համզա ամեն անցած տեղերը սարսափելի խժռութիւն կը գործէ Երկու օր չ'անցած Սուլթանն էրզրուս պիտի մտնէ : Իւր ահեղ բանակին դէմ ի՞նչ զօրք պիտի հանես : Մեր հաւատարիմ թիւրքմէններն ամենքը մէկտեղ պիտի կորսուին՝ զմեզ պաշտպանելու համար, բայց ասով հանդերձ երկիրն ալ պիտի աւերի . . . : Հաւատա՛ խօսքերուս, Հասան, Մէհէմմէտ աւելի հպարտ քան կատաղի է, աղաչանքով կարելի է զայն 'ի դուր շարժել և հպատակութեամբ ալ պատերազմելէ ետ կեցունել : Դու այր և զինուոր ես, և սակայն իւր առջև նուաստանալէ կը խորշիս . լա՛ւ . ես կին և մայր ըլլալովքս հանդերձ, ձեր փրկութեան համար ամեն բան յանձն առնլոյ պատրաստ եմ :

— Այս բռնաւորին առջե՞ւ պիտի երթաս :

— Մէհէմմէտ պիտի յիշէ՝ թէ ես կայսեր աղջիկ և քոյր եմ : Ինձ ուղեկից տուր ֆիւրախտանի և Չմկածագի պէյերն և Շէյխ Հասանը . ես կ'երաշխսուորեմ՝ որ կրնամ նպատակս յաջողցունել :

Իշխանն այսպիսի բան մը յանձն առնուլ չ'էր ուզեր

և կը վարանէր : Բայց վերջապէս Սարայի թախանձանաց չ'կրնալով դիմանալ՝ զիջաւ անոր սրահանջմանը, և իրեն համար գահաւորակ մը պատրաստել տուաւ . ընկերներն ալ ձիով անոր պիտի ուղեկցէին :

Իշխանուհին ձիւնապատ և սառուցեալ գետերով լեցուն գաւառէ մ'անցաւ . դարաւանդներէ և բլուրներէ իջաւ ելաւ . խիստ զօրեղ էր . մատակ ջորիներն ալ բնաւ չ'էին սայլթաքեր, երկու աւուր մէջ Ուզուեն— Հասանի մայրը Մէհէմմէտի բանակին զխմաց կը գտնուէր :

Սուլթանին և իւր Հարէֆ վրանները դեղեցիկ ցանկերով շրջապատեալ էին, վրաններէն տասն և հինգը՝ որք խիստ պարզ էին, պաշտօնէից յատկացեալ էր. ուրիշ երկուք ալ՝ մին ոսկեհուռն մետաքսէ, միւսն ալ թաղեայ՝ բայց ոսկեղէն նկարներով զարդարուած, Սուլթանին վերապահեալ էին :

Այս շրջանակէն դուրս կը բանակէին Գուլ — Գուլեյիւն և Կեհեմեյիւն, Կեհեմեյի մեծամեծները, որք են տակառաղետը, գանձապահը, արքունեաց սպարապետը, դիւանի անդամները, Գիլեյիւն չորս վէզիրները, (այսպէս կը կոչուին՝ վասն զի դիւանի սրահին մէջ նստելու արտօնութիւն ունին այն գմբէթին տակ՝ որ դիւանը կը լուսաւորէ), 'ի նշան իրենց աւագութեան ձիու ազի կրող ուրիշ վէզիրներ, մասնաւորապէս Սուլթանին ձիերը դարմանելու թաշտօն ունեցող արտօնապետները, որք արապ, թիւրքմէն և պարսիկ ըլլան, և Չմկածագի :

Սարա իշխանուհին մէկ մը Ուզուեն — Հասանի զօրաց տկարութիւնը միտք կը բերէր. մէկ մ'ալ Մէհէմմէտի ահեղ բանակին կանոնաւորութիւնը տեսնելով՝ չափազանց կը զարմանայր :

Սուլթանն իշխանուհւոյն գալուստը լսածին պէս հրամայեց՝ որ զանիկա ներս մտցունեն և հետը խիստ մեծ պատուով վարուին, թոյլ չ'տուաւ՝ որ իշխանուհին գայ իւր առջև խոնարհի . ընդհակառակն ինք զանիկա դի-

մաւորեց՝ « մայր իմ » կոչելով . Մէհէմմէտ Շէյխին ալ մեծ յարգանք ցուցնելով՝ անոր « հայր » տիտղոսը տուաւ : Բայց երբ Սարա Մէհէմմէտէն միտքը դրած շնորհքը խնդրեց , Սուլթանը դէմքը խոժոռեց և սուր ձայնով պատասխանեց .

— Դաւիթ կայսեր հպարտութիւնն ոտիցս տակ պիտի վշրուի , և Տրապիզոնի կայսրութիւնը պիտի վերջանայ :

— Թշուա՛ւ եղբայր իմ , գոչեց իշխանուհին :

— Սակայն անխորհուրդ երիտասարդէ մը յամբարտաւան ապստամբութիւն գրդուեալ Ուզուն — Հասան որդւոյդ կը ներեմ :

— Ա՛հ , ըսաւ Սարա , դձեղ վեհանձն և գթասիրտ կարծելու իրաւունք ունէի :

— Մա՛յր իմ , ինձ շնորհակալ ըլլալէ յառաջ՝ պայմաններս իմացի՛ր : Որդւոյդ դէմ արձակած վըճիռս՝ ո՛րչափ ալ քեզի սաստիկ երևի , կ'երգնում՝ որքու արժանեացդ և առաքինութեանցդ համար շնորհ մ'է : Տրապիզոնի վրայ պիտի յարձակիմ , անկէ կոմաննոսեանները պիտի հալածեմ , և Ուզուն — Հասան իր յանցանքը քաւելու համար՝ իւր զօրաց դունդերը բանակիս հետ պիտի միացունէ այս արշաւանքին մէջ :

— Ի՞նչ , իմ որդիս իւր ընտանեաց կործանման օգնելո՞ւ պիտի դատապարտուի : Ուզուն — Հասան եղբօրըս դէմ գէնք կրնա՞յ առնուլ , էս Տրապիզոն ծնած եմ : Եղբայրս և եղբօրորդիներս են Տրապիզոն թագաւորողները , և դու կ'ուզես զանոնք գերի և ստրուկ ընել . . . :

— Գիտցի՛ր որ եթէ պայմաններս մերժես , եթէ Հասանի խորհուրդ տաս՝ որ տակաւին իւր ապստամբութեան մէջ յամառեալ սնդէ , այն ատեն ոչ միայն եղբօրըդ ընտանիքն աքսորի և գերութեան պիտի մատնուի , այլ նաև քու կիներդ , քու որդիդ , էշշէրիֆ և իւր եղբայրներն ալ , և միխանակ կայսրութիւն մը ջնջելու՝ ա-

զատ թիւրքմէնիստանն իսկ աշխարհի շրջանակին մէջէն պիտի ջնջեմ հանեմ : Մա՛յր իմ , քեզի խորհելու ժամանակ կուտամ . միայն յիշէ՛ որ ժամերս անգին են , և պէտք է որ երեք օր չ'անցած քու որդւոյդ պատասխանն ընդունիմ :

Սարա մեկնեցաւ առանց ուրիշ շնորհք ընդունելու : Ամբողջ մէկ գիշեր արթուն մնաց , և Մէհէմմէտի պայմաններն և Ուզուն — Հասանի այն պայմանաց հնազանդելուն կամ չ'հնազանդելուն հետևանքները կշռելով՝ որոշեց՝ որ Բուսնիի պէյն Ուզուն — Հասանի զրկէ՝ Սուլթանին խօսքերն անոր իմացնելու համար :

Էշշէրիֆի առաջին մտածմունքը գիմակալութիւնն եղաւ . կ'ուզէր ազատ մեռնիլ իւր զօրաց մէջ . բայց պատերազմելու անկարելիութիւնը տեսնելով՝ յակամայս հնազանդեցաւ : Իրկու իշխանները՝ Հասան և Էշշէրիֆ սրտերնին տխուր՝ երկու զօրաւոր դնդերու գլուխն անցած՝ դէպ 'ի Մէհէմմէտի բանակին առաջնորդող ճամբան բռնեցին :

— Ո՛հ , կ'ըսէր Էշշէրիֆ իւր հօրը , Աննա կոմսենտսի գահ մը տալ երազե՛լ , և իւր թշնամեաց օգնել իւր կայսրութիւնը կործանելու , իր պալատն այրելու և թերևս իւր կենաց ալ սպառնալու համար :

— Որդեա՛կ իմ , պատասխանեց Հասան , Դաւիթ շատ իրաւունք ունի զինքն ընկճող թշուառութեան բուրբ ծանրութիւնը քու վրայ ձգելու . մեր կործանումն իւր դերդաստանն ազատ չ'պահեց , և ո՛չ մէկ անձնական զոհ չ'կրնար Դաւիթի դերդաստանը Մէհէմմէտի կատարելիք ասպատակութենէն և աւերմունքէն ազատել : Անատօլի թերակղզոյն տիրող Սուլթանը չ'կրնար թողուլ իր տէրութեան սահմանին մէջ այնպիսի յունական անկախ իշխանութիւն մը՝ որ շարունակ մեզի կամ վիէննայի և Ճենովայի դքսութեանց հետ դաշնակցիւ եւրոպիկեան Պոնտոսն և իւր ափունքները վտարիքի և Բիւզանդիոնի մէջ ասոնց նաւահանգստին տիրողներուն

ձեռքը պիտի անցնէին :

Էշտէրիֆ տխուր լուծիւն պահելով՝ հօրը քովէն կը քայլէր :

Ասոնցմէ հեռի չ'էին ծառայող կանայք և Բանայիա ալ, որոց կուրկան կ'առաջնորդէր. Դժուարին ճամբու մը պատահած ատեննին՝ բարձրահասակ կուրկանը մանկամարդ աղջկան ջորւոյն սանձը կը բռնէր, և վտանգաւոր տեղերէն չ'անցած՝ անկէ չէր հեռանար :

Ուզուն — Հասան և իւր ուղեկիցներն իրիկուան դէմ բանակը հասան. Սարա իւր ընտանիքը Մէհէմէտի ներկայացոյց, որ խիստ վեհանձնաբար ընդունեց իւր՝ նիզակակից տիտղոսի արժանացուցած յաղթեալ մարդիկները :

Հետևեալ առաւօտ, ամբողջ բանակը ճակատատեղիէն մեկնեցաւ, և անմիջապէս Պարսկաստանի ճամբէն խոտորելով՝ Սև Նոփու ճամբան բռնեց :

Սմենէն առաջ կը քայլին սուրերով և տէգերով զինեալ եէնիչէրիք, որոց առջևէն ձիու հինայով ներկեալ մաղեր կը տանէին, ետևէն ալ ոսկեղէն ժապաւէններով զարդարեալ եօթն դրօշներ. Յետոյ կ'ուզային փողահարները. թմբկահարներն ոսկեղէն շղթայներով փղերնին կախած էին թմբուկներնին : Չորս հարիւր զամ թիկնապահ սուլթանը կը շրջապատէին՝ ձեռքերնին դըրօշ եւ կապարճ բռնած : Վերջապէս, նոյն ինքն Մէհէմէտ կ'ուզար պարսիկ ձիու վրայ նստած, որուն գունաւոր բաշն արեգական ցոլքերուն պէս աչքերը կը շլացունէր : Բանակին ստուար մասը, այսինքն, ութսուն հազար զուգուր կը յառաջէր. 'ի յետկուսէ կը քայլին բանակին ծարաւն անցնելու համար տիկերնին միշտ լեցուն պահող ջրկիրները. յետ որոյ արքունի գանձերն և սպասները կրող երեք հարիւր կարգ ջորի, իւրաքանչիւր կարգ եօթանասուն ջորի: Ինն հարիւր ձի, պարէններով և կազմածներով բեռնաւորեալ երեք հարիւր կարգ ուղտ, զէնք պատրաստելու համար հարիւր

զինագործ, նոյնչափ ալ ռահվիրայ ճամբայները շակելու սահմանեալ, ականահատներ և թնդանօթածիգ զօրք :

Սյս ահագին բազմութիւնը յառաջ խաղաց Մէհէմէտի հրամանաւ, և աննման արագութեամբ ձիւներով դոցուած ճամբայներէն անցաւ. առջևէն խիստ մեծ դըժուարութեամբ երեք հազար ռահվիրայ ճամբայ կը բանային :

Սուլթանն իւր զօրքերը քաջալերելու և յոգնութիւնըն արհամարհելու օրինակ տալու համար՝ անոնց հետ հետիոտս կը քայլէր խիստ դժուարուտ ճանապարհներէն և վտանգաւոր տեղերէն :

— Որդեա՛կ իմ, ըսաւ օր մը Սուլթանին Սարա իշխանուհին, որ գահաւորակով բանակին հետ կ'երթար, այս թշուառ Տրապիզոն քաղաքին համար ի՞նչպէս այդչափ յոգնութիւն յանձն կ'առնուս :

— Մայր իմ, պատասխանեց Մէհէմէտ, 'իսլամութեան սուրն ինձ յանձնուած է. այս յոգնութեանց, դըժուարութեանց և վտանգից շնորհիւ է՝ որ զուգուրս արժանանալ : Եթէ այսօր կամ վաղը մեռնիմ առանց այս տիտղոսն հետըս գերեզման տանելու, ի՞նչպէս պիտի համարձակիմ Աստուծոյ և մարդկան առջև երևելու :

Մէհէմէտ կենացը մէջ շատ անգամ իւր կրօնքը պատրուակ բռնեց՝ ըրած աւերմունքներն արդարացնելու համար :

Հուսկ ուրեմն, Սուլթանը գմբէթներով, աշտարակներով, միջնաբերդերով և թօքաթի կապարով ծածկուած զանգակատուններով զարդարուած սքանչելի Տրապիզոն քաղաքը տեսաւ :

Տրապիզոն, 'ի հնումն թարբէզիւս, որոյ վրայ Քսենփօն կը խօսի, տրապիզի ձև ունենալուն համար այսպէս կը կոչուէր :

Միայն այս մայրաքաղաքին շքեղութիւնը չ'էր աւա-

ըրառութեան յուսով կանխաւ արբեալ Մէհէմմէտ Բ. ի զօրքերն իրեն ձգողը, այլ որովհետեւ իւր շրջակայ երկիրներն ալ կային նաև առատ դարի, ցորեան, եգիպտացորեան և ծխախոտ: Այս բերրի գաւառը՝ լի ձիւնապատ սրածայր լեռներով, գետակներ և առուներ կը գտնուին, որք դաշտաց մէջ սքանչելի զովութիւն մը կը սփռեն:

Մէհէմմէտի երկու հարիւր յիսուն ցուկանաւերը Տըրապիզոնի դիմաց կեցած պատրաստ էին Հունգարացի Օրպանի ձուլած զարհուրելի կործանիչ գործիքներով քաղաքը ումբակոծելու: Պարսպաց տակ կեցած էին Մէհէմմէտի զօրքերը, և նշանը տրուելուն միայն կ'սպասէին քաղաքին վրայ յարձակելու համար. արդէն դաշտերը քանդել և հոս ու հոն ասպատակել սկսած էին:

Մինօպէն եղող յոյն գաղթականաց մէկ հասուածը հիմնեց զՏրապիզոն. Պոնտոսի թագաւորք զայն նուաճեցին. Միհրդատի անկմանէն վերջը Հռովմայեցիք տիրեցին անոր. և Պոնտոս — կապագովկիա կոչուած գաւառին մայրաքաղաքն ըրին: Երբ գաղղիացիք զի Պօլիս առին, Տրապիզոն իւր մթութենէն ելաւ Ոլեքսիս կոմսնոսի կամօք. և նոր տէրութեան մը մայրաքաղաքն եղաւ: Տրապիզոն երկու դարէ 'ի վեր հաստատուն էր, երբ Մէհէմմէտ ուղեց՝ որ զայն ազատ և քրիստոնեայ քաղաքաց թուոյն մէջէն վերցունէ:



Գ Լ Ո Ւ Խ Զ:

ՅԱՂԹԱԿԱՆՆԻՆ ԼՈՒԾԸ

Տրապիզոնի մէջ երկիւղը կը տիրէր. առտուրնէ 'ի վեր Մէհէմմէտի թնդանօթները քաղաքը կը ումբակոծէին, խրամատներ բանալով և հուր բռնկցնելով Սուլթանին բանակը պարսպաց կը մերձենայր. քաղաքին քաջասիրտ մարդիկներն ալ 'ի ղէն կը դիմէին. ճարտարախօսք՝ խորին ափշութեան մէջ ընկղմեալ բնակչաց հայրենասիրութիւնը գրգռելու համար՝ հրապարակները կը ճառախօսէին: Զանգակները կը հնչէին. փողոցներուն մէջ կ'ընթանային յիմարեալ կիներ, խռովեալ տղաքներ և դողդոջուն ծերեր. Տրապիզոնի եկեղեցիներն և մատուռները կ'երթային՝ որպէս զի երկնքէն ընդունին այն վրկութիւնը՝ զոր մարդիկ չէին կրնար տալ իրենց: Պատրիարքն և քահանայք՝ քահանայական զգեստներնին հագած՝ սուրբ պաշտամունքները կը կատարէին և յողբ և յարտասուս շարժեալ այս բաղմութիւնն Աստուծոյ հետ կը հաշտեցունէին. թշուառներն երկրաւոր յուսով չէին մխիթարեր: Մէհէմմէտ ճիշդնոյն բանը կ'ընէր Տրապիզոնի մէջ՝ ինչ որ ըրած էր 'ի Բիւղանդիոն. շէնքերը կամ յիշատակարաններն իրեն կը պահէր. ահա՛ մարդկային հողւոյն հպարտութիւնը. իսկ մասնաւորաց հարստութիւններն աչառնաբար կը թողոյր՝ աւարառութեան յուսով զանոնք քաջալերելու համար: Բայց Սուլթանին վրէժխնդրութիւնը միայն այսչափով գոհ չ'էր ըլլար. որովհետեւ եթէ 'ի փառասիրու-

Թեան ոգին զինքն իր կայսրութիւնը յանհունս ընդար-
ձակելու կը դրդէր . իւր առ Խաչատուրիւնն ունեցած նա-
խանձաւորութիւնն ալ չափ չ'ունէր . և անտարակոյս
ժողովուրդն ուրացուածեան և մահուան մէջ տեղ պիտի
գտնուէր . Ժողովուրդը մարտիրոսութեան մտածմուն-
քով փոխանակ տկարանալու՝ աւելի ևս քաջալերեցաւ :
Կանայք , ծերք և տղայք մարմնաւոր վնասներն առ ոչ-
ինչ համարեցան . մի միայն յաւիտեանական վարձատրու-
թեան վրայ կը խորհէին : Քահանայք և եպիսկոպոսք
սեղանին մօտ յոտին կանգնեալ՝ մեծ քաջալերութիւն-
ներ տուին ժողովրդոց : Կոծերն ու լացերը քիչցան .
սոսկումն և սարսափ դադրեցան , յուզմանց ամենէն շը-
քեղը քրիստոնէականը , գրգռուեցաւ բաղմութեան սըր-
տին մէջ : Ժողովուրդն եկեղեցւոյ մէջ գեամնատարած
հեղինակ իւրեքէ ազատութեան և յաղթութեան երգն ըս-
կաւ երգել : Սակայն եկեղեցական դասը Տրապիզոնի
բնակչաց համար այս ամենը բաւական չ'սեպեց : Տկար-
ները մխիթարելէն վերջը՝ կը մնար զօրաւորները սրտա-
պնդել , և երկչոտներն ասոնց օջինակովը խրախուսել ,
եկեղեցական թափօրներ՝ առջևնէն խաչ և դրօշ , փո-
ղոցները շրջեցան : Բոլոր կրօնական արարողութիւններն
եղան այս թափօրներուն հետ . երբ այսպէս կրօնաւոր-
ներն և քահանայները կ'երգէին , 'ի կռիւ կը հրաւիրէ-
ին և կը յորդորէին այն թշնամուոյն դէմ որ բնակչաց կե-
նաց և հաւատքին միանգամայն կ'սպառնայր , բոլոր
տուններէն զինեալ մարդիկ վար կ'իջնէին , որոց դէմքին
վրայ յուսահատական զօրութիւն կը փայլէր :

Դժբաղդարար , բանակին զօրապետներն այս հայ-
րենասիրական շարժումը քաջալերելու հոգ չ'էին տա-
ներ : Կայսրէն դրական հրամաններու կ'սպասէին . բայց
սա ալ սաստիկ տխրութեան մէջ ընկղմած կը յուսահա-
տէր և կը շուարէր :

Դաւիթ Կոմնենոս Տրապիզոնի պաշարումն և մօտա-
լուտ կործանումն իւր ըրած յափշտակութեան իբրև պա-

տիժ կը համարէր . կը զարհուրէր երբ մէկ ոճիրէն իւր
ցեղին վրայ եկած թշուառութիւնները կը յիշէր . միա-
քը կը բերէր Քալո — Յովհաննէսէն իւր մօրը խողխողու-
ւիլը , և մի և նոյն հրեշէն իւր հօրը խեղդուիլը . յետոյ
ինքնիրեն կը հարցունէր՝ թէ ինչպէս այս արիւննաթա-
թաւ ժառանգութիւնն ընդուներ է :

Դաւիթ Կոմնենոսի բնութիւնը տկարութեան և հը-
պարտութեան , սնտոի երկիւղի և անհաստատ քաջու-
թեան խառնուրդ մ'էր : Իբրև իշխան , երբեմն պատե-
րազմներու մէջ քաջութիւն ցցուցած էր . բայց տղայի
մ'օրօրոցին մէջէն ծիրանի պատմուճանը յափշտակելէն
'ի վեր՝ կորուսած էր այն դոյզն ինչ քաջութիւնն ալ ո-
րով զօրաց հրամայելու արժանի եղած էր . իւր բնա-
կարանին ներսը քաշուած , չ'էր ուղեր որ ուժակոծու-
թեան ձայնը , զանգակներու հնչումը , եկեղեցականաց
երգերն և բաղմութեան աղաղակը լսէ :

Այս միջոցին , Հեղինէ Քանդակուղենոս իւր տղաք-
ները պալատան մեծ սրահը ժողովելով՝ դիւցազնական
արութեամբ զանոնք կը սրտապնդէր . իշխանապունք
զարմանախառն մեծարանօք անոր մտիկ կ'ընէին . միայն
Սննա իշխանուհին իր ամենէն պզտիկ եղբայրը , Գեորգ ,
բաղկացը մէջ սեղմելով՝ իւր յորդ արտասուքները տը-
ղուն ճակտին վրայ կը թափէին :

Մահմուտ փաշայի նաւատորմին թնդանօթաց հա-
րուածներն ալ սկսած էին ամուր դմբէթները խորտա-
կել . յուսահատական աղաղակներ մինչև Լսքի — Սէրա-
յի ապարանքը կը հասնէին . ո՛չ հեծել , ո՛չ ողբալ և ո՛չ
վհատիլ պէտք էր , այլ միայն պատերազմիլ :

Հեղինէ իւր որդւոց ըսաւ .

— Ազիւ որդեա'կը իմ , վկայ է ինձ Աստուած՝ որ
երբէք թագի ցանկացած չ'եմ . հիմակուան կրածս ալ
չատ անդամ 'ի փշոց հիւսեալ թագ երևցաւ ինձ
Լս , Մատթէոսի աղջիկն և Յովհաննէս Քանդակուղենո-
սի թուը , իրենց օրինակովը գիտէի՝ թէ իշխանութիւն

մ'որչափ կը տեէ՝ և թէ անոր մէջ քանի՛ քանի՛ վշտեր և տառապանքներ կան . . . : Երկուքն ալ՝ զրկեալ 'ի դահոյից , իրենց պալատէն փախան երթալ մթին մենաստանաց պատերուն մէջ տարադիր կեանք վարելու համար : Բայց ո՛րչափ որ կը վայլէ՝ մարդկային մեծութիւնը կը յարդեմ , գիտեմնակ՝ թէ թագաւորք և իշխանք իրենց ունեցած պատիւն ոգւով չափ պաշտպանելու պարտաւորեալ են մինչև վերջը : Մէհէմմէտ մեր դրանց մօտեցած է . . . : Իմացած եմք՝ որ եթէ ամբողջները չ'դրաւուին , մէկ ժամու մէջ պատերազմը պիտի սկսի : Ս'ն ուրեմն , այս պատերազմը՝ ուսկից թերևս ոչ ոք պիտի վերադառնայ , դձեղ պատերազմողաց առաջին կարգին մէջ պիտի գտնէ : Աստուած գիտէ՝ թէ ի՛նչ սիրով կը սիրեմ զձեզ : Երջանկութիւնս , յոյսս և հպարտութիւնս ձեր վրայ դրած եմ , Չեղի չ'եմ ըսեր . « զացէ՛ք , յաղթական պիտի վերադառնաք . . . » ալ կ'ըսեմ . « Երթայք բարեալ , զձեզ յերկինս պիտի տեսնեմ » : Չեր ներկայութեամբ մեր վերջին պաշտպանները պիտի խրախուսին . առաջին կարգին մէջ պիտի ինկնաք , իբրև իշխան և զինուոր , օրհնեալք 'ի քահանայապետաց . և պատմութիւնը՝ որ մեծ դէպքերը կ'արձանագրէ՝ իւր տողերէն մէկուն մէջ պիտի դրէ . « Դաւիթ կայսեր տըղաքներն իրենց մայրաքաղաքին ծխաշունչ վլատակաց տակ ծածկուեցան » :

— Զէ՛նք , զէ՛նք , գոչեցին երկտասարդ իշխանազունք :

Հեղինէ սրահէն եխելով՝ զինուց կողմը գնաց եւ ըսաւ .

— Ահաւասիկ Անդրոնիկոսի սուրը , Բասիլիոս Բ. ի թուրը , Հրեշտակ իսահակայ դաշոյնն և Օսմանի արեան մէջ կարմրացած երկու սուր : Այս զէնքերը յաղթութեամբ սրբեալ են , և գիտեմ՝ որ զանոնք թշնամոյն պիտի չ'յանձնէք :

Հեղինէ զէնքերը համբուրեց , յետոյ իւր որդւոց

երկնցուց :

Աննայի և Գէորդայ հեծեծանքները կրկնապատկեցան :

— Ողջամբ կացէ՛ք , բախն 'ի միասին իշխանազունք , իրենց մօրը բազկաց մէջ նետուելով : Քիչ մ'յառաջ իբրև չափահաս պատերազմի կը պատրաստուէին , հիմայ ալ իբրև տղայ իրենց մօր սիրոյ համբողջը կը խնդրէին :

— Երթայք բարեալ , պատասխանեց Հեղինէ . բայց կը կարծէք՝ որ ես զձեզ առանձի՞ն պիտի թողում . . . :

— Ի՛նչ , ի՛նչ կ'ուզէք :

— Չեղի ընկերանալ , մէկտեղ պիտի մեռնիմք :

— Ո՛չ , ո՛չ , գոչեցին իշխանազունք միաբերան . մեք այդ առաջարկութեան հաճութիւն չ'ենք կրնար տալ :

— Առաջին անգամն է որ կին մը , թագուհի մը պատերազմի կ'երթայ . Իրէնոս՝ Տիտինօթիքը չ'պաշտպանեց : Եկայք , որդեակք իմ , Տրապիզոնի պարտաց վրայ պիտի մեռնինք :

Աննա՝ արտասուալից ոտքի վրայ ելնելով ըսաւ .

— Կ'աղաչեմ , զիս երեսի վրայ մի՛ թողուք , ինձմէ մի հեռանաք :

— Մեզի հե՞տ գալ կ'ուզես , հարցուց Հեղինէ : Երկու զալից սոսկումն մ'եկաւ իշխանուհւոյն մարմնոյն վրայ :

— Ո՛չ , յարեց կայսրուհին , այսպիսի տեսարաններու չ'ես գիմանար :

Հեղինէ արքունեաց առաջին ծառային հրաման մը ըրաւ . վայրկեան մը վերջն ալ Դաւիթ կայսրը , ծնգեալ և ծիւրեալ , այն սրահը մտաւ՝ ուր Հեղինէ մեծ քօղով մը ծածկուած իւր որդւոց մէջ յոտին կանգնած էր :

— Ինձ իմացուցածնին ստոյգ է , հարցուց Դաւիթ , արտասուօք կարմրացեալ աչքերն երկտասարդ իշխաններուն վրայ յառելով . դո՛ւ , իրենց մայրը , այս տըղայքները դէպ 'ի մա՞հ կը տանիս . . . :

— Ե՛ս , իրենց մայրը , առնք դէպ 'ի պատուարները կ'առաջնորդեմ . ես , իրենց տէրը , պարտքերնին

կ'ուսուցանեմ :

— Հիմայ պարտքն երկնից պատժոյն հնազանդիլ է : Տրապիզոն կորսուած է . կոստանդնուպօլսոյ պէս պիտի ըլլայ :

— Գուցէ Աստուած այս նուաստութիւնն և դժբաղ- գութիւնը մեզի վերապահած է . բայց , կըլիշէ՞ք ար- գեօք , Բիւզանդիոնի մէջ կոստանդին յի . մինչև վեր- ջին ժամը կը կռուէր իւր քաղաքն աւարառութենէ , և տաճարները պղծուելէ ազատ պահելու համար . . . Վիրաւորեալ և մերձ 'ի մահ , տակաւին պատերազմե- ցաւ , և յաղթականը դռնէ չ'կրցաւ զանիկա իւր յաղ- թութեանը ծառայեցունել :

Դաւիթ՝ կայսրուհւոյն ձեռքերն իր գողգոջուն ձե- ոսպ մէջ սեղմելով՝ ըսաւ .

— Մտիկ ըրէ՛ , այս պալատան մէջ մէկը կայ՝ որ զիս կ'ամբաստանէ և կը դատապարտէ . Ալեքսիսն է այն , Գալօ—Յովհաննեսսին որդին , որը Ալեքսիսը՝ որուն թա- գը յափշտակեցի . . . Սա՛ պատուհանին ծակէն դիտէ զինքը , տե՛ս թէ ի՛նչ վայրենի ուրախութեամբ Մահ- մուտի նաւատորմոյն կը նայի . կարծեա՛ թէ այս մար- դիկներն ո՛չ թէ իբրև թշնամի , այլ իբրև վրէժխնդիր կը համարի :

— Լռէ՛ , ըսաւ Հեղինէ , կարելի է որ քոյ զուակ- ներն ըսածներդ լսեն . ես չ'եմ ուզեր բնաւ՝ որ զքեզ յարգելէ դադրին :

Այս միջոցին լուսոյ մեծ նշոյլներ նարօտներով պա- լաւը լուսաւորեցին :

— Քաղաքին մէկ փողոցը կ'այրի՛ , աղաղակեց Հեղի- նէ : Եկա՛յք , որդեա՛կք իմ :

— Ի զէ՛ն , 'ի զէ՛ն . աւելի լաւ է մեռնիլ քան անձ- նատուր ըլլալ . զօրապե՛տք , գլխաւորք , դռնեցին բաղ- մաթիւ ձայներ արքունեաց մօտէն :

— Քու ազգիկդ և մեր որդւոց վերջինը պահպա- նէ՛ , ըսաւ Դաւիթ :

Բայց Աննա իշխանուհին իւր մօրը վզին վրայ կա- խուելով՝ ըսաւ .

— Կը վախնամ , ո՛հ , զիս մի՛ թողուր :

— Ոչ թէ մահուընէ , ըսաւ Հեղինէ , այլ Մէհէմէտ տի մեր պատերուն մէջ մտնելէն պէտք է երկնիլ . . . : Քու կուսական դէմքիդ վրայ անոր ձգելիք հայեցո-ւածներէն և անձնատուր ըլլալու ամթէն վախնալու է , որ քոյստոնեայ կիներ հարէն նախատանաց պիտի են- թարկէ :

Հեղինէ Աննայի ձեռքերը քակեց իւր վզին վրայէն . յանկարծ սրահին դուռը բացուելով՝ Սարա , Ուզուն— Հասան , Էյլէրիֆ և Բանայիա ներս մտան :

— Մեզի հետ կը մեռնի՞ք , հարցուց իշխանաց , Հասանի և Էյլէրիֆի պատասխանելէ առաջ՝ Սարա գողգոջուն ձայնով ըսաւ .

— Մէհէմէտի պայմանները ձեզ իմացունելու ե- կայ

— Մերժեցէ՛ք այն պայմանները , ըսաւ Հեղինէ հը- պարտութեամբ :

— Աւելի կը սիրեմք մեռնիլ , քան անպատիւ սու- թիլ , կրկնեցին իշխանազունք :

— Որո՞նք են այդ պայմանները , հարցուց կայսրը :

— Տրապիզոնի դահէն պիտի իջնաք :

— Ասոր փոխարէն

— Ասոր փոխարէն Սուլթանը քաղաքին պիտի խը- նայէ :

Կայսրը պահ մը լռեց : Գերդաստանն երկու կու- սակցութեան բաժնուած էր . մէկ կուսակցութիւնը , Հեղինէ և իւր որդիքը , բացէն պատերազմ կը պահան- ջէին . իսկ միւս կուսակցութիւնը , Դաւիթ , Աննա , Սա- րա և իրենները , կ'ուզէին՝ որ կայսրը գահընկեցութիւ- նըն ընդունի : Վերջապէս , Դաւիթ գլուխը մէկդի տա- նելով՝ և իւր կնոջ կշտամբալից հայեցուածքին և իր որդւոց վշտին չ'կրնալով հանդուրժել՝ պատասխանեց .

— Կ'ընդունիմ . . . : Հասան պիտի իմացունէ Սուլթանին՝ որ այս ժամէն սկսեալ Դաւիթ կոմսենոս Տրապիզոնի մէջ թագաւորելէ դադարած է :

Խորին ափշու թիւն մը տիրեց սրահին մէջ, երբ կայսրըն այս նուաստութեան բաժակն ընդունեց : Սարաանոր մտեցաւ , եթէ 'ի սրտէ կայսեր ըրածին չ'հաւնէր , գոնէ վրան կը գթայր . և իբրև քոյր՝ նորա վիշտերը մեղմացունելու կ'աշխատէր :

Հեղինէի որդիքը մայրերնին չ'թողուցին , և իրենց տրուած զէնքերը՝ զորոնք իրենց հօրը վատաստութեան համար չ'կրցան գործածել , ծունկերնուն վրայ խորտակեցին , և կտորուանքները գետին նետեցին :

Էջջերիֆ Աննայի մօտենալով՝ որ կուլար , ըսաւ .

— Մօրաքոյր իմ , Տրապիզոն ըրած առաջին ճանապարհորդութենէս 'ի վեր գաղանիք մը կը պահեմ՝ զոր քու թշուառութիւնդ քեզ յայտնելու քաջասրտութիւնը կուտայ ինձ : Ես՝ այն ինչ քաղաքակրթեալ ժողովրդոց գլխաւորն և աւելի վրանի տակ քան պալատներու մէջ բնակած ըլլալովս՝ ի՞նչպէս պիտի համարձակէի Դաւիթ կոմսենոսի աղջկան ըսելու՝ թէ կենացըս ընկերն եղի՛ր : Հիմայ ամեն բան քու ձեռքէդ ելաւ . . . : Երիկեան կայսրն այսօր տարագիր իշխան մը է , վաղը դու ալ թափառական և աքսորեալ պիտի ըլլաս . . . : Ուրեմն , թաղեայ վրանիս տակ եկո՛ւր , ուր ազատ , երջանիկ և պատուաւոր պիտի լինիս : Իմ թիւրքմէն հրոսակներուս մէջ ապաստանէ՛ , ուր աւելի բաւ պիտի պաշտուիս , որչափ բնաւ չ'ես պաշտուած ժանտ Յունաց չքեղ բնակարանաց մէջ . . . : Ունեցած թշուառութիւնդ մուցնելու համար կեանքս քեզ պիտի նուիրեմ . : Պիտի հասկնաս՝ որ թագաւորութիւնը սրբախ ուրախութենէն ստորին է . . . : Գորովս քեզ պիտի մուցնէ քու վրայ հասած աղէտները , և միայն ըզքեզ սիրողը պիտի սիրես այսուհետև . . . :

— Էջջերիֆ , պատասխանեց Աննա , շուարած , զար-

մացած , ցաւոցս մէջ խօսքերուդ զիս կը կենդանացունեն և կը մխիթարեն . . . : Ինքզինքս կորսուած կարծեցի . . . : Առջևս կործանումն և չարչարանք տեսայ . . . : Հիմայ կ'զգամ՝ թէ յուսահատելու բան չ'կայ , ապրելու զօրութիւն և կամք պիտի ունենամ . . . :

— Ինձ համար , հարցուց Էջջերիֆ :

— Քեզ համար , պատասխանեց իշխանուհին ձեռքըն երիտասարդին երկնցունելով :

— Բանայիս՝ որ իշխանուհոյն և իր մօրեղբորդուոյն վրայ կրակոտ հայեցուած կ'արձակէր , տեսնելով Աննայի այնչափ վշտերէն անակնկալ հանդարտութեան մ'անցնիլը , և միանգամայն զարմանալով՝ իշխանուհոյն իւր բաղդը հաստատուն խոստմամբ Ուղուն—Հասանի տղուն թողուլը՝ քրթմնջեց :

— Աննա մեռնելու քաջասրտութիւն չ'ունէր . . . : Ազատ ապրելու համար բաւական զօրութիւն ալ պիտի չ'ունենայ :

Աննա իւր մօրը քով գնացած ատեն՝ Բանայիս երիտասարդին մօտենալով՝ անոր ականջին փափսաց .

— Ինչպէս անմիտ թռչունն որսորդին նետին առջև , անանկ ալ քու սիրտդ սիրոյ առջև գնաց . . . : Կոմսենոսի աղջիկը տեսար և ապշեցար . . . : Բայց իւր սիրտը քննել չ'ուզեցիր . . . :

— Ո՛չ ապաքէն Աննա գեղեցիկ է , Բանայիս :

— Այո՛ , տեսքով շատ գեղեցիկ է , վայելչութեամբ և պայծառութեամբ՝ ծաղիկ . բայց սրտով տկար է վիթի պէս . . . : Էջջերիֆի ազնիւ և եռանդուն խանդաղատանաց համար զօրաւոր և անկախ հոգի մը պէտք է . . . : Այս երկչոտ յոյն աղջկան արիւնդ և հոգիդ պիտի նուիրես . իւր մանեակներէն մին քեզնէ աւելի պիտի սիրէ . . . :

— Բանայիս՝ , դու կ'ատե՞ս զայն :

— Ո՛չ . բայց ես ալ իրեն պէս կին ըլլալով՝ կ'զգամ թէ ուրիշ կերպով կը սիրեմ . . . : Իրեն պէս սերըն-

դեամբ իշխանուհի, բնաւ այսպէս պիտի չ'վարուիմ Աննա քեղի անձնական զգացումն կը ներշնչէ . ես ահաւասիկ պատրաստ եմ անոր ծառայելու, որովհետեւ դերիդ եմ :

— Ի՞մ գերիս ես :

— Գէթ մորդ գերին Մայրդ վաճառանոյէն գնուած փոքրիկ աղջկան հետ աղէկ վարուեցաւ և լաւ խնամեց զանիկա : Ազատ թողուց որ Աստուծմէ և իւր ընտանիքէն ընդունած ձիրքերը մշակէ Մորդ շատ երախտապարտ եմ. և քու ընտրած նշանածիդ պարտքս վճարելով է՝ որ երախտահատոյց պիտի համարիմ ինքզինքս :

— Ա՛հ, Բանայիա՛, չ'գիտեմ ի՞նչպէս քեղի շնորհակալ ըլլամ :

— Ժամանակ անցնելով երախտագիտութեան վրայ պիտի խորհիս : Աստուած գիտէ՛ թէ ինչ ըսել կ'ուզեմ :

Մէկ ժամէ վերջը՝ Ուղուն — Հասան պալատը կը մանէր հետն ունենալով զՍուլթան Մէհէմմէտ :

Յաղթականին հետ կային նաև բազմաթիւ փաշայներ, անմիջապէս քովէն կը քալէր Մէսէնի Գէորգ իշխանը, որ Գէորգ Սիւշըթայի որդին և Մատթէոս Գանդակուզենոսի թուռն էր : Ասոր ներկայութիւնն անկեալ գերդաստանին վրայ շատ մեծ ազդեցութիւն ըրաւ. Գէորգ իւր հօրը վատ օրինակին հետեւելով՝ իսլամութիւնըն ընդունած էր գլուխը ազատելու համար :

Մէհէմմէտ պատուեց զՍարա և զՀեղինէ . առաքինութիւնը մեծ ազդեցութիւն կ'ընէր այս յաղթականին վրայ . գիտէր թէ կայսրուհին այս պատերազմն ըլլալ չ'էր ուզեր՝ իբրև անխորհուրդ գործ. բայց վերջերն բատիպուած էր պատերազմ ընելու իւր ամուսնոյն պատիւը պաշտպանելու համար :

Մէհէմմէտ իւր պայմաններէն առաջինն իմացուց, որ էր Դաւիթ կայսեր հնազանդելով՝ քաղաքին ինայել

կայսրն և իւր ընտանիքը Մահմուտ փաշայի նաւերէն մին հեծնելով՝ դէպ 'ի Սերէս պիտի նաւարկէին, Ադրիանուպօլսոյ մերձակայ քաղաքը՝ որ Եւրոպիոյ մայրաքաղաքներէն մին և Մուրատին սիրած քաղաքն եղաւ :

Մէհէմմէտ Դաւիթի ամենէն փոքրիկ տղուն վրայ նայեցաւ, զոր մայրը քոյն առած էր. տղայն իրեն քաշելով՝ հարցուց .

— Ի՞նչ է անունդ :

— Գէորգ պատասխանեց կայսրուհին, տղայն դարձեալ իր քոյր բերել ջանալով :

— Լա՛ւ անուն, յարեց Մէհէմմէտ. Այս տղայն ինձ պիտի տաք. Գէորգ Սիւշըթայի զանիկա կը թելու և պատերազմական արհեստն անոր սորվեցնելու պաշտօնը պիտի ստանձնէ :

— Գէորգ Սիւշըթայի չ'կրնար իմ տղայիս իւր հարց հաւատքն ուսուցանել, ըսաւ Հեղինէ արհամարհանօք :

— Մանկուհի ընելու համար կ'ուզեմ զայն, յաւելցուց Մէհէմմէտ. ո՞վ պիտի համարձակի այս որոշմանս հակառակիլ . . . :

Դաւիթ Գէորգ Սիւշըթայի քով տարաւ տղան. Հեղինէ ժամանակ գտնելով՝ տղային ըսաւ .

— Մեռի՛ր քան թէ այդ Գէորգին պէս հաւատքուրացի՛ր :

Մէհէմմէտ Հեղինէի նպատակն իմանալով՝ դժնեայ դիմօք վրան նայեցաւ : Սուլթանը տեսնելով դարձեալ որ Աննա իշխանուհին Սարայի ետեւը ծածկուած էր՝ ըսաւ .

— Իշխանուհին ինձ չ'ներկայացուցիք Գրիտտոնեայ աղջկունք դէմքերնին ծածկելու սովորութիւն չ'ունին :

Աննա դողալով դողդողալով յառաջ մօտեցաւ . Մէհէմմէտ ալ նորա գեղեցկութեան վրայ հիացաւ :

Յետոյ Դաւիթի վրայ նայելով՝ փաղաքշիչ ձայնով ըսաւ .

Քիչ մ'յառաջ իմ առ ձեզ բարի զգացմանս անկեղ-
ծութեան վրայ կը տարակուսէիք Ս,յս անկեղ-
ծութիւնս առաջովելու խիստ դիւրին միջոց մը կայ .
մեր պայմաններուն վրայ սուրբ ազգականութեան կա-
պերն ալ աւելցունենք ձեր Աննա աղջիկն ինձ կը-
նութեան տուէ՛ք :

— Երբէ՛ք , երբէ՛ք , գոչեց Հեղինէ :

— Ի՞նչպէս « երբէ՛ք » ըսելու կը համարձակիս , ը-
սաւ Մէհէմմէտ : Կը մոռնա՞ն որ իմ « արտեր » պատրաստ
են քաղաքին վրայ յարձակելու , և թէ Մահմուտ փա-
շայ մէկ նշանով ումբակոծութիւնը պիտի շարունակէ . .
. . . վաղն Աննա կոմսենոս ինձ կնութեան պիտի չ'ու-
զեմ , այլ իբրև որո զանիկա պիտի յափշտակեմ . . . :

— Յառաջուց զայն կ'սպաննեմ , ըսաւ Հեղինէ դո-
ղալով . Մեծ ամօթ և նուաստութիւն է եթէ այն աղ-
ջիկը յափշտակէք . Գաւիթ թշուառ կեանքէն աւելի կը
սիրէ մահը Ես կոյսեր աղջիկ և կին ըլլալով կըր-
նամ հանդուրժել՝ որ իմ որդւոցս ամենէն փոքրն իւր
հաւատքն ուրանայ և իմ աղջիկս հարեմ մէջ ամօթալից
կեանք վարէ Ո՛չ , ո՛չ , դահս , մայրաքաղաքս և
հայրենիքս ձեզ կը յանձնեմ Թշուառ և տարագիր
պիտի ըլլամ . բայց տղաքներս քովս պիտի մնան : Ս,յս
վերջին բարիքն ինձմէ կորզել կ'ուզէք . կործանումն և
նուաստութիւն յանձն կ'առնում . և եթէ մեռնիմ , գո-
նէ հաւատքնին և կենաց շունչերնին ինձ պարտական
եղող որդիքներէս շրջապատեալ պիտի մեռնիմ .

— Կը հնազանդի՞ս , ըսաւ Մէհէմմէտ ցրտութեամբ .
Սուլթանը սրահէն դուրս ելած միջոցին՝ Աննա
հառաչելով՝ յաղթականին առջև ծունկի եկաւ և ըսաւ .

— Գթութիւն , գթութիւն :

— Տէ՛ր , ըսաւ Բանայիա , Էյլէրիֆին , որ զԱննա
պաշտպանելու կ'աշխատէր , ես քովդ մեռնիլ կ'ուզեմ .
այս է քեզնէ սպասած ամենէն վերջին բարիքս . . . :

Մէհէմմէտ զիջականութիւն վերցուց . և բարետրտու-

թեամբ անոր տկարութիւնն որդիական և եղբայրական
անձնանուիրութեան նշան սեպեց :

— Ընտանեացդ ազատութիւնն իմ ձեռքս է , ըսաւ
Սուլթանն Աննային . մինչև վաղը քու պատասխանիդ
կ'սպասեմ .

Սուլթանին մեկնելէն վերջը , կայսրուհին և Էյլէ-
րիֆ աղաչեցին զԱննա՝ որ այս անհեղեղ պայմանին
հաւանութիւն չ'տայ .

— Ձեր կամաց հակառակ զձեզ պիտի ազատեմ ,
պատասխանեց իջխանուհին :

— Աննա ապրի՛լ կ'ուզէ , ըսաւ Էյլէրիֆ ցաւելով :

— Տէ՛ր , ըսաւ Բանայիա , Սուլթանն աւելի փառա-
սիրութեամբ քան խանդաղատանօք զԱննա « երջ » կ'ու-
զէ Հանդարտ կեցի՛ր , Աննա քեզ պիտի յանձ-
նուի :

Հեռեւեալ օրը կայսերական ընտանիքը Մահմուտ
փաշայի ցուկանաւերէն մին նստան : Աննա և Գէորդ՝
կամուրջին վրայ յօտին կանգնած՝ բազուկներին իրենց
թշուառ հօրը կ'երկնցունէին , Հեղինէի՝ որ դէպ 'ե՞ր-
կինք նայելով կ'աղօթէր , իրենց եղբարց՝ որ մէկուի քա-
շուած էին՝ արցունքնին ծածկելու համար :



Գ Լ ՈՒ Ի Խ Է

ՄԵՐԷՍԻ ԱՔՍՈՐԵԱԼՆԵՐԸ

Հեղինէ՛ որչափ ատեն որ կրցաւ իրմէ բաժնուած սիրելի զաւակները նշմարել, որչափ ատեն որ իւր աչքերը կրցան որոշել Տրապիզոնի պարտէզները, պարիսպները, Բնարներուն սուր ծայրերն և գմբէթները՝ այնչափ ժամանակ նաւուն վերնայարկին վրայ յոտին կանգնեալ մնաց։ Կայսրուհին՝ անշարժ և տխուր, վշտակիր կայսերազունքները քովը կանչեց. շատ կը ջանայր՝ որ իւր յուսահատութիւնը Մահմուտ փաշայի նաւաստիներէն ծածկէ։ Բայց երբ Տրապիզոն հորիզոնէն աներևոյթ եղաւ, և երկնից դիժը ծովուն կապուտակ գծին հետ միացաւ, Հեղինէ իւր ընտանեաց հետ նաւուն միջնայարկն իջաւ։ Դաւիթ կայսրուհւոյն մօտենալու չ'էր համարձակեր, որովհետև իւր տկարութիւնը սիրտը կը ճմլէր, և ըստ ամենայնի ինքզինք անարժան կը համարէր իւր քաջասիրտ ամուսնոյն։

Աքսորեալները Կ. Պօլիս հասան. հոն օր մը հանգրտանալով՝ ճամբու պատրաստութիւններն եղան. հետևեալ օրը զանոնք Սէրէս տանելու սահմանեալ շրջանի գունդը ճամբայ ելաւ։ Հեղինէի գիմաց վրայ բնաւ ուրախութեան նշան չ'տեսնուեցաւ, բայց իւր ամենէն փոքրիկ տղայքները Պօլսոյ գրից գեղեկութեան վրայ սքանչացան։ Կարավանը՝ Բիւզանդեան կայսրութեան երկրորդ մայրաքաղաքէն, Անգրիանուպօլսէն, անցած ատեն՝ իշխանագունք ցաւեցան՝ թէ ինչո՞ւ այս քաղա-

քըն իրենց բնակութեան տեղը չ'է եղեր։ Իսկ Հեղինէ՛ թրակիոյ մէջ իբրև օսասիա ծածկուած Սէրէս փոքրիկ քաղաքը նախամեծար կը համարէր այն փառաւոր քաղաքէն՝ որ իւր անցեալ կենաց չքեղութիւնները կը յիշեցունէր իրեն։ Աղնուական կինը հպարտութեամբ և փառասիրութեամբ չ'էր ողբար այն դահը՝ որ իւր ամուսնոյն վատութենէն կործանեցաւ. իւր սիրտը ճմլուղը սա՛ էր թէ ինչո՞ւ ուրիշ անգամներու պէս՝ դժուար լիթ կոմենետոս իւր որդւոց յարգանաց արժանի չ'էր կըրնար ցցունել։ Կը ցաւէր մտածելով՝ որ կայսերազունք փոխանակ թագաւորներու տղոց բարի օրինակ հանդիսանալու, անօգուտ երիտասարդութիւն մը պիտի անցունեն գերութեան մէջ. ա՛լ աւելի կը մորմոքէր՝ երբ ինք իրեն կը հարցունէր՝ թէ արդեօք Աննա ի՛նչ վիճակ պիտի ունենայ Կ. Պօլսոյ արքունեաց մէջ, և թէ իւր ամենէն սիրելի Գէորգ տղայն ի՛նչ պիտի ըլլայ անգու՛թ բռնաւորին ձեռքը։

Աքսորեալները Սէրէս հասնելուն պէս՝ երկար ժամանակէ ՚ի վեր անմարդարնակ մնացած ընդարձակ բլրնակարան մը տարուեցան. երբեմն փաշայ մ'այս բնակարանն իրեն պալատն ընել ուզած էր. Այն տեղ կիսով չափ խոպանացած ծաղիկներով լեցուն և աղբիւրներով զարդարեալ ընդարձակ պարտէզներ կային, նրմանապէս մեծամեծ արմաւենիներ, նունենիներ և վարդենիներ։ Տանը սենեակները խիստ պարզ կերպով զարդարուած էին. ամենևին դրսէն ձայն չ'էր գար ներսը, ամեն կողմէն ալ լուսաւոր էր, Հեղինէ այս բնակարանն իրեն բաւական սեպեց, և անմիջապէս ամենայն վեհանձնութեամբ իւր կենաց այս նոր վիճակին զիջաւ։

Կայսերական գերդաստանին բազմաթիւ սպասաւորներ տրուեցան. բայց գերդաստանը զանոնք ընտրելու իրաւունքէն զրկուեցաւ. անտարակոյս Մէհմէտ անոնց մէջ լրտեսներ ունէր։

Ի վերին երեսս ամեն ազատութիւն տրուեցաւ գա-

հաղուրկ գերդաստանին: Հեղինէ, Դաւիթ և իշխաննքը ըն ամենքն ալ երդուընցած: Էին՝ որ բնաւ Սերէսէն չը մեկնին և Տրապիզոն փախչելու հնարքներ չ'ինտուն: Մէհէմէտ ալ քրիստոնեայ իշխանաց խօսքերուն և մանաւանդ կայսրուհոյն հաւատարմութեան վրայ կը վրտահէր:

Կայսերական գերդաստանը Սերէսի մէջ միշտ միօրինակ կեանք կը վարէր: Հեղինէ իւր որդւոց կրթութեան մեծ հոգ կը տանէր և գրեթէ օրուան մեծ մասը քովէն չ'էր հեռացուներ զանոնք:

Իշխաններն ամեն առաւօտ ձի հեծնելով՝ կը շրջագայէին: շատ անգամ Դաւիթ ալ կ'ընկերանայր: Ամօթահար և միշտ իր տղայական հպարտութեամբ խոցեալ անմխիթար կը մնայր՝ տեսնելով որ առաւօտներն անկողնէն ելած ատեն՝ քովը պալատականաց բազմութիւն չ'էր գտնուեր. առանձնակեցութեան չ'էր կրնար վարժուիլ. փոխանակ Հեղինէի բարեսրտութեան և իր որդւոց առ ինքն ցցուցած մեծարանաց շնորհակալ ըլլալով՝ կը բարկանար անոնց դէմ, որովհետեւ թշուառութեան մէջ քան զինքն աւելի քաջասիրտ և վեհանձն էին: Տրտում տխուր օրուան մեծ մասն իւր բնակարանին մէջ փակուած կ'անցունէր, միայն կերակրոյ միջոցին բնտանեաց քով կ'երթար, որ ատեն ամենքն ալ լուռ կը կենային: Դաւիթի կերպարանքն իւր տղաքները կը զարհուրեցունէր: Հեղինէ շատ կը ջանայր որ հետը զուարճայի խօսակցութեան բռնուէր, բայց անկարելի էր. կայսրուհին կայսեր մէկ շարժմունքէն, նայուածքէն իսկոյն բերանը կը գոցէր:

Դաւիթ առանձին մնացած ատեն՝ անպատմելի կատաղութեան մէջ կ'իյնար: Ինքզինք Մէհէմէտի առջև կարծելով՝ կը կշտամբէր զանիկա գահն իրմէ գողնալուն համար և կը խոստանար որ օր մը վրէժխնդիր ըլլայ: Իւր անդրանիկ որդին՝ պարտեզին մէջ հօրն ասանկ չափազանց բարկութեան և կատաղութեան բըռ-

նուիրը լսելով՝ անադան ուրեմն իւր մօրը հարցուց՝ թէ ինչպէս իւր հայրը կ'երազէր և կ'սպասէր, օր մը Մէհէմէտէն վրէժխնդիր պիտի չ'ըլլա՞ն:

— Որդեա՛կ իմ, պատասխանեց Հեղինէ, թաղաւորաց բերնէն ելած խօսքը նուիրական է: Մէհէմէտ մեր՝ Տրապիզոնի գահէն հրաժարելուն փոխարէն՝ երդմամբ խոստացաւ քաղաքին բնակչաց և հարստութեանց խնայել. եթէ Մէհէմէտ երդմնազանց չ'գտնուի, մեք իսկ առաջի Աստուծոյ և սրբոց մեր երդումը պիտի պահեմք:

Իրիկուն մը կայսերական գերդաստանին ընթրելէն յետոյ՝ ծառայներէն մէկն իմացուց՝ թէ ճանապարհորդ մը կայսեր ներկայութեան ընդունուելու շնորհը կը խնդրէ:

- Ի՞նչ է անունը, հարցուց Դաւիթ:
- Աբօսթօլի:
- Հեղինէ ուրախանալով ըսաւ.
- Դիտէի որ այդ մարդն զմեզ պիտի չ'մոռնար. թո՛ղ դայ, թո՛ղ դայ:

Այս յոյն երիտասարդը՝ որ մեծ պատիւ ունէր Տրապիզոնի արքունեաց մէջ, և իւր հարստութիւնք թագաւորի մը հարստութեանց կը հաւասարէին, կայսեր այս սիրելի պաշտօնեայն, կ'ըսեմ, որ Էջլէրիֆի դէպ ՚ի Տրապիզոն ըրած առաջին ճանապարհորդութեան ատեն հետը սիրով և բարեկամութեամբ կ'ապուեցաւ, բնաւ չ'էր ճանչցուեր: Յնցոտիներ հագած, փոշիով ծածկուած, մազերը գերծած, կարծես բոլորովին ծերացեր էր: Կայսրորդիք անոր ձեռքը թօթուելէ առաջ շուարեցան:

- Աբօսթօլի կայսեր առջև ՚ի ծունր իջնելով՝ ըսաւ.
- Տէ՛ր իմ:
- Այլ ևս տէրդ չեմ, այլ բարեկամդ, պատասխանեց Դաւիթ, տխրութեանս և անկեալ վիճակիս մէջ

միայն տեսութիւնդ կրնար մխիթարել զիս . գիտէի՝ որ թշուառութեանս մէջ ինձ հաւատարիմ պիտի մնայիր :

— Ո՛հ , գոչեց Աբօսթօլի , ամեն մէկ նոր փորձանք և թշուառութիւն զիս աւելի կը կապէ ձեզ հետ և ձեր անձն ինձ առաւել նուիրական կ'ընէ :

— Ի՛նչպէս , թոյլ տուի՞նք քեզ որ քու գահընկէց կայսրդ տեսնելու գաս . . . :

— Ո՛հ , զիս տեսնելուդ վրայ մի՛ ուրախանաք . . . Յովբայ տունը զրկուած պատգամաւորներուն պէս բօթաբեր եմ . . . :

Հեղինէ իւր աղջիկն յիշելով այլադունեցաւ . հօրը բերնէն ալ Գէորդ անունն ելաւ :

— Ներեցէ՛ք , ըսաւ Աբօսթօլի յուզեալ ձայնով մը , որ իմացունելիք չարիքս պատմեմ՝ ձեզ . այսպիսի գէշ լուրեր կարծեմ միայն բարեկամի բերնով կրնան իմացուիլ . չարիքը պատմելէս յետոյ վրէժխնդրութեան վըրայ պիտի խօսինք :

Կայսրորդիք գէպ 'ի Աբօսթօլի երկնցած , հետաքրքրութեամբ անոր խօսքերը մտիկ կ'ընէին . կայսրը յոնքերը պուստած , գլուխը ձեռքին վրայ յեցուցած , բոլոր ուժը վրան կը ժողովէր . Հեղինէ ալ՝ ըստ երևութիւն հանգարտ , Աբօսթօլիին իմացունելիք չար լուրերուն կ'պասէր :

— Տէ՛ր իմ , ըսաւ Աբօսթօլի լի բարկութեամբ , կը յիշէք անշուշտ՝ որ ինքզինքնիդ ամենուն փրկութեան զոհեցիք , գահընկէց լինել , անձն առիք՝ զՏրապիզոն ուրմբակոծութենէ և մէջի բնակիչներն աքսորանքէ ազատելու նպատակաւ Այս կամաւոր աքսորանաց մէջ ամեն մարդ զձեզ կ'օրհնէր և վրանիդ կը գթայր . իւրաքանչիւր ոք ձեզի շնորհակալ կ'ըլլար ձեր անձնանուիրութեան համար . Մէհէմէտ ի ձեզնէ չ'կրցած յափշտակածը՝ Տրապիզոնի բնակչաց առ ձեզ երախտագիտութիւնն և կարեկցութիւնն էր :

Դաւիթ հառաչեց .

— Հաղիւ թէ , յարեց Աբօսթօլի կրակ կտրած , ըզձեզ գէպ 'ի Սէրէս տանող նաւը տեսութենէ աներեւոյթ եղաւ , և ահա՛ Սուլթանը վրէժխնդրութեամբ , նա մանաւանդ իւր «*պոլիտեր*» և եէնիչէրեաց պահանջմունքները կատարելու համար՝ յաղթեալ քաղաքը ձեռքերնին տուաւ Ամբողջ երեք օր արիւնը փողոցներուն և պալատանց մէջ գետի պէս հոսեց . երեք օր հարուստներուն տուները , մեծամեծաց բնակարաններն և աղքատաց խրճիթները կողոպտուեցան քանդուեցան . թշնամանք , գաղանթութիւնք և անուն չ'ունեցող անդթութիւնք գործուեցան յալածելոց գէմ :

Դաւիթ խոր կերպով հառաչեց :

Կայսրորդիք աիշած մնացին .

— Ամենը այսչափ չէ , յարեց Աբօսթօլի . տուները կը կործանեն կը քանդեն . գանձերը կը կողոպտեն , քաղաքին վարթամներն աղքատութեան մէջ կը ձգեն՝ առանց յաղթեալ ժողովրդեան մ'ազդ ու թիւնը կարենալ ջնջելու . Մէհէմէտ կ'ուզէր՝ որ Տրապիզոնի մէջ այլ ևս ազդեցութեան տէր , գիտուն , հանճարեղ և հարուստ յոյն չ'մնայ : Չեր մայրաքաղաքը տաճկական քաղաքընելու համար՝ պէտք էր զայն թուրքերով լեցնելէ ըսկսիլ : Սուլթան Մէհէմէտ անհամբերութեամբ Տրապիզոնի մէջէն յոյն ցեղերը հատնելուն սպասել չ'ուզելով փութաց՝ որ ժամ առաջ այս շարժումն ըլլայ : Բնակիչներէն շատերը վարձատրելով՝ տաճկութեան ստիպեց : Մէկ գիշերուան մէջ ձեր նախկին պաշտօնեայնները բռնի իրենց տուներէն յափշտակեցին , այն պաշտօնեայնները , կ'ըսեմ , որք իրենց պատուով և հարստութեամբ նախանձելի և ահաւոր կ'երևէին . զանոնք շղթայակալ Մահմուտի նաւերը տարին , և անկէ ալ Պօլսոյ նաւահանգիստը :

— Անգթութիւն , գոչեց Դաւիթ :

— Դու ի՛նչպէս ազատուեցար , ըսաւ կայսրուհին Աբօսթօլիի :

— Բունիս մէջ եկան զիս բռնեցին և բարեկամացս հետ նաւը տարին . բայց հաղիւ թէ նաւը մտայ , մահը գերութենէն վեր դասելով՝ ինքզինքս ծովը նետեցի . . . : Դիշեր ըլլալով , զիս չ'փնտռեցին , կորսուած կարծեցին . . . : Կեանքս պահպանելու և վրէժխնդիր ըլլալու բաղձանօք՝ սկսայ ամենայն ջանիւք լուղալ և եղերքը գալ , բայց եղերքը հասայ չ'հասայ , զգացի՝ որ զօրութիւնս սպառած է : Մարդասէր ձկնորսք զիս հիւրընկալեցին , առանց ինձ հարցունելու՝ իմ արկածներուս պատմութիւնը գուշակեցին և զիս իրենց աղքատիկ խորճի մէջ պահպանեցին , մինչև որ վրաս եկած սաստիկ տենդէն բժշկուեցայ : Բաւական զօրանալէս յետոյ՝ երբ այս բարեսիրտ մարդիկները տեսան որ ալ իրենցմէ պիտի մեկնիմ՝ հարցուցին ինձ .

— Էր վախաքի՞ս՝ որ մեր նաւակով զքեզ ուղած տեղդ տանինք :

Այս բարեկամաց անձնանուիրութիւնը դովելով օրհնեցի . իմ միակ բաղձանքս էր ձեր քով գալ . Մէհէմէտի երդմնազանցութիւնն իմացունել և ըսել . «այսուհետև ձեր երդումէն ազատ էք , ձեր ազատութեան համար բան մը պիտի չ'ընէք» , Տրապիզոնի ձկնորսները զիս Սէրէսի ամենէն մօտ ծովերկերքը բերած տեննին՝ տեսայ որ Մահմուտ փաշայի նաւերը յաղթական՝ Ոսկեղջիւրը կը մտնէին . . . : Եւ ոչ այսչափ միայն , այլ և Մէհէմէտի զօրքը Տրապիզոնի , Սերուսի և Թօքթաթի դաշտերուն մէջ բանակած է . . . աքսորեալ գերդաստանին սղաքները կէլիպոլու տարուեցան , որպէս զի իւրեմաներէն կրթուին և եէնիչերեաց գունդին մէջ մտնեն :

— Գէորդը , մեր սիրելի Գէորդն ինչ եղաւ , հարցուցին կայսրորդիք :

Աբօսթօլի սակաւիկ մի լուռ կեցաւ :

— Մեռա՞ւ , հարցուց Հեղինէ :

— Ո՛չ տիկին , պատասխանեց յոյն երիտասարդը ,

ընդհակառակն Սուլթանին աչքը մտած է :

— Անտարակոյս , իւր քրոջ շնորհիւ Սուլթանին սիրելի եղած է :

Աբօսթօլի զլուխը ծռեց :

— Ո՛հ , խօսէ՛ , խօսէ՛ , աղաղակեց Հեղինէ , ամեն բան պէտք է իմանանք :

— Գէորդ իւր ուրացութեան համար Սուլթանին սիրելի եղած է :

— Ո՛հ , ուրացութենէ՛ զատ ամեն տեսակ թշուառութեան և նախատանաց կրնայինք հանդուրժել :

Դաւիթ ավշած Աբօսթօլին վրայ նայելով ըսաւ :

— Ամենն այսչափ չէ , այնպէ՛ս չէ . տակուին մեզի յայտնելիք սոսկալի բան մ'ունի՞ս :

— Աղջիկդ գերեաց ամենէն դժբաղդն է :

— Գերի՛ , ըսաւ կայսրուհին . Մէհէմէտ զանկա իրեն կնութեան չ'առա՞ւ :

— Ո՛չ , պատասխանեց Աբօսթօլի . այս նախատինքը ձեր գերդաստանին պահուած ամենէն վերջին նախատինքն է Կոմեննոսեանց և Բանդակուզենոսեանց աղջիկ ժառանգը Հարէմի հարճերուն մէջ է :

Դաւիթ ոտքի վրայ ելաւ , իւր ցաւը յիմարութեան փոխուեցաւ . բայց քիչ մը հանդարտելով՝ բազուկները կայսրուհւոյն երկնցուց և յուզեալ ձայնով ըսաւ .

— Աւա՛ղ , որդեակ'կք իմ , պէտք էր որ ես ձեր մէջ մեռնէի , քան թէ ղձեղ այոջափ ամօթալից թշուառութեանց մատնուած տեսնէի :

Գթասիրտ կինն իւր այրը խիստ դժբաղդ տեսնելով՝ միայն սա՛ խօսքն ըսաւ .

— Մէհէմէտ այսչափով պիտի չ'բաւականանայ . մեք իւր կատաղութեան զոհ պիտի երթանք և մեր հաւատքին համար պիտի նահատակուինք . . . : Երկինք մեր վրայ հաշտ ակամբ կը հայի և մեզ գթալով կը տընօրինէ՝ որ մեր ծայրահեղ թշուառութեանց պատճառաւ այս աշխարհի մէջ և ոչ մէկ բանի փախաքինք և

կորուսածներնուս վրայ չ'ողբանք :

Կայսրուհին այս խօսքերը լինցնելէ յետոյ՝ ծառայն ներս մտնելով՝ ըսաւ .

— Օտարական մը՝ ձեր գերդաստանէն եղող իշխանի մը կողմէն գալով՝ իբրև պատղամաւոր ձեզ ներկայանալու կը փախաքի :

— Թո՛ղ գայ , ըսաւ Հեղինէ , մեր սիրտը շատ ճամբած է . ի՛նչ որ ալ ըսէ այդ մարդը՝ ասկէ աւելի պիտի չ'տխրինք .

Մէկ վայրկեան վերջը տէրվիշի հագուստով ծեր մը սրահը մտնելով՝ ըսաւ .

— Շատ կարևոր խօսքեր ունիմ ըսելիք . հոս թըշնամի և սուտ եղբայր չ'կայ :

— Խօսէ՛ , ըսաւ Դաւիթ , ամեն բանի պատրաստ ենք :

— Սհաւասիկ իմ ձեզի ըսելիքս թիւրքմէնիստանի աղատ իշխանին , Էշէրիֆի կողմէն . «Մերձակայ ձմեռէն առաջ՝ Տրապիզոնը առնելոյ համար բանակ մը պիտի յարուցանեմ . . . որպէս զի Մէհէմէտ Բ. ի երգմնազանցութեան և անդթութեանց վրէժխնդիր ըլլամ » . Զիս քեզի կը զրկէ հարցնելու համար՝ թէ իւր բազկին օգնութիւնը պիտի ընդունին :

— Կ'ընդունիմք , պատասխանեց Հեղինէ , աղջկանս գէմ եղած անարգանաց և մեր հպատակաց գէմ գործուած անդթութեանց համար՝ մեր երդումէն ազատ ենք :

— Ուրեմն եօթն ամիսէն վերջն անձամբ հոս պիտի գայ . . . : Զեր ազնուական ազգականէն նամակ չ'բերելուս պատճառը՝ ճամբայներուն ապահով չ'ըլլալն է . . . : Հաւատարիմ թիւրքմէնին ձեռքէն ո՛ր և է նամակ կրնայ գողցուիլ բայց անոր բերնէն դաղտնիք առնուիլն անկարելի է :

Պատգամաւորն անկեալ դերդաստանին իրեն տալիք նուէրը չ'ընդունեց . մի և նոյն իրիկունը ճամբայ

ելաւ Էշէրիֆի քով երթալու համար :

Էշէրիֆ իւր երկիրը վերադարձած չ'էր : Մէհէմէտի երգմնազանցութեան վրայ բարկացած , և իբրև իշխան և իբրև ազգական հոմնեմնոսեանց՝ իւր սերնդեան գէմ եղած անարգանքէն վիրաւորուած՝ իւր բարկութիւնն ամենէն , մինչև իսկ Մէհէմէտէն ծածկեց . և պատրուակ բռնելով որ իւր մօրը , Սարայի առողջութիւնը՝ որպէս թէ լաւ կլիմայ կը պահանջէ , խնդրեց որ Եէնիշէհիր մնայ , փոխանակ Ուզուն — Հասանի հետ թիւրքմէնիստան ուղևորելու :

Իրօք , Էշէրիֆի իւր մօրն օգափոխութեան համար ընտրած քաղաքն ալ իւր դիրքով և շրջակայ վայրաց գեղեցկութեամբ երևելի էր :

Եէնիշէհիր բլրոյ մը գագաթը շինուած ըլլալով՝ Պրուսա քաղաքին վրայ կը նայէր , որ Ողիմպոսի զառ 'ի վայրին վրայ շինուած էր , չորս կողմէն ծառերով և ծաղիկներով շրջապատուած : Յամարայնի ձեանց հայելէն գոյացած փրփրադէլ վտակներ քաղաքին հովիտները կ'ոռոգանէին . շատ օտարականներ՝ առողջարար ազդեցութիւն ունեցող ջերմուկները կ'երթային . գործունեայ անթիւ ժողովուրդներ՝ Պրուսայի սօսերուն ստուերը , այդիներուն ծիրանի դոյնն և դաշոաց՝ թէ՛ բերքի և թէ՛ արօտի կողմանէ արգասաւորութիւնը տեսնելով՝ հոն կը դիմէին : Յունաց կայսերք Պրուսայու մէջ ամառուան համար պալատ շինել տուած էին .

Ասպատակութիւններէն պարտասեալ մեծ Օթմանն Եէնիշէհիր քաջուեցաւ՝ հոն իբրև պարզ զինուոր և հովիւ ապրելու համար : Ընդարձակ կայսրութիւն մ'իւր որդւոյն կը յանձնէր . բայց երբ թուրքիոյ թագաւորութեան հիմնադիրը մեռաւ , իւր խրճիթին մէջէն միայն փայտէ տրգալ մը , աղաման մը , բաճկոնակ մ'իւ ապարօջ մը գտնուեցաւ : Բոլոր ունեցածն ոչխար և ձի էին . այս անասնոց ցեղն այնչափ յարգի է՝ որ կ'ըսուի թէ մինչև ցայսօր Ողիմպեան լեռան դալարուս կողերուն վը-

րայ այն անասնոց տեսակէն ձի և ոչխար կը գտնուին :

Մարա և իւր որդին այն պալատն իջան՝ յորում Մուրատայ, Պայէզիտին և Էագուպին՝ կայսերական գերդաստանին իշխանուհեաց հետ հարսանեաց հաղէսները կատարուած էին :

Էշէրիֆ ներքսապէս վիրաւորուած հպարտ և անձնասէր միանգամայն՝ իւր ցաւալի գաղտնիքը բանայիւս յէն զատ՝ ուրիշ մէկուն ալ չ'էր յայտնէր :

Բանայիայի առջև՝ որ իւր առաջին գաղտնիքներն իմացած էր՝ իւր հաւատարմութիւնը կը խոստովանէր և յայտնի համարձակ Աննա կոմսնոսի վրայ կը խօսէր :

Իշխանին Եէնիշէհրի շրջակայ վայրերն ըրած շրջագայութեանց ատեն՝ մանկամարդ աղջիկն ալ կ'ընկերանայր անոր : Ծաղկեալ նունենիներով, տերեւալից թզենիներով և հեռուանց անոյշ հոտերնին սփռող նարնջներով գեղեցկացեալ դաշտաց մէջ կը ձեմէին : Այս շրջագայութեանց միջոցին՝ Էշէրիֆ և Բանայիա Մէրէսի աքտորելոց վրայ կը խօսէին . երիտասարդն Աննայի անունը բերնէն վար չ'էր ձգեր :

Բանայիա լուրթեամբ Աննա կոմսնոսի գովեստը մտիկ կ'ընէր . Էշէրիֆ մերթ ընդ մերթ խօսքը կտրելով՝ մանկամարդ աղջկան կ'ըսէր .

— Ձեա գիտեր՝ թէ Աննայի համար ինչ կը քաջեմ ներքսապէս :

— Մուրա՞ծ ես ուրեմն՝ որ առանց յուսոյ կը սիրեմ, կը պատասխանէր Բանայիա :

Էշէրիֆ անցելոյն վրայ իբրև անդարմանելի թշուառութեան մը վրայ կը խօսէր, կը յուզուէր, կը բորբոքէր, բայց իւր ընկերը զինքը կը հանդարտեցնէր . խօսքն առ մանկամարդ աղջիկն ուղղած ատեն՝ խիստ մեղմ կը խօսէր, չնորհակալ կ'ըլլար անոր՝ իւր համբերութեան և քաղցր բնաւորութեան համար . Երբեմն շրջագայելէ սաստիկ յոգնած ատեննին այժ արածողի մը քով կ'երթային՝ ջուր ուզելու համար, մեկնած ժա

մանակնին պարգև կուտային հովուին : Ուսկից որ կ'անցնէին, ամենքն ալ զիրենք կ'որհնէին . ծերերն ալ այս երկու երիտասարդ և գեղեցիկ արարածները տեսնելով՝ մտքովն կ'ըսէին՝ թէ ապագայ ամուսիններ են :

Իրիկուն մ'Էշէրիֆ Բանայիայի առջև Աննա օրիորդին վրայ խօսած ատեն՝ զոր ամբողջ մէկ ժամ իւր նշանածն անուանած էր, մանկամարդ աղջիկը քաղցրութեամբ Էշէրիֆի ըսաւ .

— Եթէ առանց այն օրիորդին չ'ես կրնար ապրիլ, ինչո՞ւ զանիկա ձեռք ձգելու չ'ես աշխատիր :

- Ի՞նչպէս պիտի կարենամ :
- Սուրբանին ձեռքէն յափշտակէ :
- Աւելի շուտ կրնամ առնուլ Անդրիանուպօլիս և Կ. Պօլիս, քան թէ իւր կանանոցին մէջէն հարձ մը :
- Ուրեմն այդ գործը կատարելը ճարտար և անձնանուէր մէկուն յանձնէ :

- Չ'կայ մէկը՝ որ ինձ համար մահն աչք առնէ :
- Բանայիան, պատասխանեց մանկամարդ աղջիկը :
- Ինքզինքդ վտանգի մէջ պիտի դնես :
- Գեղի ծառայելու համար՝ մահը յանձն կ'առնում . . . Միայն թէ ինձ պիտի օգնես :
- Ի՞նչ պիտի ընես, ծրագիրդ ո՞րն է :

— Եթէ կ'ուզես, տէ՛ր, երեք օրէն Եէնիշէհրէն կը մեկնիմ, հետո միայն հաւատարիմ կուրկանս առնելով : Ծովեզրը հասնելով՝ անկէ դէպ 'ի Բիւզանդիոն պիտի նաւարկեմ . . . Նպատակիս յաջողութեան համար թերևս շատ ամիսներ պէտք պիտի ըլլան : Այս միջոցին, Թիւրքմէնիստան ոտք հանելու և պարսից նիզակակցութիւնն ընդունելու գործը հօրդ թողլով՝ դու Անդրիանուպօլիս պիտի երթաս, ուր իմ մէկ լուրիս պիտի սպասես : Լուրն առածիդ պէս՝ Մէրէս կայսերական գերդաստանին քով պիտի երթաս, և զանիկա մեր ծովերզերքն առաջնորդես, ուր Աննա իշխանուհւոյն հետ քեզ պիտի սպասեմ . . . :

— Այսպիսի բան ընելու փորձ պիտի փորձես . ի՞նչ .
Մէհէմէտի հարեւոյ մտնելէն աւելի դժուարին բան կըր-
նայ ըլլալ :

Մանկամարդ աղջիկն իշխանին ձեռքէն բռնելով՝
վշտալից և միանգամայն սիրուն և ծաղրական ձայնով
բսաւ .

— Էջէրիֆ , չե՞ս տեսներ որ ես գեղեցիկ եմ :

Գ Լ Ո Ւ Խ Ը :

ԳՈՒՍՍԵՆՆ

Այս դէպքերէն քիչ ժամանակ վերջը՝ Կ. Պօլսոյ մէջ
մի միայն Սօպէիհա (Արշալոյս) անուն գուսանին սքան-
չելի գեղեցկութեան և չնաշխարհիկ տաղանդին վրայ
կը խօսուէր : Ո՞րն էր Սօպէիհայի երկիրը . ո՞չ ոք գիտէր .
ո՞ր ցեղէն և ո՞ր ընտանիքէն սերած էր . մէկն ալ տե-
ղեկութիւն չ'ունէր : Սօպէիհա առանձնակեաց էր , դուրս
ելած ատեն՝ հետը միշտ հսկահասակ սև մը կը գտնը-
ւէր , որուն սոսկ կերպարանքը՝ օրիորդին խիստ շատ
մօտեցող հանդիսականները կը հեռացունէր անորմէ .
Հսկահասակն իւր տիրուհւոյն կաքաւել ուղած ժամա-
նակ անմիջապէս գորգը կը տարածէր , և նուազարանն
ալյարդարելով ձեռքը կուտար :

Երբ հանդիսականք՝ նորատի աղջկան արուեստին
վրայ սքանչացած՝ անձրևի պէս ոսկի դահեկաններ ըս-
կըսան տեղալ , սևը զանոնք ժողովելով ամանի մը մէջ կը
լեցունէր . յետոյ ամանն իւր տիրուհւոյն կը ներկայա-
ցունէր . սա ալ բաղմութեան մէջէն քրձաղգեաց ծե-
րեր և աղքատիկ ու անօթի տղաքներ վնտուելով՝ հա-
ւաքուած ստակներէն առատ ողորմութիւն կը շնորհէր
անոնց :

Բիւզանդիոյ բոլոր հարուստ և աղղեցութեան տէր
մարդիկ Սօպէիհայի տաղանդին , անչահասիրութեան ,
օրինաւոր վարմունքին և անհամեմատ գեղեցկութեան
վրայ կը խօսէին շարունակ :

Ամեն ոք կ'ախորժէր և կը փափաքէր՝ որ երեկոյթն երուն մէջ Սօպէիհա ալ գանուէր, սակայն խիստ քիչ երուն հրաւէրը կ'ընդունէր՝ միոխարէն մեծագումար դրամ պահանջելով, կ'ուղէր ալ որ իւր հսկահասակ գերին միշտ հետն ըլլայ : Խնդրեցին Սօպէիհայէն՝ որ գերին հետը չ'գայ, բայց նա իմացուց՝ որ առանց անոր չ'կրնար ո՛չ երգել և ո՛չ ալ կաքաւել : Վերջապէս, յա՛մառ օրիորդին կամաց զիջանիլ հարկ եղաւ :

Սօպէիհայի երգած ատեն՝ սեն անբացատրելի հիացման մէջ կ'ընկրմէր եթէ կաքաւելու ըլլար՝ նայուածքը միշտ անօր վրայ կը յառէր : և երբ հսկահասակը անանէր՝ որ հանդիսականաց մին յայրատ աչօք իւր տիրուհւոյն վրայ կը հայի՝ անմիջապէս ձեռքն իւր կարմիր մետաքսեայ զգեստուց տակ ծածկուած դաշոյնին երախակալին վրայ կը տանէր :

Մէհէմէտ Բ. իւր «Երջն» մէջ գուտանին 'վրայ խօսուիլը լսեց : կրնար անմիջապէս հրաման ղրկել որ «Երջն» գայ, բայց մարդարտով լեցուն տուփով հանդերձ հրաւիրակ մը ղրկեց ետեւէն :

Սօպէիհա քաղցրութեամբ պատասխանեց հրաւիրակին՝ թէ երեկոյին անձամբ պալատը պիտի գայ : Սակայն հրաւիրակը մեկնելէն յետոյ՝ երբ սեին հետ առանձին մնաց, ժպտեալ և վառվռուն դիմօք ըսաւ .

- Վերջապէս, գործերնիս յաջող է :
- Ի՛նչ, ազաւնին անդղին բո՞յնը պիտի երթայ, ըսաւ հսկայն :
- Կուրկան, չե՛ն տեսներ որ նպատակիս կը մօտենամ, պատասխանեց մանկամարդ աղջիկը :
- Կարծեմ՝ թէ ինքզինքդ վրայ պիտի տաս, յարեց սևը տխրագէմ, կարծեմ՝ թէ պիտի մեռնիս առանց կայսերաց աղջիկն ազատելու :
- Ինչո՛ւս պէտք . եթէ մեռնիմ, եթէ կեանքս վըրայ տամ Էջլէրիֆի երջանկութեան համար, կը կարծես՝ որ Էջլէրիֆ առ իմոյ յիշատակի յախտենական արտա-

սուք պիտի չ'թափէ՞ : Կը կարծես՝ որ մեռնելէս յետոյ իւր սրտին մէջ տեղ մը պիտի չ'գրաւեմ, թէպէտ կենդանութեանս ատեն չ'կրցայ :

— Գնա՛ ուրեմն, ըսաւ հսկայն հառաչելով . բայց դու Պալքէրնի պալատն եղած ատենդ, ես ալ նաւակ մը հեծած վոսվորի եղերքը բարձրացեալ պատշգամներուն տակ պիտի գտնուիմ :

— Ո՛հ, վրագ կատարեալ վստահութիւն ունիմ, կուրկան :

— Մինչև վերջին շունչս ալ վրաս վստահ եղի՛ր, Բանայիա՛ :

Մանկամարդ աղջիկը վրան գլուխը շտկեց զարդարեց . կուրկանի աչաց խիստ գեղեցիկ երևցաւ, և միայն սա դուլետը տուաւ անոր .

— Բանայիա՛, պիտի յաջողիս . Աստուած անգամ պիտի չ'կարենայ քեզի դէմ դնել :

Մէկ ժամ վերջը պալատին դռները կը բացուէին դեռահասակ գուտանին առջև . կուրկանն ալ գէպ 'ի նաւահանդիստը կ'ուղղէր :

Սուլթանը Կ. Պօլսոյ սէրային (Մէրայ պուսնու) սըրահներէն միոյն մէջ կը գտնուէր, ուր Բիւզանդիոյ արուեստագիտաց չքնաղ գործերը պահուած էին :

Ոսկեզօծ պատերուն վրայ ծաղիկներ և արաբացի նկարներ գծուած, ձեղուններէն ալ քանդակեալ կանթեղներ կախուած էին . վարդերու կողովներ անոյշ հատերնին արծաթեայ երեքօտանիներու վրայ այրուած ռետիններուն հետ կը խառնէին : Սուլթանին կոչնականները փոքրիկ թիւ մը կը կազմէին . Մէհէմէտի քով Մահմաւտ փաշայն, Շիթայի Գէորդ իշխանն և իւր ամենասիրելի վէղիրներէն միայն երեքը կը գտնուէին :

Սօպէիհա երկայն շղաշատեռներ վրան ձգած Սուլթանին ներկայացաւ . յետոյ մի առ մի վրայէն հանեց սիրուն նազանօք, ինչպէս որ առաւօտեան զեփիւռը գարնան արշաբուսոյ գեղեցկութիւնը ծածկող անօր մէ-

դեբը կը ցրուէ :

Սուլթանն արդէն դեղեցիկ բաներ տեսնելու վարժուած էր . սակայն Սօպէիհայի դեղեցիկութիւնը տեսած ատեն խելքը գլխէն թռաւ :

Սօպէիհա իւր դեղեցիկութեան վրայ՝ թագաւորին զարմանանքն և ամիշիւր տեսնելով՝ ուրախացաւ և հպարտացաւ . յետոյ նուագարանը յարդարելով՝ Ֆէրտուսի պարսիկ բանաստեղծին տխուր և անուշիկ երգերէն մին սկսաւ :

Իւր քաղցր ձայնը մերթ ընդ մերթ անպատում տըխուրութեամբ կը լեցուէր , և իւր դեղդեղանքները սոխակին դայլայլիկներուն հետ կը միձէին :

Սօպէիհա տղայի պէս ծիծաղեցաւ . սիրահարական երգէն վերջը գինովի երգ մ'սկսաւ :

Մէհէմէտ իւր ապարօշք զարդարող գարգմանակը գլխէն հանելով գուսանին ոտից տակ նետեց . աղիկն ալ առջի բերան մաղերուն մէջ դնել ուզեց , բայց վերջը կուրծքին վրայ կախեց :

Իբր թէ կայսերական այս նուէրը Սօպէիհայի խորհուրդները փոխած ըլլար , գաղտակրով դրուագեալ նուագարանը ձգելով՝ արծաթեայ փոքրիկ զանգակներով զարդարուած թմբուկ մ'առաւ , և երկու ձեռօք զայն գլխուն վրայ բռնելով՝ սկսաւ արագ քայլերով կաքաւել՝ մեղուաց թռիչներու պէս թեթև : կարծես ծաղկաւէտ մարգագետնի վրայէ անցնող քերէ և դիւրաթեք ոստի մը վրայ դադար առնող և օդոյն մէջէն թռչող թռչուն մ'էր : Սուլթանը՝ աչքերը գուսանին վրայ յառած իւր վղէն սուտակնեայ մանեակը փրցուց . Սօպէիհա այս շարժմանքը տեսնելով՝ նոր նուէրն ալ ընդունեց : Այն ատեն գուսանն իւր յաջողութեան վրայ բոլորովին ապահով՝ անօգուտ թմբուկը նուագարանին քով նետեց , և մանեակին հետ խաղալով՝ մերթ լանջաց վրայ կը գնէր զայն , մերթ իւր բաղկաց վրայ կը գալարէր օձի մը պէս և մերթ մաղերուն վրայ կը շող-

շողէր : վերջապէս յողներով իւր ոսկեղէն շղաշատեռն իր դեղեցիկութենէն աւելի դերազանց պարկեշտութեամբ վրան առաւ , և կէս մը յերկիր խոնարհած եկաւ գորգին վրայ Սուլթանին ոտից տակ նստաւ . աչքերը գոց էին , սիրան իւր բեհեզեայ և մետաքսեայ զգեստուց տակ կը բարախէր :

— Սօպէիհա՛ , ըսաւ Սուլթանն ասելու ձայնով :

Կաքաւելչ աղիկը փակեալ արտեանունքները բանալով բոլորովին նայեցաւ և տեսաւ՝ որ Մէհէմէտին հետ առանձին մնացեր են :

Սօպէիհա մէկ ոտմամբ սրահին մէջ տեղը նետուեցաւ :

— Ինձ մտիկ ըրէ՛ , ըսաւ Սուլթանը . չ'եմ ուզեր որ այս պալատէն հեռանաս . քու երգերդ և կաքաւներդ զիս զարմացուցին հիացուցին Բովս կեցի՛ր . բուլր երջանկութիւնս քու ամենէն յիմար հաճոյքներդ անգամ գոհացնելուս մէջ պիտի դնեմ :

— Յիմար հաճոյք . բնաւ այսպիսի հաճոյք ունեցած չ'եմ , աէ՛ր . վրաս քեզի խօսողներն անշուշտ իմացուցած են քեզ՝ որ եթէ հարուստներուն ոսկին ձեռքս անցնի՝ միշտ աղքատաց կը բաշխեմ :

— Լա՛ւ , այս պալատին շնաշխարհիկ դեղեցիկութեանց մէջ դու ալ տեղ ունեցի՛ր :

— Ե՛ս , աղաղակեց Սօպէիհա արհամարհոտ ժպիտով , կ'ուզես որ Զահօրայի , Մալիպայի հե՞տ ապրիմ , կ'ուզես որ Մուսիայի և Գէնժէի ակոյեթա՞նն ըլլամ : Ուրեմն դու զիս բաւական չ'ես ճանչցեր , Սուլթան . ես կովիասու աղջկանց ցեղէն չ'եմ , երակացս մէջ ազատարիւն կը խաղայ :

— Չ'եմ բարկանար հպարտութեանդ գէմ , որովհետեւ աւելի հրապուրիչ կ'ըլլաս , այս առաջին անգամն է որ կամացու գէմ հակառակիդ վեհ հպարտութեան մէջ դեղեցիկութիւն կը նշմարեմ Սուլթանին ոսկին դքեղ չ'հրապուրեր , հարճերուս մէջ մտնել չ'ես

ուղեր . պիտի ընդունին անոնց ամենուն վրայ իշխելը :

— Գիտե՞մ թէ ո՞րչափ պիտի տեէ այս իշխանութիւնը , պատասխանեց Սօպէիհա ուսերը թօթուելով և արհամարհոտ ժպիտ ցոյց տալով . . . : Եթէ պատե-
րազմիկը զքեզ ֆրէնկ'անուանեն քաջագործութեանցդ համար , կիներն ալ Անու , Անուսու կը կոչեն :

— Պէ՞տք է քեզի տեղ մը տալ կայսրութեան իշխաններ հասցունող կանանց մէջ :

— Թո՞ղ Բարձրութիւնդ իմ հպարտութեան և համարձակասութեան վրայ չ'զարմանայ բնաւ . քաջ գիտե՞մ թէ քու ամենէն բուռն կիրքդ ինչ կ'արժէ . . . : Կը յիշե՞ս , ազնիւ Սուլթան , որ իրէնսուր , Պօլսոյ առման ատեն դերի ինկած քրիստոնեայ գեղեցիկ ասորեստանցին կը սիրէիր : Այս կնոջ առաքինութիւնն զքեզ զարմացուց . օր մը քեզ ընդդիմացաւ , մինչ զի կրնամ ըսել թէ այնպիսի ընդդիմութեան պատահած բնաւ չ'ունէիր , սակայն , անբարտաւան առիւծ , ձայն չ'հանցիր և անոր ոտից տակ վեց ամսոյ չափ սողացիր և մռնչեցիր . . . : Օր մ'եէնիչէրիք գանդատեցան , ժողովուրդը արտնջաց քեզի դէմ՝ որպէս թէ այն կնոջ երեսէն մեղկութեան մէջ իյնալով՝ ալ յաղթութեան ետեւէ չ'ես ըլլար . . . : Վախցար որ զօրքերդ կ'ապրտամբին , որովհետեւ արդէն ձայն ելած էր թէ դու իրէնսուի հաւատքն աւելի սիրելուդ համար՝ ալ իսլամութեան նախանձախնդիր չ'ես եղեր . . . : Այն ատեն հաղար հինգ հարիւր եէնիչերիներէ բաղկացեալ գունդ մը ժողովեցիր պալատիդ առջև , հետդ երկայն շղաչատեռներով ծածկուած կին մ'ունենալով դուրս ելար . . . : Այս շղաչատեռներն անձամբ խղեցիր մանկամարդ աղջկան ճակտէն . այնչափ գեղեցիկ էր՝ որ աղջիկն և եէնիչերիները զարմացան ափշեցան :

«Երբէ՞ք , ըսիր դու բազմութեան դառնալով , Աստուած այսքան կատարեալ և սիրոյ արժանի կին մը ստեղծած չ'է բնաւ . սակայն կը կարծէ՞ք՝ որ Մէհմէմէ-

տի սուրը Ժանդոտի և առ Մարդարէն ունեցած նախանձը շիջանի այս երկրաւոր յաւերժահարսին հետ կապուած ըլլալուն համար . . . : Այս ձեր ամբաստանած Մէհմէմէտն աղէկ ճանչցէ՞ք . . . » :

Տէր , Չուլուշ մէկուն նշան ըրիր , և ահա՛ իրէնսուի գլուխն արիւնշաղախ ոտիցդ տակ թաւալեցաւ . . . :

Այս յիշատակը Մէհմէմէտի ոսկորներուն մէջ սարսուռ ձգեց :

— Ճշմարիտ է , հարցուց Սօպէիհա :

— Ճշմարիտ է , պատասխանեց բռնաւորը , բայց , յարեց սիրտ առնելով , հիմայ ամեն բան վոխուած է յիս . բոլորախիքս գանուղներն ամենքն ալ մեծցան են . . . : Անցած դացած բանին վրայ մի՛ խօսիր և սիրտդ մի՛ հատցուներ , իրէնսու միայն գեղեցիկ էր . . . դու դիմաց գեղեցկութեան հետ մտաց բոլոր ձիրքերն և արուեստից բոլոր կատարելութիւններն ալ ունիս : Միշտ ընչ պէս յանպատրաստից երգեր կը յօրինես , բանասեր ծուրութիւններդ Պարսիկ Ֆերտուսիներէն կը գերազանցեն , և եթէ գեղեցկութիւնդ մոռնամ , մտաց ձիրքերդ , որոց և ո՞չ ոք կը հաւաստի , միշտ զքեզ ինձ պիտի յիշեցունեն . . . :

— Գիչ մը յառաջ , ըսաւ Սօպէիհա , զիս կանանցդ մէջ դնել կ'ուզէիր , որոնք թէ՛ ազնուական և թէ՛ գեղեցիկ են : Ըսել կուզես՝ որ Սիւլէյման պէյին աղջկանէն՝ որ քիր — Ահմէտի քոյրն է , և մանկամարդ Տօրիսյէն և Ջիւլդատըր իշխանին Սթթի անուն աղջիկէն վա՞ր պիտի ըլլամ :

— Առաջինը պիտի լինիս :

— Ո՛չ , որովհետեւ ասոնցմէ վեր սուլթանները կան , ինչպէս Ֆանդէսի աղջիկը , կոստանդնի եղբօր Տիմիթրիոսի աղջիկը , որուն հետ ամուսնացար Բիւզանդիոյ աւերակաց վրայ , ինչպէս նաև Տրապիզոնի վերջին կայսեր հօրեղբորդուոյն Ալեքսիս կոմսենոսի այրին . . . :

— Լա՛ւ , զքեզ ասոնց հաւասար պիտի ճանչնամ :

— Ինչ որ կը պարտիս իմ ազնուատոհմութեանս՝ միայն անիկա ըրէ՛, որովհետեւ հայրս Սրշիպեղագոսի յոյն իշխաններէն մէկն էր :

— Վերջապէս, ամեն կերպով դո՞հ եղա՞ր :

— Հիմայ կը տեսնենք : Սյդ քու յամառութիւնդ սաստիկ կրից արգիւնք կրնայ ըլլալ . այժմ՝ զիս ո՛րչափ կը բարձրացունես, կարելի է որ վերջն ալ այնքան արհամարհես, և այն ատեն զիս պարկի մը մէջ կարելով վտարի խորը ձգել տաս . շատ դո՞հ կ'ըլլամ եթէ թըրանսիլվանիոյ վոյվոսային աղջկան անգութ բազդին զիս ալ չ'արժանացունես . . . : Մուրատ Բ. այս աղջիկն իւր բոլոր կիներէն աւելի կը սիրէր, և երբ դու գահը բարձրացար, իւր պղտիկ տղան աւաղանի մէջ խեղդել տըւիր և զՄարա որսի պէս իսհագ պէյլին առջև նետեցիր :

— Ո՞հ, շարունակ սպանութեան սոսկալի տեսարաններու յիշատակներ կ'արթնցունես մտացս մէջ :

— Սուլթան, միթէ ուրիշ յիշատակներ կ'ա՞ն միտքդ, Հիմայ դու ինձ ոսկեղօժ բանտ մը տալ կ'ուզես, սակայն պէտք չէ՞ այժմէն մտածեմ թէ յետոյ ո՛ր դռնէն պիտի ելնեմ . . . : Յօնքերդ կը պուտես, կարմիր շրթունքներդ յանկարծ արիւն կը դառնան, կրակոտ աչացդ մէջ բարկութիւն կը շողայ, դու՛ որուն հետ ամեն մարդ ծունկի վրայ եկած կը խօսի, համարձակախօսութեանս խելք չ'ես կրնար հասցունել . . . : Զայրութդ, ատելութիւնդ բանի տեղ չ'եմ դներ, սպառնալեացդ՝ պիտի դիմադրեմ. կ'ըսուի՝ թէ դու բռնաւոր ես : Երբ գիտնամ որ վաղրէն պիտի բղղտուիմ, հետը խաղալ կ'ըսկըսիմ :

Սոպէիհա իւր ապստամբական խօսքերուն մէջ անգամ գեղեցիկ ըլլալով՝ Մէհէմէտ զանիկա պատժել չ'ուզեց իւր յանդուգն խօսից համար : Ընդ հակառակն, այս կռիւր շարունակելու կը փափաքէր :

— Աշխարհի տէրը կառավարելու գաղափարն և ոչ

այլ ինչ կրնայ զիս հրապուրել ըսաւ Սոպէիհա :

— Ուրեմն դաւադանս քու մանկական ձեռքդ ա՛ռ, դոչեց Մէհէմէտ, ամենայն անհամբերութեամբ կ'ըսպասեմ՝ որ ինձի սա՛ խօսքը զուրցես . « Ես կիներ ըլլալ կ'ուզեմ » :

— Կ'ընդունիմ, բայց պայման մը կը դնեմ . զիս սպահովցուցիր թէ ո՛րչափ կը սիրես քու կիներդ . սակայն վերջին անգամ հարէ՞ սեռամէն ներս մտնող աղջկան իշխանութենէն կը զարհուրիմ :

— Աննա կոմնենտան ըսել կ'ուզե՞ս :

— Սյո՛, պատասխանեց Սոպէիհա դողալով դողալով . անոր համար կ'ըսեն՝ թէ շատ գեղեցիկ է :

— Տրապիզոնի աւարէն բաժին պէտք էր ինձ . սյս աղջիկն առի . . . :

— Ինձ կը զոհե՞ս զայն :

— Առանց ցաւելու . . . հրամայելուդ պէս ա՛ռնն անոր գլուխը քեզ կը բերէ . . . :

— Միշտ արի՛ւն . . . : Ո՞հ, կը խաբուիս, Սուլթան, չ'եմ ուզեր այն աղջկան մեռնիլը, այլ միայն կ'ուզեմ որ իմ հրամանացս հնազանդի և գերիս ըլլայ :

— Սյս իրիկուրնէ անիկա քու իշխանութեանդ տակ պիտի տեսնես . անմիջապէս հրամայեմ որ փափաքներդ լեցուին, կամքդ կատարուի :

Մէհէմէտ սրահէն դուրս ելնելով, Սոպէիհա առանձին մնաց : Սուլթանն աներևոյթ ըլլալուն պէս՝ մանկամարդ աղջիկը դրասեղանին վրայէն թերթ մը մագաղաթ առնելով՝ արագութեամբ վրան մի քանի տող բան գրեց . յետոյ ծոցէն ուրիշ թուղթ մը հանելով երկուքն ալ մետաքսեայ դերձանով իրարու կապեց և նորէն ծոցը դրաւ :

— Դառ իթ կոմնենտի աղջիկը, ըսաւ Սուլթանը սըրահը մտնելով, յուսացած էդ աւելի նուստացաւ :

— Քու Բարձրութիւնդ այն աղջիկն ինձ կը յանձնէ՞ :

— Դեռ նոր Սէկանոս պէյլին կնութեան տուի :

Գուսանն 'ի խորոց սրտէ հառաչեց . իւր այնչափ համբերութեամբ և վարպետութեամբ պատրաստած ծրարադիրը յանկարծ 'ի դերև կ'երևեր, այլ ևս յուսալու բան չ'էր մնար իրեն այն պաշտտին մէջ, ուր թշուառ Սննային չ'կրնալ ծառայելէ դատ՝ աւելի մեծ չարեաց անդունդին մէջ գլորեց զանիկա :

Սակայն դեռահասակ աղջիկը շուտով սթափեցաւ, շղաշատեռն առնելով՝ վրան ձգեց :

— Չ'պիտի երթաս, ըսաւ Սուլթանը :

— Վաղը կուգամ, պատասխանեց Սոպէիհա :

— Ոչ ևս պիտի գաս, ո՛վ դիտէ թէ դու յիմարութեանս հետ խաղալ չ'ուզեցիր . ուսկից կուգաս, ո՛վ ես, չ'գիտեմ . . . : Եթէ հիմայ թող տամ որ երթաս, գիտեմ ստուգիլ որ ա՛լ պիտի չ'տեսնեմ զքեզ :

— Դուրս ելնել կ'ուզեմ, կրկնեց Սոպէիհա : Չե՞ս դիտեր որ տակաւին ազատ եմ . բնաւ երդումն չ'ըրի հոս մնալու . . . : Բու կ'ինդ ըլլալուս վկայ չ'ունիս, «էր» կրնամ մեկնիլ, հիմայ պիտի երթամ նորէն գալու համար . ասոր արգելք չ'ես ըլլար՝ եթէ դու այն մարդը, այն իշխանը, այն Սուլթանն ես՝ որ սակաւիկ ինչ յառաջ կայսրութիւնդ ոտիցս տակ կը դնէիր . . . :

— Կայսրութիւնս և ես քեզի ենք . բայց դանձ մը վաստկելէս վերջը չ'եմ ուզեր բնաւ որ ձեռքէս յափըշտակեն զայն . . . :

Սոպէիհա դէպ 'ի դրան կողմը նետուեցաւ :

Սնմիջապէս Մէհէմէտ ոսկեղէն սուլիչ գործի մը շրթանց վրայ դնելով՝ քսան ներքինիք սրահը մտան :

Մանկամարդ աղջիկը պարապ տեղը ներումն խընդրեց և 'ի նանիր ներքիններուն մէջէն ճամբայ բանալ ուզեց . ասոնց մէջէն չ'կրցաւ խոյս տալ, և իսկոյն ձեռքերը մետաքսեայ գօտեաւ կապուեցան : Սոպէիհա ազատուելու համար ինքզինք կերած ատեն՝ ծոցը պահած երկու նամակները գետին ինկան : Մէհէմէտ հրամայեց որ այն նամակներն իրեն բերեն :

Սոպէիհա ինքզինք մեռած կարծեց :

— Պաշաը կը կենա՞մ, ըսաւ դեռահասակ աղջիկը, կը կենա՞մ, այդ նամակներն ինձ տա՛ւր, տէ՛ր իմ, զիսքու գերիդ ըրէ՛ :

Մէհէմէտ Սոպէիհայի այսչափ վախնալէն՝ դուշակեց որ այն նամակները կարևոր ըլլալու են, կնիքը վերցունելով կարդաց :

Նամակներէն մին Սարայի առ Հեղինէ կայսրուհին գրածն էր : Սարա իւր եէնիչէհիր ըլլալը կ'իմացունէր, և կ'ըսէր ալ մէջը որ ինք քիչ ժամանակէն թիւրքմէնիստան պիտի գայ . միւս նամակն ալ Բանայիային արտորնօք գրածն էր առ Հեղինէ, որուն կ'իմացունէր թէ իւր հնարքները յաջողած են, և թէ քիչ ատենէն Աննա իւր բաղկաց մէջ պիտի ըլլայ :

Մէհէմէտ երկու նամակներն ալ կարդալէ յետոյ ցրտութեամբ Բանայիային երեսը նայեցաւ . սպիտակ ներքինեաց գլխաւորին հրաման մ'ըրաւ :

Գերիները սրահէն դուրս ելան մանկամարդ աղջիկն ալ միատեղ առնելով :

Երկու ժամ վերջը Մէհէմէտ Բ. Էօղլե նստած խաղաղ և կապուտակ ծովը կը գիտէր . . . : Սնմիջապէս գերի մ'երևցաւ, կաշիէ պարկ մ'երեքոցոց ջուրէն վեր, յետոյ պարկը վոսփորի մէջ նետեց . . . :

Գ Լ Ո Ի Խ Թ

ՆԱԽԱԿԸ

Այն վայրկենին՝ յորում ներքինին պարկը ծովը կը նետէր, կուրկան, ինչպէս միշտ նոյնպէս և այս անգամ իւր խօսքին հաւատարիմ մնալով՝ Պալքէրնի պալատին առջև կը գտնուէր իւր նաւակաւ: Զրոց պտոյտէն յառաջ եկած ձայնը լսած ատեն յուսահատութեան աղաղակ մ'ալ հասաւ ականջին:

Կուրկանի միտքը «երբ մէջ տեղի ունեցած ողբերգական տեսարաններուն սոսկալի յիշատակով լցուած՝ բնազդմամբ գուշակեց՝ թէ նոր ոճիր դործուած է. մտածեց՝ որ Բանայիա զոհ գացած է. ուստի թիակները վար դնելով՝ առանց ժամանակ կորսնցնելու իսկոյն ծովը նետուեցաւ:

Բաւական ճիգեր ընելէ յետոյ վերջապէս փնտռած բանը գտաւ. և մէկ ձեռքով կաշեայ պարկը բռնելով, միւսով ալ լուղալով նաւակին հասաւ և եզերքին պատատեցաւ. ունեցած բեռը նաւակին մէջ զետեղելով՝ սաստկապէս յառաջ մղեց. յետոյ գօտուոյն մէջէն դաշոյնը հանելով՝ կաշիէ պարկին բերանը բացաւ. ահիւ և գողութեամբ ծռեցաւ, և վերջին աստիճան յուսահատութեամբ և ցաօք տեսաւ այն աղջկան անկենդան գէմքը՝ որոյ կը պարտէր իւր կեանքը:

Ի խորոց սրտէ հառաչեց սեւը. սակայն գէպքերուն գժուարութիւնը չ'էր ներեր որ ինքզինք բոլորովին յուսահատութեան մէջ ձգէ:

Կրնային ուրիշները կուրկանի զբանայիա աղատելը տեսնել, ետևէն վազել և ձեռքէն յափշտակել այն գունաթափ արարածը, որ թէպէտ մեռած կ'երևէր, բայց տակաւին իր կենաց կայծը բոլորովին շիջած չ'էր:

Կուրկան անկենդան մարմինը կամացուկ մը վերցունելով՝ տաք լաթերու մէջ պատեց. նաւահանգիստը գտնուած նաւակներուն շարժմունքը դիտելով՝ ամեն կարելի խնամք տարաւ Բանայիայի, թէպէտ շատ անգամ ալ յակամայից բռնադատեալ մանկամարդ աղջկան վրայ տարած խնամոց դադար կուտար և այս միջոցին ամենայն զօրութեամբ կը թիալարէր ծովամէջքը հասնելու համար. պղտիկ ձայն մը լսածին պէս վախէն կը դեղնէր և կը դարհուրէր:

Բարեբաղդաբար, գիշերը վրայ հասնելով՝ մթութեան մէջ սկսաւ աներկիւղ թիալարել: Կուրկան գրանայիա կենդանացնելու և կամ անագորոյն դահճաց ձեռքէն աղատելու զբաղելով՝ կրկին սքանչելիք կը գործէր. որովհետև իրեն այնպէս կը թուէր՝ որ փօքրիկ աղայի շունչ մը կար մանկամարդ աղջկան ցուրտ շրթանց վրայ. մէկ կողմանէ ալ իւր նաւակը նոյն պահուն վտարի երեսը ծածկող նաւերուն մէջէն նետի պէս կը թռչէր:

Յանկարծ կուրկանի վրայ դող մ'ինկաւ. քանզի իւր նաւակին ետևէն կուգային ոչ միայն վաճառքի կամ որիշ բանի յատկացեալ նաւեր, այլ և Մէհէմէտ Բ. ի ծովային զօրքերն ալ աչքին երևցան, որոնք սև թիւրքմէնին ետևէն պնդած էին:

Մնմիջապէս կուրկան նաւակին խորը գնելով մանկամարդ աղջիկը, սկսաւ բոլոր ուժովը թիալարել մօտալուտ վտանգէն ճողոպրելու համար: Կուրկան փոխանակ միւս նաւերէն հեռանալու, վարպետութեամբ անոնց մօտենալով մէջերնին խառնուիլ կ'ուզէր, որպէսզի իւր ետևէն իյնողները ճամբայնին կորսնցունեն և չրկրնան իւր նաւակը որոշել: Բայց ո՛րչափ ալ սևին բա-

զուկները զօրաւոր ըլլային, տարակոյս չ'կայ՝ թէ տասն նաւաստիներու դէմ չ'էին կրնար կռուիլ: Չօրքերը կը մօտենային, Կուրկան նոցա իրեն մերձանալու վայրկեանը նախատեսելով՝ հետերնին կռուելու պատրաստուեցաւ: Սակայն մտածեց՝ որ այս կռուոյն մէջ կեանքը վրայ տալով՝ պիտի չ'կրնար իւր բարերարուհին ազատել, ուստի աւելի հնարքով և վարպետութեամբ յաջողել ուզեց քան զօրութեամբ բազկի:

Իրենին նման նաւակ մը առանելով՝ որուն մէջ մէկ ձկնորս միայն կար, նաւակը ճիշդ անորինին մօտեցուց և ցած ձայնով ըսաւ ձկնորսին.

- Հարիւր քուակ ստակ շահիլ կ'ուզե՞ս:
- Կ'օրհնեմ զքեզ՝ եթէ այդպիսի բան մ'ընելու ըլլաս, որովհետեւ ընտանիքս աղքատ է:

— Նաւակիս ետեւէն պնդողներ կան, շարունակեց Կուրկան, բռնաւորի մը ձեռքէն կին մը կ'ազատեմ. նաւակդ ինձ տո՛ւր. դու ալ իմինիս մէջ եկո՛ւ. տասն թիւ վարաց քեզի մօտենալէն երկնչիլ և զարհուրիլ կեղծէ, որոնք մեր ետեւէն կը թիւ վարեն Հասկըցա՛ր:

— Հասկցայ և կ'ընեմ ալ:

Անմիջապէս Բանայիա ձկնորսին նաւակին մէջ դըրուեցաւ. Կուրկան իւր մետաքսեայ հանդերձն աղքատ մարդուն ուսերուն վրայ ձգեց. խօստացեալ դրամն ալ հատոյց. յետոյ իւր վերջին յանձնարարութիւններն ընելով ձկնորսին, հանդարտութեամբ ծովամէջքին մէջ կեցաւ, մինչդեռ ձկնորսը Մէհէմէտի զօրքերը սխալ ճամբու մը վրայ կը մտորոյունէր:

Երկու ժամ վերջը, Կուրկան Բանայիան բազկացը մէջ բռնելով՝ եզերքին կը մերձենայր, և — — — — —

Սեն իւր բաճկոնակէն բանալի մը հանելով տանը դուռը բացաւ, և անմիջապէս ճրագը վառելով՝ զԲանայիա բազմոցին վրայ նստեցուց:

Մանկամարդ աղջկան խելքը գլուխն եկած չ'էր տակաւին: Մտաներուն վրայ թեթեւ շարժումներ միայն կ'երևէին և արտեանունքներն ալ կիսով չափ բացուելու պէս կ'ըլլային. Սեն աղջկան վրայ ծռած քունքերն անոյշ հոտերով կը թանայր. անոր գունաթափ փոքրիկ ձեռքերը կը շփէր, իւր շնչովը նորա սառուցեալ ոտքերը կը ջեռացունէր և կը ջանայր նուազեալ մարմինը ջորացնել:

Վերջապէս Բանայիա շունչ առաւ. ելաւ և շորս կողմը աչք մը նետելով՝ կէս մ'սթափած հարցուց.

- Ո՛ւր եմ:
- Լաւ գիտես թէ ուր ես, պատասխանեց՝ գերին մանկամարդ աղջկան անկողնոյն քով ծունկի եկած. այն խորհրդաւոր տանը մէջ ես՝ զոր դու գնեցիր, և ուր դաւիթ կայսեր գերդաստանին պիտի սպասես՝ երբ էջչէրիք զայն գերութենէ ազատէ:

— Կը յիշեմ ըսաւ Բանայիա յուսահատութեամբ ալ յո՛, կը յիշեմ:

Յետոյ ախուր ձայնով յաւելցուց.

- Ո՛հ, ինչո՞ւ ազատեցիր զիս. ինչո՞ւ թող չ'տուիր՝ որ մեռնէի:
- Ինչո՞ւ. երախտագիտութեան պարտքս քեզի հատուցանելու, քու գործոյդ մէջ քեզ օգնելու . . . և ես ալ քու յաջողութեանդ մէջ մասն և բաժին ունենալու համար:

— Պատահած իրողութիւնները չ'ես գիտեր, Կուրկան :

— Ոճիր գործուեր է, որովհետեւ զքեզ վճարի խորէն հանեցի:

— Ատկէ ալ աւելի մեծ. ոճիրը միայն ինձ դէմ գործուած է, թշուառութիւնը Աննա Կոմնենոսի վրայ կը ծանրանայ:

- Բայց կ'ատես զայն:
- Սակայն և այնպէս զանիկա աղատելու խօսք տո՛ւ:

— ԸՄննա կոմսենոս տանելու համար . . .

— Այո՛ , Էջջերիֆի վրանը տանելու համար :

— Բանայիա՛ , Բանայիա՛ , այս բանը քու կեանքդ վրայ տալով պիտի ընես :

— Ո՛հ , ինչո՛ւս պէտք : Անձնանուիրութիւնը սրտին մեծ օրէնքն է . . . : Զիս ազատելովդ՝ այլոց իրենց սիրած բաներուն համար կեանքերնին վրայ տալը ծաղրելու իրաւունք չունիս . . . :

— Քու նպատակներդ յաջողցնելու միջոյ չ'կայ :

— Չ'կայ :

— Բանայիա՛ , այդչափ մի՛ յուսահատիր . բան մ'ալ չ'կորսուիր՝ քանի որ ես կամ և դու ալ կը շնչես . . . :

— Ամեն բան կորսուած է , կուրկան . . . : Տրտալի զոնի առումէն և Սննա կոմսենոսի կորուստէն 'ի վեր իմացած էի Էջջերիֆի սրտին ցաւը , սակայն անարգուած սիրոյս մէջ դիւցազնական բաներ իրականացնելու զօրութիւն գտնելով՝ օր մը Սարայի որդւոյն ըսի՝ «Երբ քու հայրդ զՊարսկաստան 'ի նպաստ Դաւթի ոտք հանէ , դու ալ Ադրիանուպօլիս գնա՛ , Մէրէզ հասիր եւ կայսերական գերդաստանին փախուստը կարգի դի՛ր . վերջը կ'իմանաս՝ թէ կայսերական գերդաստանն ո՛ւր պիտի տանիս . . . : Բանի մ' օր յառաջ նամակաւ հանդերձ պատգամաւոր մը զրկեցի իշխանին , իմացունելով՝ որ ամենքնիս ալ երէ՛տ Արմենիոս տանը մէջ պիտի ժողովինք , ամենքնիս ալ հոն զիրար պիտի զըտնենք , ինք կայսերական գերդաստանը բերելով՝ ես ալ զՍննա կոմսենոս Հեղինէի բազկացը մէջ դնելով . . . : Մինչեւ այս ժամուն ի՛նչ միջոց դորձած ես քեզնէ ծածկած էի . . . : Կը դուշակէի՛ որ Մէհէմէտ թակարգս պիտի ձգէի և զիս պիտի աղաչէր՝ որ «Երբ մնամ . այն ատեն իւր յիմարութենէն օգուտ քաղելով՝ զՍննա իրմէ պիտի յափշտակէի՛՝ գերի ընելու պատրուակաւ . . . :

— Յաջողեցար . . . :

— Այո՛ , պատասխանեց Բանայիա դառնութեամբ սրտի Մէհէմէտ Պրուսա և Անդրիանուպօլիս ինձ կուտար եթէ ուղէի . . . : Բայց խօսքերս ծուռ հասկցաւ , և կարծելով՝ որ Սննա կոմսենոսի նուաստութենէն գոհ պիտի ըլլամ , գնաց Սականոս Պէյին կնութեան տուաւ զայն . . . : Ազատութիւնս , կեանքս նուիրել յանձն առած էի զՍննա կոմսենոս ազատելու համար , սակայն աւելի թշուառացուցի զանիկա . . . : Էջջերիֆի երդոււրնցած էի՝ որ Սննա կոմսենոս իրեն պիտի բերեմ , սակայն Մէհէմէտի ծառայներէն միոյն բազկացը մէջ նետեցի . . . : Միայն դիւցազնութեան երևոյթը ցցուցի , և այսօր գուցէ իբրև մատնիչ ամբաստանուիմ . . . : Էջջերիֆ զիս չ'էր սիրեր . . . : Հիմայ զիս պիտի ատէ և արհամարհէ . . . : Կը տեսնե՞ս , կուրկան , թող տալու էիր որ մեռնէի . . . :

— Ո՛հ , որովհետեւ այն ատեն անցած դէպքերուն վրայ գիտութիւն չունենալովս՝ անկարելի պիտի ըլլար քու ինձ պատմած դժբաղդութիւններէդ աւելի մեծերուն դէմ կուռիլս . . . :

— Ո՛հ , Էջջերիֆի յարգանքն և բարեկամութիւնը կորսնցնելիս յետոյ ա՛լ ուրիշ ի՛նչ բան կրնայ զիս վշտացունել . . . :

— Իւր մահը :

— Էջջերիֆ մեռնի՛ , մեռնի՛ . . . :

— Անտարակոյս , որովհետեւ Մէհէմէտ այսօր դաւադրութիւնը գիտէ :

— Ո՛հ , իրաւունք ունիս , կուրկան , իրաւունք ունիս , Պէտք է անձնանուիրութեամբ հսկես Էջջերիֆի վրայ որ չ'մեռնի . . . :

— Կուղեմ որ դու ապրիս :

— Ի՛նչ ընել պէտք է , հարցուց մանկամարդ աղջիկը :

— Էջջերիֆին ազդարարել որ ուրիշ ճամբայ բռնէ :

— Այո՛, բայց ո՞վ գիտէ, թերևս Մէհէմմէա հըրաշքով իւր վրէժխնդրութենէն ազատուիս իմացած է:

— Թշուառ աղջիկ, էշէրիֆին դու պիտի չ'երթաս դէպքերն իմացնելու համար:

— Եւ որո՞ւ պիտի յանձնեմ այս պատգամաւորութիւնը:

— Ինձ,

— Լա՛ւ, ընդունիմ որ զիս ազատելու զելուդ համար կեանքդ վտանգի մէջ դրիր. կոմիենոսեանները ազատելու համար ինչ միջոց ձեռք պիտի առնուա, կը կարծես՝ թէ միայն էշէրիֆին ազատելովը գործը կը լմնայ. ո՛չ, նա առանձինն չկրնար ապրիլ:

— Առանց քեզ իմացնելու, Վէնէտիկեան ցուհանաու մը նաւապետին հետ սակարկութիւն ըրի՛ որ ամեն օր երեւոյ՝ — Սբաւա՛նք տանը դէմ մէկ փարսախ հեռաւորութեամբ ծովուն մէջ մեղ սպասէ: Որչափ ալ Մէհէմմէտի պատգամաւորներն իրենց տիրոջ հրամանները կատարելու մասին կտրուկ ըլլան, ես նորէն անոնց մէ առաջ Սէրէզ պիտի հասնիմ: Կայսերական գերդաստանին ճամբայն կը փոխենք, ծովուն մէջ տեղը Լիւտօ վիֆօի ցուկանաւին մէջ իրար պիտի դանք, և Դաւիթ, իւր կինն և տղաքներն էշէրիֆի հետ ցուկանաւուն մէջ պահուրտած միջոցին՝ ես ալ կուգամ քեզ կ'առնեմ անոնց քով բերելու համար:

— Լա՛ւ, լա՛ւ, եթէ այդպէս է, կրնաս մեկնիլ, կուրկան

— Առաջ խոստումդ առնուլ կ'ուզեմ:

— Ինչ խոստում

— Այսինքն թէ նորէն կեանքդ վտանգելու պիտի չ'մտաբերես:

Մանկամարդ աղջիկը քիչ մը վարանելով ըսաւ .

— Կ'երդնում որ կեանքս չեմ վտանգեր:

— Ես ալ կ'երդնում որ իրենց փրկութեան համար արեանս մինչև վերջին կաթիլն ալ պիտի թափեմ:

Բանայիա իւր երկու ձեռքը հսկային երկնցունելով ըսաւ .

— Գնա՛, սիրտս հետդ է:

Հետևեալ օրը կուրկան հետը տղայ մ'առնելով՝ Սնդրիանուպօլսոյ ամենէն մօտ նաւահանգիստը գնաց. ուսկից ալ Սէրէզ հասաւ, պալատը վազեց, բայց իմացաւ որ առջի իրիկունէ ՚ի վեր Դաւիթ կոմսենոսի գերդաստանը վախած էր Մէհէմմէտի պահապաններուն, լրտեսներուն և զօրքերուն ձեռքէն:

— Ո՛հ, ըսաւ կուրկան, կատաղութենէն մատները լսածնելով, ուշ եկեր եմ:

ապատերազմելու համար : Բանայիայի դիժոտ բնաւորու-
թեան , մեծանձնութեան և իւր յղացած յանդուգն ծը-
րագրին վրայ կը խօսէր , կ'ըսէր ալ թէ մանկամարդ աղ-
ջիկն , իւր խոստման համեմատ , Սոպէիհա անուն դու-
սանին դնած Երնց — Արմատեանց որն մէջ իրենց կ'սպասէ :

Երկու օր ճանապարհորդք հանդարտ և անխռով
մնացին : Հեղինէ ապահով ըլլալ կ'սկսէր . երիտասարդ
իշխանները հասակնուն վայելուչ ուրախութեամբ կ'ու-
րախանային , վրէժխնդրութեան մը յոյսն ալ Դաւթի
ձանձրոյթներն և ցաւերը կը փարատէր : Էջջերիֆ Հե-
ղինէի ուղտին սանձէն բռնած՝ կէս ձայնով թիւրքմէն
երգեր և անապատին տրամութեան և օվախաներուն
վայելութեան վրայ շինուած բանաստեղծութիւններ
կ'երգէր :

Կարավանը բնաւ կասկած և երկիւղ չունէր : Վա-
ճառականաց զգեստները պարզ , ձիերնին ալ միջակ է-
ին , որովհետեւ Էջջերիֆ լաւ համողութեամբ էր թէ թուր-
քըն աւելի հեծանելեաց տեսակին կը նայի քան թէ
մարդուն զգեստին . Սակայն դարձեալ Էջջերիֆ իր հե-
ծած կենդանիէն քան իւր զինուոց և զգեստուոց շքե-
ղութենէն մասնուեցաւ :

Երրորդ օրը , աքսորեալ գերդաստանը քիչ մ'ան-
հանգստութեան մէջ ինկաւ : Ամեն ժամ ճամբայները
զինուորեալ զօրականներ կը շրջէին :

Էջջերիֆ վախնալով՝ թէ մի՛ գուցէ զինուորաց ու-
շագրութիւնն իր վրայ գրաւէ՝ անոնց հետ խօսելու
կամ բան մը հարցնելու չ'էր համարձակեր . սակայն կաս-
կածեցաւ՝ որ կոմսենոսեանց փախուստը յայանուած էր :

Այս փորձանքն որչափ որ վտանգաւոր էր , այնչափ
ալ անցած դարձած դէպքերն իմանալ պէտք էր :

Էջջերիֆ չ'էր կրնար ուրիշ ճանապարհորդները կա-
սեցունելով անոնցմէ տեղեկութիւն ուզել . ասիկա ա-
ճապարանք ցուցնել մը կ'ըլլար , որոշեց՝ որ գիշերը մեր-
ձակայ Կարաշան ձերայ անցունեն :

Երբ թիւրքմէն իշխանը տեսաւ այն ընդարձակ շէն-
քը՝ որուն կէսը հետեակ ճանապարհորդները բռնած
էին , և դաւիթներն ալ ուղտերով և ձիերով լեցուած ,
իսկոյն Հեղինէն ուղտէն իջեցոյց . Դաւթի որդիքն օտ-
քերնին գետին դրին , և աքսորեալնէլէ բաղկացեալ
խուժին այն պանդոկը մտաւ՝ որ պարտասեալ անցաւ .
րաց ձրի նուիրեալ բնակարան մ'էր :

Երբ մանակն այնչափ ուշ չ'էր , անոր համար հոն գլու-
նուող ամեն հասակէ և ամեն աստիճանէ մարդոց քու-
ները տակաւին եկած չ'էին :

Ճանապարհորդք ախորժանօք ֆէլա և ոչխարի միս
կուտէին , որք տաճկաց սովորական կերակուրներն են .
մի քանի մուրացիկներ ճանապարհորդաց մօտենալով
և անոնց նոր նոր բաներ պատմելով՝ փոխարէն ողոր-
մութիւն կը լնդրէին . տաճիկ մուրացիկը շրջող լրա-
գիր է :

Մուրացիկներէն մին շատ մը ճանապարհորդներէ
ողորմութիւն չ'կրնալ առնելով՝ ձեռքերն Էջջերիֆի եր-
կնցուց :

— Լա՛ւ , ըսաւ իշխանը , մուրացիին ձեռքերն ու-
ղորմութեամբ լեցունելով , լայց մեզի նոր լուր մը պի-
տի պատմես . . . :

— Նոր լուր մը պիտի պատմեմ , զոր հոս մէկն ալ
չ'գիտէ :

Անօթի մուրացիկն անմիջապէս իրեն տրուած կերա-
կուրները լափլիզեց , յետոյ պատմութիւն մ'սկսաւ , զոր
մէջ ընդ մէջ կ'ընհատէր՝ երկայն ատեն լուրթիւն պա-
հելով , որպէս զի ալ աւելի գրդուէ ունկնդրաց հետա-
քըքրութիւնը :

— Թագաւորը , որուն պատուական և՛ անգին կեան-
քըն Աստուած պահպանէ , մեծ վտանգէ մ'աղաւտուե-
ցաւ . . . :

Սոպէիհա անուն մի քրիստոնեայ կամ հրեայ գերի-
աղջիկ , որուն երգոց և պարուոց վրայ բոլոր Կ. Պօլ-

սոյ բնակիչք կը զարմանային , յաջողեցաւ «երայ» մտնել .

Կայսրուհին դաղտնի Էշէրիֆի ձեռքը սեղմեց : հասկցաւ՝ որ մուրացկին խօսքը վեհանձն Բանայկայի համար էր :

— Այդ աղջիկը Պալքէրնի պալատը մնալ կ'ուզէր , հարցուց Ուզուն—Հասանի տղայն :

— Անշուշտ , եթէ հաւատարիմ մահմետական եղած ըլլար . բայց . ինչպէս որ ըսի ձեզ , այս Սօպէիհան , հակառակ իւր անուան , կ'ուզէ աղջիկ էր , և իւր նպատակըն էր շքեղ Սուլթանը կախարդելու կուրցնել և վերջապէս չ'իտղուլ երբէք որ իւր կայսրութեան պահպանութեանը հսկէ :

— Ինչ բանի մէջ դուստանին երգերն և պարերը կրնային նորին Բարձրութեան ապահովութիւնը վտանգել , հարցուց Էշէրիֆի ծիծաղելով :

Մուրացիկը կասկածոտ դէմքով ճանապարհորդաց վրայ նայեցաւ . ունկնդիրներուն վրայ աղդեցութիւն ընելու նպատակաւ՝ յետ ընդ երկար լուսութեան՝ զոր աքս սորեալք անվերջանալի կը համարէին , ըսաւ .

— Այս քաղցր դուստանը Դաւիթ Կոմնենոսի գերդաստանը Տրապիզոն վերադարձնելու միջոցները կը յղանայր , որ պարզապէս դաւադրութիւն է :

Ամենէն փոքրիկ իշխանները սոսկման աղաղակներ հանեցին . Դաւիթ ինքնին զարհուրեցաւ , Էշէրիֆ ալ բարձրաձայն խնդաց :

Մուրացիկն անհանդարտ ուշադրութիւնը զինքը մատնեց . Էշէրիֆի սիրտը խոցեցաւ , կասկածեցաւ և վախցաւ որ իրենց դէմ որոգայթ լարուած է : Ինչ պիտի ընէր Կոմնենոսեանները պաշտպանելու համար՝ եթէ յանկարծ փոքրիկ խումբին վրայ յարձակէին : Աւաղ , իր բարեկամաց հետ պիտի մեռնէր . ուրիշ բան չ'էր կրնար ընել :

Էշէրիֆ ուժը վրան ժողովելով հանդարտ ձայնով

հարցուց .

— Եւ ի՞նչ եղաւ այդ Սօպէիհան :

— Դուստանին դրած մէկ նամակն ստուգեց՝ որ ինք դաւադրութեան հողին է եղեր . . : Մէկ ժամէ վերջըն սպիտակ ներքինեաց գլխաւորն ՂՍօպէիհա վոսիօրը նետեց :

Այս անգամ Էշէրիֆ այլազունեցաւ :

Հեղինէ լուռ կեցաւ . յորդ արտասուքներ կը հոսէին՝ դիմացը վրայ , և իւր շղաշատեւը կը թանային :

Պատմիչն ոտքի վրայ ելնելով՝ վերջին անգամ իւր ունկնդրաց վրայ նայեցաւ . և իրենց ճանապարհորդութեան համար Ոստուծոյ օրհնութիւնները մաղթելով անոնց աներևոյթ եղաւ :

Մուրացիկն կ'ուզէր մեկնելէն անմիջապէս վերջը՝ Էշէրիֆ շարժում մ'ընելով երիտասարդ իշխանները քովը կանչեց և ըսաւ .

— Քնանալու ժամանակ չէ , օ՛ն , ելէ՛ք մեկնի՛ք այս տեղէն . ազատութեան մի գիշեր միայն կը մնայ մեզ . թերևս այս մէկ գիշերն ալ բաւական ըլլայ մեր վերկութեան :

Իսկոյն աքսորեալներն ոտք ելան :

Չիերը թամբեցին . և մինչդեռ ճանապարհորդք ճամբայ ելնելու կը պատրաստուէին , և ահա՛ իսկոյն «Էրայ» և հեծելազօրաց դուռը մը կ'ուզէ «երայ» պաշարեց :

— Բաներնիս լմնցա՛ւ , բռնուեցա՛նք , ըսաւ Էշէրիֆ , և վազեց կայսրուհւոյն առջև կեցաւ :

Կայսրուհին այս նոր վտանգին առջև անխուով մընաց և ,

— Աստուած մեր ազատութիւնը չ'էր ուզեր , քրթմնջեց :

Մէկ ակնթարթի մէջ մեծ աղմուկով լեցուեցաւ այն յարկը՝ ուր աշխարհի ամեն կողմերէն օտարականք քիչ մը յառաջ հանդարտութեամբ կը հանգստանային : Ու

մանք իրենց գանձերուն վրայ դողալով՝ թանկագին բաներ պարունակող ծրարներն և արկղները բռնած կեցած էին : Ուրիշներ ալ կուզէին դուրս նետուիլ և արտորնօք փախչիլ . բայց ժամանակ չ'էր տրուեր իրենց : Զինուորները՝ այր , կին և տղայ ներս կը մղէին հրացանով և սրով՝ երբ իրենց հրամաններուն չ'հնազանդէին : Մի միայն Սէրէզի աքսորելոյ խումբը խաղաղ ըլլալ կը թուէր : Դաւիթ՝ վհատեալ , ինքզինք պաշտպանելու հող չ'էր ընել : Իսկ Էշտրիֆ երկու ձեռացը մէջ մէկ մէկ դաշոյն բռնած՝ ազատուելու անկարողները պաշտպանելու ջանիւք մեռնիլ յանձն առած էր :

Յանկարծ փառաւոր սամուրեանի հագած մարդ մ'... զոհերն գունդը ճեղքելով՝ պանդոկին ներսը նայեցաւ , և ճանչնալով Դաւիթ կայսրը՝ զոր Տրապիզոնի մէջ սոյն քաղաքին անձնատուութեան ատեն տեսած էր .

— Բռնեցէ՛ք սա՛ մարդը , աղաղակեց եէնիչերեաց աղան . առիւծը , մատակ առիւծն և կորիւնները շրջաթայակաղ Մէհէմմէտ Բ. ի առջև պիտի տարուին :

Տասն զինուորք յառաջ կը նետուին այս հրամանը կատարելու , բայց առաջին երկու զինուորները կուրծքերնուն վրայ սրոյ հարուած ընդունելով գետին կը վրուռուին : Ընկերներն իրենց համար վրէժխնդիր ըլլալ կուզեն . երեք զինուոր ղէշտրիֆ զինաթափ ընել կը ջանան , իշխանը դարձեալ անեղ բազուկը վերցունելով՝ « զոհ մ'իւր ուսէն հարուածեց , ուրիշի մը դէմքն ալ երկուք ճեղքեց » . մէկ հողին քսանի դէմ քաջութեամբ կը կռուի : Էշտրիֆի վրայ կը յարձակին , իսկ սա շարունակ կը հարուածէ և կը վիրաւորէ , իր գաշոյններն երկու բոց էին . ինքն ալ աւելի ցնորական էակ մ'ըլլալ կը թուէր քան պատերազմիկ մէկը : Մերթ ինք իր վրայ գալարելով յառաջ կը նետուէր և մերթ յետո կը մղուէր , ոտիցը վրայ միշտ կանդուն կը մնայր , ցիր և ցան թըշնամեաց գնդերն անխնայ կը հարուածէր : Իւր հակառակորդաց կատաղութիւնը չափ և սահման չունի , բար-

կութենէն կրակ կտրած կ'ոռնան , կատաղի գաղանաց պէս կը մռնչեն , 'ի զուր Դաւիթ ինքզինք զօրականներուն ներկայացնելով՝ իւր արիասիրտ պաշտպանն աղատելու կը ջանայ . զօրականք զԴաւիթ ձերբակալեցին , բայց կռիւը մէկ կողմանէ կը շարունակէր Էշտրիֆի և « զոհ » գնդին մէջ , որ իրենց ընկերներուն մահուան վերայ զայրացած՝ երդումն ըրած էին իւրեանց կատաղի ակոյտանը կամ ողջ և կամ մեռած բռնելու : Սակայն , վերջապէս Էշտրիֆ պարտասեալ յետո կը մղուի և պատին կռիւնելով վերստին կռիւը կը շարունակէ : Ծնօտէն հարուածեալ , դէմքը բոլորովին յարեան թաթաւեալ , ձեռքը սրով կտրուած , միշտ կը կուռիլ , բայց առանց կուռոյն ելքին վրայ գիտակցութիւն ունենալու : Արդէն աչքերը կը դառնան , ծունկերը կը ձուլն , վիրաւորեալ կուրծքէն խոր և սուր ձայներ կ'ելնեն . . . : Իր ոտից տակ հոսող արեան ճահիճին մէջ իյնալու մտէր՝ երբ յանկարծ հսկայի ստուեր մ'եկաւ կեցաւ Էշտրիֆի և նորա կորստեան փափաքող « զոհներն » մէջ տեղը

— Կուրկա՛ն , պօռաց Էշտրիֆ :
 Եւ յիրաւի , այս հսկայն կուրկանն էր , որ սրածայր երկաթներով զինեալ՝ անդադար իւր առջև խորտոզ մարդոց բաղմութիւնը կը հարուածէր : Կուրկան ժամանակ գտնելով՝ կիսամեռ իշխանը վերցուց , « զոհներն » չ'գիտցած և չ'ճանչցած մէկ դուռը բացաւ , և անկենդան մարմինն իւր ուսին վրայ դնելով՝ դաշտին մէջէն խոյս տուաւ :

Մի քանի զինուորներ դիպուածով կուրկանին ետէն ինկան . Սակայն որովհետև գիշերուան սաստիկ մութութեան մէջ անհնարին էր հեռուանց բան մը տեսնել , ուստի « զոհները » յետո դարձան այս մարդկային որսէն՝ յոր թելադրուած էին վրէժխնդրութեան ծարաւէն :

Եէնիչերեաց աղան իւր մարդոց կորստեան վրայ շատ պիտի ցաւէր , եթէ արդէն իւր ճանապարհորդութեան

նպատակին հասած, այսինքն, կոմմենտսեանց դերդաստանը ձերբակալած չ'ըլլար: Մուլթանն 'ի հարկէ մի քանի աննշան զինուորաց մահը բանի տեղ պիտի չ'դնէր: Իւր թշնամիներն իր ձեռաց տակ պիտի ըլլային: այս յաջողութիւնը միայն թագաւորին ատելութեան ոգին կը յագեցունէր, և եէնիչերեաց աղան ալ անշուշտ մեծ վարձատրութեան արժանի եղած էր:

Ոնանական կատաղութեամբ կալանաւորներն իրենց համար որոշուած ձիերուն քով բերին: Հեղինէ չ'կրցաւ իւր տղաքները քովը պահել: Թէպէտ գիշեր էր, սակայն մի քանի ջահերու տկար լուսով խումբը ճամբայ ելաւ:

Կայսրուհին ալ ազատուելու յոյս չունէր. այս անգամ խնդիրն ոչ թէ իշխանութենէ ինկնարու, այլ մարտիրոս ըլլալու վրայ էր: Վեհանձն կինը բնաւ ինք իր համար հոգ չ'էր ընէր. իւր զոհը կատարուած էր: Հեղինէ մի միայն անգութ Մէհէմմէտի իւր որդւոց տակիք խոշտանգանաց համար կը զարհուրէր և կը սոսկար. Բայց վերջապէս իւր քրիստոնէական զգացումը՝ մայրական զգացման յաղթելով՝ կանդակուզնոսեանց արիասիրտ ազնկան շրթանց վրայ միայն սա՛ աստուածահա՛նոյ աղօթքը կար:

— Աստուած մեծ, դո՛ւ, որ Մակաբեանց մայրը զօրացուցիր, զիս ալ զօրացուր՝ երբ նոյն պատերազմով պատերազմիմ:

Տաժանելի ճանապարհորդութիւնն ամբողջ վեց օր տևեց՝ առանց հանդստեան, առանց դադարման և առանց մեղմութեան:

Ժողովուրդը Մարգարէին այս պարտեալ թշնամեաց հետ որչափ որ անգթութեամբ և արհամարհանօք կը վարուէր, սակայն չ'էր ալ կրնար չ'զարմանալ Հեղինէի կերպարանաց վրայ:

Հեղինէի վրայէն շղաչատեան հանեցին վշտէ և յոգնութենէ այլայլեալ գէմքը զինուորաց և ժողովրդեան

ցուցնելու համար: Բայց արտասուեաց հեղեղներուն հակառակ՝ պայծառ և զուարթ հայեցուածք ունէր՝ Հեղինէ, և կ'զգային թէ այս տառապեալ մայրը վերին և գերագոյն զօրութեամբ կը զօրանայր: Մերթ ընդ մերթ Հեղինէ իր որդւոց ձեռքերը կը սեղմէր, երկինքը ցոյց կուտար անոնց. իրենք ալ թէև տարիքին քիչ, բայց քաջալերուած և յոյս առած՝ մի և նոյն շարժմամբ կը պատասխանէին մօրերնուն:

Դաւիթ միայն յուսահատ, թակցեալ և հաղիւ իւր ձիուն սանձը բռնելու կարող՝ կենդանւոյն վզին վրայ ծռած էր: Իր որդւոց գիմաց բոլորովին ներհակ տըխուր գէմք մ'ունէր: Իւր որդիքն իրենց կեանք տուող մօր քաջալերութեամբ մեռնիլ կ'ուզէին:

Վերջապէս Ա. Պօլսոյ գմբէթներն և զանգակատունները կալանաւորաց աչքին երևցան:

Բաղաքը մտածնուն պէս աղմկով լեցուեցաւ. ժողովուրդը՝ Տրապիզոնի վերջին կայսեր Ա. Պօլիս հաննելու լսելով՝ խուռներամ կը յառաջէր, երբեմն հօր և այժմ յետին աստիճան նուաստութեան և թշուառութեան մէջ ինկած կայսերական գերբաստանին ցաւոյն վրայ իր անգութ հետաքրքրութիւնը յագեցնելու համար:

Վեց հարիւր եէնիչերի՝ կալանաւորները մինչև Պալքէրնի պալատը տարին, ուր Մէհէմմէտ Բ. տենդաբեր անհամբերութեամբ նոցա գալստեան կ'սպասէր: Թէպէտ Մուլթանը վեհանձն էր, բայց զՂաւիթ տեսածին պէս իւր սրտին ատելութիւնը չ'կարաց ծածկել: Սակայն Հեղինէի առջև խոնարհեցաւ, որ իր թշուառութեան մէջ անգամ դարձեալ վեհանձն կ'երևէր, և որոյ պայծառ և զուարթ գիմաց վրայ գերմարդկային արութիւն կը լիայէր:

— Ահա՛, գոչեց Մէհէմմէտ, թէ ինչ կ'ըլլայ երբ կեանքի խօսքերուն հաւատք ընծայուի: Կայսր կամ գերի, իւր երդումը չ'պահէ: Գիտէի վատ ըլլալդ: Գաւիթ կոմմենտս, բայց նոյն իսկ այդ վատութիւնդ կար-

ծել կուտար ինձ՝ թէ դու պիտի չ'կրնայիր ինձ դէմ մատուցելուն ընել զինեալ զօրութեամբ . . . որովհետեւ անհնար է, չ'ես կրնար ուրանալ՝ թէ դու Սերէզէն կարավանապետի հանդերձով փախած միջոցիդ, անձնանուէր բարեկամներ ալ քեզի բանակ պատրաստելու կ'ըզբաղէին :

— Չ'եմ ուրանար, պատասխանեց Դաւիթ, իշխանութեանդ տակն եմ :

Հեղինէ երկու քայլ յառաջ դարով ըսաւ .

— Սերէզէն մեր փախչելուն վերաբերեալ իրաց վրայ խօսելու հարկ չ'կայ, թուրքիան ձգելու իրաւունք ունէինք :

— Իրաւունք, դուչեց Սուլթանը :

— Կը կրինեմ խօսքս, ըսաւ Հեղինէ հանգարտութեամբ, իրաւունք ունէինք . . . Մեր խոստումը պայմանական էր, մէկ ուրիշ երդումէ կախումն ունէր Սուրբս, ես և որդիքս կայսերական թագէն սիրով հրատարեցանք մեր հպատակաց կեանքը, պատին և ինչքերն ազատելու համար . . . : Իշխանաց բողոքը հպատակներնուս փրկանքը կը հատուցանէր . . . : Մեր թըշուառութեան մէջ մեզի սա՛ միխթարութիւնը միայն կը մնար, որ վեհանձն հոգիներու համար հերիք է, այսինքն, ըսել թէ և ոչ մէկուն վշտաց և կորստեան պատճառ եղանք . մինակ մեք զոհուեցանք : Սակայն այն ինչ քու նաւերդ զմեզ աքսոր կը տանէին, և ահա՛ հուրը, աւարն և սպանութիւնը զՏրապիզոն կը քանդէին և կը կործանէին . Աշտիկը և Ենիշերիներդ մէկմէկ դող և ծովահէն կը դառնային . . . : Բնակչաց մէկ մասը կոտորեցին, մնացածն ալ դերի տարին . Ազքատները միայն մնացին իբրև նուազեալ կենդանիներ և թափառականներ՝ արխնալից և գիւղիներով ծածկուած փողոցներուն մէջ : Այս էր խոստմունքդ, Սուլթան, որ օր որ զմեզ կայսերական ծիրանիէն մերկացուցիր :

— Քաղաքին խնայել ուզեցի, բայց դունդերս յաղ-

թութեամբ արբեալ՝ հրամաններս չ'պահեցին . . . :

— Սչխարհակալութիւն չ'կար, որովհետեւ չ'պատերազմեցանք . . . : Սյս արբեցութիւնը, որոյ վրայ կը խօսիս, անառակութեան, ազահութեան, վրէժխընդրութեան և ոճրագործութեան արբեցութիւնն էր : Սա՛ ալ ըսեմ՝ որ ո՛վ պիտի համարձակէր, իշխան կամ զինուոր, քեզ անհնազանդ գտնուիլ . Բու Բարձրութիւնդ ո՛չ անհնազանդութեան՝ և ո՛չ ալ խռովութեան կը հանդուրժէր :

Մէհէմէտի դիմաց վրայ այնպիսի բարկութիւն ցուլաց՝ որ երիտասարդ կայսերազունք դնացին իրենցմօրը քով կեցան :

Հեղինէ յարեց .

— Սյս խոստմնազանցութեան պատճառը դու չէիր . . . : Բայց ի՞նչ պիտի պատասխանես ինձ՝ երբ միտքդ ձգեմ այն վայրկեանը՝ յորում Աննա կոմսնտսի գեղեցկութենէն շլացեալ՝ զայն ինձմէ կնութեան ուզեցիր . . . : Կնութեա՛ն . կըլիշե՛ս, երդուընցար ինձ՝ որ զայն իբրև դուտար կայսեր համարիս . և Եւրոպիոյ և Ասիոյ հզօր միահեծանի ընկեր ընես . . . : Ասոր հակառակ զայն քու հարճերուդ կարգն անցուցիր, և որ աւելի արհամարհելին է, քու ծառայներէդ միոյն հետ ամուսնացուցիր : Ո՛հ, այս վերջին նախատինքը, իմ արեանս, նացուցիր : Ո՛հ, այս վերջին նախատինքը, իմ արեանս, մարմնոյս և աղջկանս դէմ գործուած այս եղեւն իրաւունք կուտար ինձ՝ վերստին պատերազմ բանալ զայն քեզնէ կորզելու և կամ իր քով մեռնելու համար :

— Իշխանուհին միշտ դիս կ'ատէր, մահուան երկիւղով միայն հաճեցաւ հետս կ. Պոլիս գալ . արդէն իր ցրտութենէն ձանձրացած՝ երբ ինձ դէմ ըրած խաղալ իմացայ զայն «Կրն» մէկ անկիւնը երեսի վրայ ձգեցի . . . յետոյ Սականոս պէյին կնութեան տալով՝ Աննա կոմսնտսէն և իւր մօրմէն վրէժս հանեցի :

— Եւ զմեզ ի՞նչ պիտի ընես,

— Կրնամ կեանքերնիդ շնորհել :

— Ի՞նչ պայմանաւ :

— Իսլամութիւնն ընդունեցէ՛ք, այն ատեն զձեզ կը պաշտպանեմ :

— Դաւիթ, աղաղակեց Հեղինէ, և դո՛ւք, որդեալ կըք իմ: Սուլթանը մեր դատակնիքը տուաւ . . . : Մեռնինք . . . բայց իբրև թագաւոր, իբրև քրիստոնեայ և իբրև մարտիրոս մեռնինք :

— Առանց այս տղայոց վրայ գլխաւու, ըսաւ Մէհէմէտ, մահերնուն պատճա՞ռ պիտի ըլլաս :

— Պիտի ըսեմ իրենց . Հայրենիք մը կայ՝ ուր ազատ պիտի լինիք, միայն դուք պիտի չ'մեռնիք, ես ինքն ձեզի հետ պիտի մեռնիմ . . . : Արտասուքս, մայրական արտասուք, կը թանան ձեր սիրուն ճակատները՝ զորս կ'օրհնեմ . . . : Յետ ո՛չ բազում ժամանակաց իմ արիւնս ձերինին հետ պիտի թափի . . . :

— Տղայոց խորհուրդ հարցուցի՞ր իմանալու համար թէ արդեօք մահն իմ իրենց տալիք մեծամեծ փառքերէս վեր կը համարի՞ն :

— Մահ, աւելի մահ քան ուրացութիւն, աղաղակեցին միաբերան տղայքները :

Դաւիթ գլուխը վերցուց, զոր մինչև այն ատեն խոնարհեցուցած էր, իւր տխրազգեաց դէմքը կարծես նոր կենդանութիւն առաւ, և ոտքի վրայ ելնելով անվեհեր քաջութեամբ ըսաւ .

— Լա՛ւ, որդեալք իմ, եթէ կ'ուզէք իմանալ՝ թէ մեր ցեղի իշխաններն և կայսրներն ի՛նչպէս կը մեռնին, դահճաց սրոյն տակ ինկած ատենս դիտեցէք զիս :

Հեղինէ Դաւթի բազկացը մէջ նետուելով՝ ըսաւ .

— Ո՞հ, օրհնեալ ըլլայ այս ժամը՝ որ մեր հոգիները հաւատոյ ջերմ զգացմամբ կը բորբոքէ :

Մէհէմէտ ՚ի փորձոյ գիտնալով Դաւթի տկարութիւնը, ծաղրելու պէս ըրաւ անոր խօսքը : Երբ կայսեր տկարութենէն կը չափէր նորա օրդուոյ յատկութիւնըն ալ : Չէր կարծեր բնաւ որ Հեղինէ իւր հաւատքը

պիտի փոխէ, ուստի միտքը դրաւ՝ որ միայն զկայսրուհին պատժէ, իշխաններուն ալ մեծամեծ շնորհքներ տալ որոշեց, որպէս զի անոնց ուրացութեան գայթակղութիւնն աւելի հանդիսաւոր ըլլայ : Սակայն իւր յուսացածին բոլորովին հակառակ, այս վատասիրտ Դաւիթ կոմսնոսը յանկարծ կը զօրանայր, իւր տկար հոգին Հեղինէի հոգւոյն կը հաւասարէր. եթէ Տրապիզոնի պարսպաց վրայ իբրև թագաւոր և իբրև զօրական չ'մեռաւ, կրնար այս անգամ քրիստոնէաբար մեռնիլ իւր հաւատքը բարձրացունելով և չ'ուրանալով :

Սուլթանը հանդարտելով՝ աքսորեալ գերդաստանին ըսաւ .

— Ահա՛ երկու օր մտածելու միջոց կուտամ ձեզ . . . : Այնուհետև կամ կորսնցուցածներնեդ աւելի փառք և պատիւ կ'ստանաք և կամ դիակներնիդ Այա — Ստէֆանոյի անգեղաց կերակուր կ'ըլլան :

— Կրնաս հրաման տալ դահճաց, պատասխանեց Հեղինէ անվեհեր :

Յետոյ կայսրուհին կրկէսին մէջ մահուան դատապարտելոց առ կեսար ուղղած խօսքն յիշելով՝ ըսաւ .

— Սուլթան, մահուան դատապարտեալներն զքեզ կ'ողջունեն :

Որոշուեցաւ որ թշուառները մի և նոյն բանտը տարուին :

Մէհէմէտ կը յուսար՝ թէ վերջին ժամուն տղաքները պիտի տկարանան և երկչոտ ըլլալուն համար շարչարանքէ վախնան . կը մտածէր՝ թէ Հեղինէ իւր քաջասրտութեամբ հանդերձ պիտի յաղթուի՝ երբ սուրերն իւր օրդուոց գլուխներուն վրայ շողալ սկսին :

Կայսերական գերդաստանն ստորերկրեայ ընդարձակ խաւարին բանտ մը տարուեցաւ : Պղնձէ կանթեղ մը փոքր ինչ կը լուսաւորէր բանտը : Կերակրոյ տեղ քիչ մը բրինձ կուտային . իսկ անոնց անկողինն էին եգիպտացորենի տերևներ :

Տղայք ճանապարհորդութենէ յողնած և սաստիկ յուզուած ըլլալնուն համար անմիջապէս քնացան, Հեղինէ և Դաւիթ տղայոց սիրուն գլուխներուն վրայ խոնարհած շարունակ կը համբուրէին առանց տղայոց ըզգալուն, յետոյ երկու ամուսինները բանտին ամենէն հեռու անկիւնը քաշուեցան: Այն ատեն Դաւիթ իր կնոջ ձեռքէն բռնելով ըսաւ.

— Հեղինէ՛, բոլոր կենացս մէջ քու առաքինութիւնդ, բարութիւնդ և քաջասրտութիւնդ չունեցայ: Շատ անգամ տկարութեանս վրայ ամօթահար եղած ես. գիտեմ՝ թէ իրօք սուրբ մօր մ'ը գիւցազն գշխոյի մը անարժան ընկերն եղած եմ ցարդ: Միայն մեր իրարմէ բաժանման մեծ ժամուն զիս զօրացուցիր, մահն և եթ քաջասրտութեան կողմանէ հաւասար պիտի գտնէ ըզմեզ . . . : Ներէ՛ ինձ, Հեղինէ՛, ներէ՛ ինձ:

Կայսրուհին քաղցրութեամբ և գորովանօք իւր այլը վեր վերցունելով՝ ըսաւ.

— Ինչո՞ւս պէտք անցեալը, Դաւիթ, անցեալը կը քուես և արժանաբար կը գնես: Ի՞նչպէս պիտի յիշեմ՝ թէ չկրցար կայսերական երկիրն և Տրապիզոնի գահը պաշտպանել, քանի որ այժմ երկնից արքայութիւնն և մարտիրոսաց պսակը պիտի ընդունիս: Ի՞նչպէս միտքս պիտի բերեմ երբեմն մեր խորհրդոց մէջ պատահած անհամաձայնութիւնը, մինչդեռ հիմայ չարչարանաց ատեն մեր հրաժեշտի ողջոյնները պիտի տանք միմեանց:

Այս գիշերը՝ զոր Մէհէմմէտ զարհուրելի փորձանաց գիշեր կը կարծէր, քրիստոնեայ կնոջ և մօր հողին մխիթարութեամբ լեցուց: Հեղինէ մինչև ջայս ժամ որիչ կանանց օրինակ ըլլալու արժանի էր. այս ժամէն սկսեալ կը հաւասարէր այն վեհանձն մարց՝ որոց անուններն և յիշատակներն անմահ մնացած են սրբազան և արտաքին պատմութեանց մէջ:

Այս ապագայ մարտիրոսներէն բաղկացեալ խումբը տեսնել ուզողը՝ ինքզինք քրիստոնէութեան առաջին

դարերը կայսերաց բանտերուն մէջ կը կարծէր: Մի և նոյն սրբութիւնն և երկրաւոր վիշտերը յաւիտենական և անանց երջանկութեան հետ փոխանակելու անպատու բաղձանքն ունէին:

Ժամերը Հեղինէի և իւր որդւոց ո՛չ երկար և ո՛չ դառն կը թուէին: Աստուածային սէրը զանոնք կը զօրացնէր. իրենց աղօթից եռանդը չէր թողոյր որ մահուան վրայ մտածեն:

Իսկոյն իրենց խաւարչտին բանտին դուռը բացուեցաւ:

Ամենքն ալ ոտքի վրայ ելան, դահճաց կ'սպասէին: Բայց Մէհէմմէտի շուշեօն տեղ կ'ին մը և տղայ մը մտան կէս մութ բանտին մէջ:

Կինը քօղը վրայէն հանեց և Հեղինէի առջև խոնարհելով,

— Մայրի՛կ, ըսաւ, մայրի՛կ:
— Աննա՛, Աննա՛, պատասխանեց կայսրուհին, իւր աղջիկը սրտին վրայ սեղմելով:

Մանկամարդ կիներն որդիական սիրոյ զգացմամբ լեցուեցաւ իւր ծնողաց վտանգը տեսնելով, նկուն և սարսափած կ'երևէր և չէր համարձակեր խօսելու՝ զգալով որ արտասանելիք բառերն իր շրթունքները պիտի այրէին:

— Մայրի՛կ, ըսաւ աւելի տկար ձայն մը, մայրի՛կ, զիս կը մերժես:

Հեղինէի վերջին որդին, Գեորգն էր որ կայսրուհւոյն զգեստուց պատասխիլ կ'ուզէր:

— Այլ ևս տղաս չ'ես, պատասխանեց Հեղինէ, մեզմով զԳեորգ յետս վանելով. . . : Աստուածդ ուրացար. ինչո՞ւ այն քրիստոնեայ մօր օրհնութիւնը կը խնդրես, որ հիմայ պիտի մեռնի:

— Ո՛չ, ըսաւ Աննա, պիտի չ'մեռնիս. կեանքը որ չափ ալ դառն ըլլայ, դարձեալ կեանք է: Ինչպէս իմ, նոյնպէս ալ քու մեռնիլդ չ'եմ ուզեր: Ո՛հ, լաւ՝ մտա

ծէ՛, այլ ևս չ'տեսնե՛լ զմեզ շրջապատող սիրուն առարկայները, որք են երկինք, ծով և այս աստիճան շքեղ և արգասաւոր բնութիւնը:

— Լաւագոյն աշխարհի մ'սքանչելիքները պիտի՛ վայելենք:

— Զքեղ սիրողները թողո՛ւլ, և յաւիտեան անոնցմէ բաժնուի՛լ:

— Կը մոռնաս երկինքը՝ ուր մարդիկ վերստին զիրար պիտի գտնեն:

— Ո՛հ, մայրիկ, տանջանքները, դահիճները, սուր երկաթը, մարմինը՝ որ կ'աղաղակէ, արիւնը՝ որ կը հոսի, մահուան սոսկալի երկիւղը, ուսկից ֆրիստոս անգամ վախցաւ . . . :

— Եւ սակայն ֆրիստոս քեզի պէս տկար և մեղաւոր արարածին համար մեռաւ:

— Ո՛չ, անկարելի է. սաստիկ պիտի յուսահատիմ և տխրիմ . . . : Ո՞վ կ'արդեւս քեզ քու հաւատքդ հոգւոյդ խորը պահելէ . . . : Կ'աղտնի աղօթէ՛ . . . : Մէհէմմէտի և ժողովրդեան առջև Մարգարէին օրինաց հնազանդիլ կեղծէ՛ . . . :

— Թշուառակա՛ն, աղաղակեց Հեղինէ, թշուառակա՛ն, եկեր ինձ խորհուրդ կուտայ որ հաւատքս ուրանամ:

— Ներէ՛, ըսաւ Սականօս պէյին կինը, ինձ և Գէորդին. զթութիւն, մայրիկ . . . :

— Դուք սր զԱստուած մատնեցիք, այլ ևս զձեզ չեմ ճանչնար: Գացէ՛ք այս բանտէն՝ որ ձեր հայհոյանքներէն կը դուրայ և կը խռովի . . . ինքզինքնիս մահուան պատրաստելու շատ ժամանակ չունինք:

— Ո՛հ, սոսկալի՛ բան, յարեց Աննա դէպ ՚ի Դաթին կողմը նետուելով: Դուք, դուք, հայրիկ, մի՛ թողուք որ ձեր տղայքները սպաննուին, քանի որ մէկ խօսքով կրնան աղատուիլ: Թո՛ղ սուտ խօսին, բայց Մուլթանը գոհացունեն, որպէս զի մինչև վրէժխնդրութեան օ-

րըն ապրին:

— Աննա՛, խեղճ մողորեալ, տկարութիւնդ այն դաւուրն կաթիլն է՝ զոր Աստուած մահուանս բաժակին մէջ կը հեղու . . . : ՚ի բաց դնա՛, հեռացիր այս տեղէն, ըզքեզ նզովելու զօրութիւն չ'ունիմ . . . : Կը ներեմ քեզ՝ եթէ զղջարով դաս մեր մէջ խառնուիս, զքեզ յամառուրացեալ տեսած ատենս ուրիշ բան չ'եմ կրնար ընել, բայց եթէ մօրդ պէս քեզ ըսել. իբրև շիրիմ ցուրտ և իբրև տաճար նուիրական այս բանտը մի՛ խռովեր և հայհոյեր: Մէկդի դնա՛, կ'ըսեմ. բայց միանգամայն յիշէ՛ որ Աստուած քեզ վրէժխնդիր պիտի ըլլայ մատնութեանը համար. և Յուդայի խղճահարութիւնն և յուսահատութիւնը տիրէ հոգւոյդ մէջ. ես ապրիլ կուզեմ, կ'ըսես: Լա՛ւ, ամեն գիշեր քու եղբայրներդ արիւնաթաթաւ սրոյ տակ ինկած պիտի երազես . . . : Ամեն գիշեր մօրդ վերջին աղաղակն և իմ ա՛ վերջին խօսքս պիտի ըսես. դուք որ ուրացեալ էք, այլ ևս զձեզ չ'եմ ճանչնար . . . :

Գէորդ ՚ի ծունր իջեալ՝ դառնապէս կուլայր գլուխը ձեռաց մէջ բռնած:

— Ո՛հ, ըսաւ Գէորդ, համբոյր մը, ձեզնէ ո՞վ ինձ համբոյր մը պիտի տայ. ձեզնէ համբոյր կը մուրամ:

Իւր եղբարց ամենէն փոքրն իրեն ծռելով՝ ըսաւ.

— Աստուած ներէ՛ քեզ, Գէորդ, յերկինս իրմէ պիտի խնդրենք որ զղջաս և մեղի հետ միանաս:

Աննա խռովեալ բողբոլիքը նայեցաւ. տեսաւ որ իւր հայրն և մայրն իրարու ձեռք բռնած կուլային:

Աննա ինքզինք դատապարտեալ տեսաւ ոչ թէ իր ծնողքէն, այլ ինքնիրմէն: Վայրկեան մ'ուզեց որ ծնողացը ոտքն իյնարով գոչէ. «Իս ալ ձեզի հետ պիտի մարտիրոսանամ»: Բայց վատութեամբ բերանը գոցեց. Գէորդին ձեռքէն բռնեց, և խաւարտչին բանտէն դուրս ելած միջոցին յուսահատական ձայնով ըսաւ.

— Ողջամբ կացէ՛ք:

— Դաւիթ, որդեակք իմ, ըսաւ Հեղինէ, փորձանք ներէն ամենէն մեծին դիմացաք. մնացածներն ասոր քով բան մ'ըսել չ'են:

Դատապարտելոց սրտին մէջ հանդարտութիւնը տիրեց. երկնային խաղաղութիւնն իջաւ անոնց վրայ, եւ երբ լուսնն ոտից ձայները լսուեցան, մահն արհամարհեցին:

Հեղինէ իւր բազուկները տարածեց և առանց ձայն հանելու իշխանները քովը քաշեց. յետոյ Դաւիթէն առաջ անցնելով՝ իւր փոքրիկ տղայոց ձեռքէն բռնած մեծերն ալ ետեւէն, բանտին նեղ անցքերէն անցաւ, մըթին սանդուղքներէն մագլցի ելաւ և մինչև պալատին դաւիթն եկաւ, ուր Սուլթանը նստած էր՝ եէնիչերինէրէն շուրջ պատեալ:

Աչուր կամարներուն տակ պատի պէս շարուած էին: Մհեղ լուսութիւն կը տիրէր այս բազմութեան մէջ: Միայն սահանքի մը կարկաջն և թռչնոյ մը գեղգեղանքը կը լսուէին:

Սուլթանը նշան ընելով Դաւիթը ցցուց:

Կայսրը Հեղինէի ձեռքը սեղմելով ըսաւ.

— Դարձեալ զիրար պիտի տեսնենք յերկինս:

Աներկիւղ յառաջ մատեաւ, այն լուսնի քով հասնելով՝ որ մերկացեալ սուր մը բռնած էր ձեռքը, ըսաւ.

— Չա'րկ, բռնաւոր. մահուամբս պիտի կենդանանամ:

Հեղինէ ծունկի վրայ եկաւ. իւր որդիքը սակաւիկ մի գունաթափ քովն եկան շարուեցան:

Մէհէմմէտ զոհին ընտրութեան մէջ վարանելու ձեռնեց. ցածէն եէնիչերեաց աղային հետ խօսեցաւ, սա ալ խօսոյն հեռացաւ և աներևոյթ եղաւ. յետոյ հաղիւ եօթը տարեկան տղայ մ'առնելով եկաւ, որ սարսափած կուլայր և կը ճչէր:

Ալեքսիս հինգերորդն էր այս տղայն, Դաւիթ կո-

մնենոսի եղբորորդին:

Դահիճը ՂԱԼԵՔՍԻԱ բազկացը վրայ բռնելով՝ դաշոյնըն անոր կուրծքը խօթեց. յետոյ իր ծխաշունչ և արիւնաներկ սուրը հանելով՝ երիտասարդ կայսերազն իշխանաց վրայ նայեցաւ:

Անդրանիկը յառաջեց, որոյ գեղեցիկ ճակատն աստուածային քաղցր ճառագայթիւք կը վայլէր: Իւր եղբարց վրայ նայելով՝ նոցա եղբայրական ժպիտ մը ցոյց տուաւ. յետոյ ձեռքը վեր վերցունելով՝ երկինքը ցըցուց. դահիճը զայն իր դռուղ մագերէն բռնելով՝ վայլուն օրով օդոյն մէջ բողբոջակ մը ձեացոյց և անմիջապէս տղային մարմինը գետին ինկաւ:

— Ինձ ալ, ըսաւ Հեղինէի երկրորդ որդին:

Ձեռքերը օրաին վրայ դնելով լուսնն քոյն եկաւ. Սուլթանին մտենալով՝ զօրաւոր ձայնով ըսաւ.

— Տե՛ս, բռնաւոր, թէ ի՛նչպէս կը մեռնին Գրիստոսի որդիքը:

Հաղիւ թէ այս խօսքերն արտասանեց և ահա՛ իւր եղբոր դիակին վրայ թաւալեցաւ:

Հեղինէ արիւնաթաթաւ զոհը կը դիտէր: Իւր այնչափ գորովով և սիրով մեծցուցած որդիքը՝ որք էր վառքն և ուրախութիւնն էին, իւր աչաց առջև անխնայ կը խողովողուէին:

— Կի՛ն, ըսաւ Մէհէմմէտ, գոնէ ատոնք ազատէ:

— Օ՛ն, յառաջ մատիր, ըսաւ Հեղինէ, իւր երրորդ որդւոյն, կ'օրհնեմ զքեզ և Աստուած յերկնից զքեզ կը կոչէ:

Պատանեակը տանջանաց տեղին երթալու յամանակ չունեցաւ. կատաղի և անագորոյն դահիճը զայն բռնեց և երկու անգամ սուրն իջեցնելով՝ խեղճ տղայն երկուքի ճեղքեց:

Միւս երեք եղբայրներն ալ ձեռք ձեռքի տուած յառաջ եկան:

Միոյն գլուխն իբրև ծաղիկ հնձուեցաւ, միւսը գե-

տին փռուելով զոհուեցաւ, վերջնոյն վիզն ալ կտրուեցաւ :

Հեղինէ ծունկի վրայ եկած էր. բազուկները դէպ յերկինս բարձրացուցած՝ կուղէր մարտիրոսաց միանալ որք իրեն կ'սպասէին :

Միայն մէկ տղայն մնացած էր, մէկ հատիկը, ամենէն փոքրն և ամենէն դեղեցիկը :

Մէհէմմէտ դարձեալ ձայնը բարձրացնելով՝ ըսաւ .

— Կի՛ն, մեծ դահիճը դու ես. եթէ կատաղի քաջասրտութեամբ տղայոցդ մի ըստ միօջէ անկենդան գետին իյնալը տեսար, զո՛նէ այդ տղան ազատէ՛, որ կը զարհուրի մահուանէ .

Յիրաւի, տղայն արիւնն և դիակները տեսնելով և քրիստոնէութեան գաղափարն իւր եղբարց չափ չ'հասկնալով՝ պուռաց երբ դահճին իւր քով դալը տեսաւ, և մօրը դրկաց մէջ նետուեցաւ :

Հեղինէ սիրով զայն իւր դրկացը վրայ սեղմեց, նորա մազերն և արասուալից երեսը համբուրեց. վերջը լալով ըսաւ .

— Ո՛վ իմ ամենասիրելիս, գրկացս վրայ պիտի քնանաս . . . մէկտեղ պիտի մեռնինք, և այլ ևս մահուանէ պիտի չ'վախնաս .

Տղայն ժպտեցաւ, բազուկները Հեղինէի վզին պատատեց. յետոյ աչքերը փակելով դուրսը մայրական ուսին վրայէն կախեց :

Այն ատեն Հեղինէ զուակը կուրծքին վրայ սեղմած դէպ առ դահիճը զալով՝ ըսաւ .

— Եթէ սիրտ ունեցող մարդ ես, նախ ինձ զա՛րկ, որպէս զի ասոր մեռնիլը չ'տեսնեմ :

— Ո՛չ, առաջ տղայն սպաննէ՛, ըսաւ Մէհէմմէտ :

Սուրն իսկոյն տղային գլխուն վրայ իջաւ :

— Կարգն իմն է, աղաղակեց կայսրուհին, որ իւր տղուն դիակն իւր դողդոջուն բազկացը մէջ տեսնելով՝ կ'սպասէր իւր սիրելի որդւոց նահատակութեան

փառքին ինքն ալ արժանանալ :

Մէհէմմէտ ոտքի վրայ ելնելով՝ ըսաւ .

— Հեղինէի կեանքը կը շնորհեմ :

Կայսրուհին ծունկի գալով ըսաւ .

— Զիս ալ չարչարէ՛ և մեռցուր, սիրածներս ինձ մէկ կողղեցիր, ես ինքնին կ'ուզեմ և կը փափաքիմ իսկ անոնց ետեւէն երթալ և հետերնին միանալ .

— Զքեզ մեռցունելով պակաս վրէժխնդրութիւն ըրած պիտի ըլլամ, պատասխանեց Մէհէմմէտ :

Սուրմանը բազմութեան կողմը դառնալով՝ յարեց .

— Այս դիակներն՝ Այա—Ստեֆանոյի ծովեզրը նետեցէ՛ք. մահուամբ պիտի պատժուին որոնք որ զասունք պատուով լծաղել ուզեն .

Գ Լ Ո Խ Խ ժԱ:

ԱՅԱ—ՍՏԵՖԱՆՈՒ ԾՈՎԵՋՐԸ

Արեգակն 'ի մայր խոնարհեալ յամբ յամբ դէպ 'ի հորիզոն կ'իջնէր երկինքն և միանգամայն ծովը ծիրանեգոյն ներկելով . Վոսփորի ջուրերը կարմիր բոցերու կը նմանէին . կապուտակ երկնից արծաթափայլ դաշտին երեսն ալ մեծ և լուսաճաճանչ գիծեր կ'երևէին . Բիւղանդինի պարտէզներն ամբարձուղէշ ծառոց ձգած ստուերներէն հովանացեալ շքեղաշուք տեսիլ մը կը ներկայացունէին . հեղասահ վտակաց կարկաջներ՝ երվնաղարդ թռչնոց սիրային դայլայիկներուն հետ միացած՝ զմայլելի ներդաշնակութիւն մը կը կազմէին . ցողափայլ վարդենին և հոս հոն տնկուած երվին երվին ծաղիկներ՝ անոյշ հոտերնին երեկոյեան քաղցրաշունչ զեփեռին հետ կը խառնէին , մինչդեռ պալատներուն գմբէթներն և մզկիթաց սրածայր աշտարակները տակաւին 'ի մուտս խոնարհեալ արեգական շքեղութիւնն և պայծառութիւնը կը ցուցնէին վրայնին . Վոսփորի ալեաց վրայ գեղեցիկ նաւակներ և անշուշտ կիներով լեցուն խորհրդաւոր մակոյկներ կը ճօճէին . այո՛ , խորհրդաւոր, որովհետև մերթ ընդ մերթ անոնց մէջէն տխրական երգոց աղիողորմ ձայներ կը լսուէին :

Այա—Ստեֆանոյի ծովեզրը՝ բարակ աւազով ծածկուած արծաթի պէս կը փայլէր . ալիքներն ալ շարունակ եզերքը կը բախէին :

պայծառութիւնն աղաեղող տեղէ մը , ուր զարհուրելի և այլանդակ շեղջեր կը տեսնուէին մարդկային կերպարանաց և զգեստուց , զորոնք ճանջալն և որոշելն անկարելի կը թուէր . սակայն այն շեղջերը յանկարծ մարդուս հոգին սոսկմամբ և ահուդողով կը լեցունէին՝ նըման ճիւղներու և ուրուականներու պատճառած սոսկման :

Իսկոյն կենդանի արարած մ'եկաւ ծովեզրը , աւելի կը գայթէր քան կը քայլէր , գլուխը կուրծքին վերայ խոնարհեցուցած և բաղուկներն ալ կախ թողած էր : Այս արարածին հագած ցնցուտի զգեստը հագիւ հաղիւր մերկ և արիւնոտ ոտքերը կը ծածկէր , որոց վրայի վէրքերն այրիչ աւաղէն կ'ղկծէին : Ուղղակի արծաթափայլ աւաղին գեղեցկութիւնն աղարատը մթին տեղը կ'երթայր . այն տեղ հասածին պէս 'ի ծուներ իջու և իր երեսը ձեռացը մէջ ծածկեց . բաւական ատեն լսուցաւ , յետոյ արտասուքները սրբելով՝ իւր գողգոջուն բաղուկները տարածեց և սկսաւ առջևը դիզուած գիւակները կանգնել :

Այս կինը Հեղինէ կանգակուզենոս էր , Տրապիզոնի վերջին կայսեր , Դաւիթ Կոմնենոսի , սյրին :

Սոյն այրիացեալ քրիստոնեայ մայրը կարծեց՝ թէ իր միտքը դրածն ընելու զօրութիւն պիտի չ'ունենայ : Մերթ կանգ կ'առնոյր համբուրելու համար այն մանկան գլուխը՝ որուն մօտեցած ատեն կը սարսափէր , համբուրելու համար այն ձեռքը՝ որմէ երբեմն գորովանք և գգուանք ընդունած էր :

Հեղինէ խելքէ մտքէ վեր զգուշութիւններով՝ որպէս թէ այս սիրելի մեռելոց անդամները տակաւին կը շարճարուին , դանոնք կամացուկ կամացուկ աւաղին վերայ զետեղեց՝ իրարմէ քիչ հեռաւորութեամբ . Հեղինէի հոգւոյն սիրելի հատորներն ամենքն ալ հոն կը գտնուէին , որք էին Դաւիթ և իր վեց օրգիւրը : Հեղինէ դեռ նոր լմնցուցած էր այս առաջին աշ-

խատութիւնը երբ համր ձայն մը լսուեցաւ . կայսրուհին
գլուխը վեր վերցունելով՝ նայեցաւ և տեսաւ որ երկ-
նից ամեն կողմերէն անգղներ թւեանին տարածած օդը
կը բախէին , իրարու կը մօտենային և մէկտեղ դալով
Այա—Ստեֆանոյի ծովեզրին կողմը կ'ուզղէին :

— Այս ի՞նչ շուտ , ի՞նչ շուտ , աղաղակեց Հեղինէ :
Վոսփորի անգղներն էին , որոնք փնտուել կուգային
այն որոր՝ զոր գրեթէ ամեն օր Մէհէմմէտ Բ. ի դահի-
ճըն իրենց առջև կը նետէր :

Հեղինէ՛ վախնալով՝ որ այս սիրելի մնացորդները կը
պղծուին՝ քիչ մը զօրացաւ . կարելի եղածին չափ շու-
տով թաղել պէտք էր զանոնք :

Սուլթանին սպառնալիքը չյիշեց , կամ եթէ յիշեց
ալ՝ ուրախացաւ , որպէս զի յուսահատութեանը մէջ աղա-
չանքով պաղատանքով չընդունած բանը , այսինքն , մա-
հը , այս կերպով կարենայ ընդունիլ :

Հեղինէ բոլորտիքը նայեցաւ որպէս թէ տեղէ մը
օգնութիւն գտնելու համար . մինակ էր , բոլորովին մի-
նակ . եօթն անգամ գերեզման պիտի փորէր , սակայն
գործիք բնաւ չ'ունէր :

Կայսրուհին իւր աջակողմը փոփոկ տուն մը տեսնե-
լով՝ անոր կողմը վազեց :

Սակայն ի՞նչ գթութիւն և մարդասիրութիւն կրնար
յուսալ :

Իւրաքանչիւր ոք Մէհէմմէտի հրամանները չ'է՞ր գի-
տեր , նաև չ'է՞ր գիտէր ալ՝ թէ ո՞վ որ այն հրամանները
չ'պահէր , պատիժն էր մահ : Հեղինէ դէպ ՚ի խրճթին
կողմը դնաց . այրիչ աւաղին վրայէն վազել կ'ուզէր ,
սակայն ոտքերը մէջը կ'ընկղմէին . ծունկերը կթուցեալ
ըլլալուն համար՝ կ'իյնար կ'եղնէր և նորէն կը քալէր :
Բայց վերջապէս , հատկեալ և գողցես բոլորովին շըն-
չասպառ տնեկին դրան առջև հասաւ . աչքերը կը բա-
ցուէին կը փակուէին . սոսկալի բզղիւններ ականջները կը
լեցունէին և ուզեղը կը խռովէին . կը վախնար՝ որ կը

մեռնի :

— Ստուա՛ծ , ըսաւ ոտքի վրայ ելնելով , գործս
լննցնելու ժամանակ տո՛ւր ինձ . և ապա ապա ,
օրենեա՛լ ըլլայ կամբդ , եթէ զիս այս աշխարհէն հան-
դերձեալը կոչես :

Դողդոջուն ձեռօք տանը դուռը բախեց . դեռա-
հասակ կին մը բազկացը վրայ ծիծաղերես փոքրիկ տը-
ղայ մը բռնած , եկաւ դուռը բացաւ :

Հեղինէ մանուկը տեսածին պէս յուսահատական ա-
ղաղակ մը հանեց :

— Ի՞նչ կուզես , հարցուց մանկամարդ կինը մատով
անմեղին կարմիր շրթունքը շոյելով :

Հեղինէ՛ ծիւրեալ և ծնդեալ , պատասխանելու զօ-
րութիւն չ'ունէր . համր և անշարժ մնաց , աչքերը մե-
ծաբաց կը հայէր առանց երբէք բան մը տեսնելու :

Դուռը բացուած ատեն վարդերով լեցուն պարտեղ
մը կ'երևէր , ո՛չ թէ մացառներու , այլ խոշոր վարդե-
նիներու դաշտ մը , որոց անոյշ հոտերը սիւքերուն՝ հետ
խառնուելով՝ զմայելի տեսարան մը կ'ընծայէին :

Մանկամարդ կինը կարծելով՝ որ Հեղինէ գետին պի-
տի անկանի տկարութենէն՝ գնաց անմիջապէս վայրի պըտ-
ղոց հիւթերէն մզուած անուշահոտ հեղուկներով լեցուն
բաժակ մ'ը կարկանդակ մը բերաւ :

Հեղինէ այս կերակուրները չ'ընդունելով ըսաւ .

— Հող փորելու համար բահ մը կամ ուրիշ գործիք
մը :

— Հող փորե՛լ , կրկնեց նորատի կինը , ծա՛ռ տնկել
կ'ուզես . էրիկս պարտիզպան է :

— Աւա՛ղ , ըսաւ Հեղինէ , միայն մէկ դիւթաղ պէտք
է ինձ :

— Դիւթա՛ղ մը , ըսածդ գիտե՞ս : Այա—Ստեֆանո
անգղներն են՝ որ դիւթները կ'ուտեն :

— Ինձ մտիկ բրէ՛ , յարեց Հեղինէ , իւր դողդոջուն
ձեռքերը դեռահասակ կնոջ երկնցունելով , դիւթա՛ և

ինձ մտիկ ըրէ՛ , կ'աղաչեմ գրեղ . . . : Քու ամուսինդ կենդանի է , իսկ իմն մեռած Ս,յս երեկոյ կե- նացդ ընկերն ուրախ զուարթ տուն կուգայ , բայց իմն գերեզմանի կ'սպասէ . . . Որդիդ գրկացդ մէջ կը ժըպ- տի , սակայն իմ վեց տղայքներս մեռած են :

— Մարգարէին վրայ երդուընցիր , աղաղակեց կի- նը , ո՛վ ես դու :

— Այրի մը , կայսրուհի մը , մայր մը . . . :

— Տրապիզոնի կայսրուհի՞ն , հարցուց պարտիզպա- նուհին յետս նահանջելով :

— Այո՛ , այո՛ , լաւ նայէ . կանեփէ լաթ հագած է , մաղերը ցիր եւ ցան , աչքերն արտասուօք լեցուած անցեալէն բան մը պահած չէ . ապագայէն ալ միայն դերեզման պատրաստելու իրաւունքը կը յուսայ :

Մանկամարդ կինը վշտացած և միանգամայն սարսա- փած աչքերը Հեղինէի վրայ յառեց :

— Գիտե՞ս որ կեանքդ կը վտանգւես , ըսաւ պար- տիզպանուհին :

— Կը յուսամ՝ թէ Աստուած զիս կը մեռցունէ :

— Էրբիկս պիտի չ'թողու որ ուղածդ տամ :

— Ժպտող մանուկդ դժու թիւն կ'ուսուցանէ քեզ :

— Դու աղբու թիւն ըրեր ես Սուլթանին դէմ :

— Ի՞նչ կ'ընէիր դու , եթէ Սուլթանը քու ամենէն փոքրիկ զաւակդ գրկէդ , յափշտակէր :

Պարտիզպանուհին պարտիզին և տանը դրանց մէջ տեղ գտնուած անկիւնը գնաց և վերստին Հեղինէի քով զալով ըսաւ .

— Ա՛ռ , Աստուած զիս վշտակցութեանս համար չը պատժէր :

Կայսրուհին բահ մը տեսաւ , առնելով զայն մանկա- մարդ կնոջ ձեռքը համբուրեց . յետոյ վարդանոցին ցան- կէն դուրս ելնելով ծովեզրը թողած դիակներուն կողմն ուղղեցաւ :

Դիակներուն մօտենալով վրայնին անդինբրու բազ-

մութիւն մը տեսաւ :

Հեղինէ բահով զանոնք վանելով սկսաւ աւաղը փո- ըրել , Բաւական խորութեամբ փսս մը բացաւ , Դաւթի դիակը մէջը զետեղեց և վրան աւաղ լեցուց . Տրապի- զոնի վերջին կայսեր գերեզմանն ափ մ'աւաղ եղաւ :

Անդինբրը դիակներու և արեան հոտ առնելով միշտ կ'իջնէին . հազիւ թէ Հեղինէ բահն աւաղին մէջ կը խօ- թէր , անմիջապէս նորէն կը հանէր գիշակներնբը վա- նելու համար . Սոսկալի՛ , դժնդա՛կ և անօրինա՛կ կու- Հեղինէ թողած էր՝ որ դահիճն իր տղայքները նահա- տակէ , սակայն չ'էր ուղեր՝ որ պիղծ հրէշներն անոնց մարմիններուն մնացորդներն ապականեն : Անդիմադրե- լի քաջութեամբ անդինբրուն դէմ կը կուռէր . այլ ևս ո՛չ վիշտ և ո՛չ իսկ յողմութիւն կ'զգար :

Մարմիններէն մին թաղելուն պէս ուրիշ նոր փոս մը բանալու կ'սկսէր . մէն մի գերեզման փորած ատեն իր ղօրութեանց մէկ մասն ալ կ'սպասէր . որչափ դողդո- ջուն ձեռօք բահը բռնելով փորել կը ջանայր , այնչափ ալ անդինբրը վրան կ'իջնէին և երկայն թեւերովսին կայս- րուհւոյն ճակատն և ուսը կը բախէին . դիակաց վրայ խոյանալով՝ զանոնք իրենց մագիլներով կը ճանկէին և նոցա անշարժ բիբերը կը հանէին :

Գիշերը վրայ հասաւ . Հեղինէ իւր դժնդակ գործն յառաջ կը տանէր , սև անդինբրը հազիւ կ'երևէին թան- ձըր մթութեան մէջ : Հրէշները զիրար սուր ձայներով կը կանչէին . կայսրուհւոյն բոլորափքը ժողովուած միշտ թեւերնին կը բախէին և կը զարհուրեցնէին թշուառ կի- նը . մի քանի անդինբր գետին ինկած էին , Հեղինէ բահին սուր կողմնիս անոնց զարկած ըլլալուն համար , և կոմ- նենտսեանց գերեզմաններուն վրայ կ'երերէին հազիւ սև թեւերնին շարժելով . . . :

Վերջապէս Հեղինէ բահին բունին վրայ կռթնեցաւ , որովհետև այլ ևս գործը շարունակելու ղօրութիւն չ'էր մնացած վրան , արուանունքները փակուեցան , բահը

ձեռքէն ինկաւ . ինքն ալ դետին ինկաւ և իւր վերջին որդւոյն քով թաւալեցաւ :

Չ'կրնալով այլ ևս բահը բռնել , սկսաւ ձեռքով աւազը մէկ կողմ տանիլ . եօթներորդ գերեզմանն եղունգն երովը փորեց .

Կայսրուհին իր բոլոր ունեցած չ'ունեցած ուժը վրան ժողվելով փոքրիկ դիակը փոսին մէջ գլտորեց եւ ծածկեց . ինքն ալ գերեզմանին վրայ տարածուած մընաց . վշտաց յաւիտենից անշարժ արձան .

Ութ գերեզման փորող ձեռքերն աղօթելու համար իրար միանալու զօրութիւն չ'ունէին . այն ձայնը՝ որ տըղայքներն և իրենց հայրը մարտիրոսութեան յորդորած էր , այս աշխարհի մէջ այլ ևս պիտի չ'հնչէր :

Հեղինէ կանգալուղենոս իւր դիւցազնական հողին առ Աստուած պիտի աւանդէր :

Բազուկները խաչաձև բռնած , երեսը յերկինս 'ի վեր դարձուցած , աւաղին վրայ այնպէս կը մնար . վեհանձն 'ի ժամ մահու , ինչպէս որ էր կենդանութեանը :

Անգղներն այլ ևս վախնալու բան չ'ունէին , միայն մէկ որս կը մնայր իրենց .

.....

Վոսփորի վրայ յաղթանդամ մարդ մը նաւակ մը կը թուցունէր , յորում մէկ այր և մէկ կին կը գտնուէին . երբ նաւակին առաջոյ կողմը ծովեզրին դպաւ , մանկա մարդ կինն իր ուսն ընկերին երկնցուց , որ անշուշտ նոր վէրք ունենալով՝ դժուարաւ կը քալէր :

— Կուրկան , ըսաւ դեռահասակ աղջիկը , նաւակը թո՛ղ և ետևնէս եկո՛ւ :

Թիավարն ոտքի վրայ ելնելով , թիերը վար դրաւ և իր տէրերուն ետևէն գնաց :

— Էշէրիֆ , ըսաւ դեռահասակ աղջիկը , գերեզմանները համբէ՛ . . . բոլոր կոմսենոսեանք հոս են . . . Հեղինէ արհամարհեց այն վճիռը՝ որ կ'արդելոյր զա-

նոնք թաղելէ . մեք իսկ անոր պէս արիանանք , և քըրիստոնէական հաւատոյ առ այս դիւցազնուհին ունեցած բարեպաշտական պարտքերնիս կատարենք :

— Աղօթէ՛ , Բանայիա՛ , աղօթէ՛ այս դիւցազնուհւոյն համար . ես ալ քեզ վշտակից կ'ըլլամ :

Մէկ ժամ վերջը Հեղինէ կայսրուհին յաւիտենական քնով կը ննջէր իրեններուն քով :

— Բանայիա՛ , ո՛ւր կ'ուղես որ երթաս , հարցուց Էշէրիֆ :

Մանկամարդ աղջիկն երեսն իշխանին դարձունելով պատասխանեց .

— Ո՛ւր որ երթաս , ես ալ պիտի դամ :

— Թագաւորութիւնը կորսնցուցած և 'ի հայրենեաց տարագիր իշխանի կին ըլլալ կ'ուղե՞ս :


— Այո՛ , պատասխանեց Բանայիա :


— Ուրեմն , ըսաւ Էշէրիֆ Կուրկանին դառնալով , շուտով թիավարէ՛ և զմեզ երկուքնիս ալ մեր ընդարձակ անապատը տա՛ր :

Վ Ե Ր Ձ

Յ Ա Ն Կ

ԳԼՈՒԽ Ա.	Որս բաղէից	Երես	4
»	Բ. Բանայիա	»	18
»	Գ. Հսկահասակ կուրկանը	»	29
»	Դ. Կրկին պատգամաւորութիւն	»	38
»	Ե. Մէհէմէտի պարտը	»	48
»	Զ. Յաղթականին լուծը	»	57
»	Է. Սէրէտի աքսորեալները	»	70
»	Ը. Գուսանը	»	83
»	Թ. Նաւակը	»	94
»	Ժ. Քրիստոնեայ Նիօրէն	»	102
»	ԺԱ. Այա - Ստեփանոյի ծովերը	»	124







2355

2013

